ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-12 (1706) Դեկտեմբեր 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Հրաժարվել կամ հաստատել գոյության իրավունքը (էջ 1-2)

2 - Տարածաշրջանային

Վահե Դավթյան
ՀԷՑ-ի «Ոդիսականը». աշխարհաքաղաքական չափում (3-5)

Սարգիս Սարգսյան
Արևմտյան, թուրքական, ռուսական, արաբական լրատվամիջոցները «Թրամփի երթուղու» մասին (6-9)

3 - Աշխարհաքաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ-ն Հարավային Կովկասում և ի՞նչ կապ ունեն Հայաստանի հետ Աբրահամյան համաձայնագրերը (էջ 10-13)

Արամ Շահնազարյան
2025 թվականը՝ Իրանի հեռանկարային վերակազմավորման և ինքնիշխանության ռազմավարական ամրապնդման տարի (էջ 14-21)

Շահան Գանտահարեան
Միջին Արեւելեան իրադարձութիւնները՝ Լիբանանէն դիտուած (էջ 22-25)

4 - Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
Շանհայի համագործակցության կազմակերպություն (էջ 26-29)

5 - Դեպքեր և դեմքեր

Համաստեղ
Հաւատաւորը (էջ 30-31)

6 - Դաշնակցական բեմ

Յակոբ Ճանպազեան
135-ամեայ երիտասարդ յեղափոխականը. հաւատքով դէպի պայծառ ապագայ (էջ 32-33)

7 - Երիտասարդական

«Նիկոլ Աղբալյան» Ուսանողական միության վարչություն
35 տարի գաղափարի շուրջ: Աղբալյանականության ճանապարհը, պայքարը և նոր սերնդի հավատամքը (էջ 34-35)

8 - Ընթերցումներ

Սիմոն Հասըրճյան
«Արձագանգ»ի էջերից (էջ 36-39)

9 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Երբ կը խօսինք արժէքներու մասին (էջ 40)

10 - Հասարակություն

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Բարութեամբ, վայրագութեամբ թէ՞ մասամբ նորին... (էջ 41-44)

Հրաժարվել կամ հաստատել գոյության իրավունքը

Հայաստանը յոթ ու կես տարի կառավարող իշխանության արտաքին ու ներքին քայլերը, «վերակողմնորոշումները» եթե գնահատենք ըստ կոնկրետ իրողությունների, կհայտնվենք այն հանդիսականի դերում, ով մոտից դիտելով կտավը տեսնում է նրա մանրամասները, բայց ոչ ամբողջական պատկերը: Իսկ ամբողջության մեջ դիտարկելով՝ ցավով տեսնում ենք, որ Հայաստանը հայտնվել է ոչ միայն տարածաշրջանային և աշխարհաքաղաքական փոթորիկների մեջ, այլև համաշխարհային նոր աշխարհակարգի ձևավորման տեսանելի տեղաշարժերի ճեղքած գծի վրա: Կարելի էր մտածել, թե այս ամենը տեղի է ունեցել փողոցից երկրի ղեկին հայտնված քաղաքական, վարչական և այլ փորձառություններից զուրկ, սակայն ինքնագոհ ու ինքնավստահ երիտասարդների անփորձության պատճառով, եթե ի սկզբանե որդեգրած նրանց գործողությունների մեջ չդրսևորվեին ռազմավարության միտող հետևողական գործողությունները: Եվս մեկ անգամ արձանագրելու համար, թե շախմատային մեծ խաղի մեջ ինչ դիրքում ենք հիմա գտնվում, կարճ անդրադառնանք համընդհանուր իրավիճակի ձևավորման ընթացքին:

Խորհրդային Միության և, նրա հետ, կոմունիստական ողջ ճամբարի փլուզմամբ վերջ գտավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված երկբևեռ աշխարհակարգը: Փլուզված բևեռի հեգեմոն Ռուսաստանը կարծելով, թե Արևմուտքն ըստ արժանվույն գնահատելով կոմունիստական ամբողջատիրական համակարգից և նրա գաղափարախոսությունից հրաժարումը, իրեն գրկաբաց ընդունելու է ժողովրդավարության ու արդարության օրրանում գնաց մեծ զիջումների, հասցնելով պետությունը խարխլման շեմին: Իրականում հակառակորդ կողմը տեղի ունեցածը բնորոշում էր որպես կես դար ձգված սառը պատերազմի արդյունքում տարած մեծ հաղթանակ և անգլոսաքսոնական իր հավակնոտությամբ երազում էր Ռուսաստանի, որպես պոտենցիալ մրցակցի, վերջնական ջախջախումը, երկրի մասնատումը, նրա բնական հարստությունների տիրապետումը և պետության մասնատված բեկորները քաղաքական կախման մեջ գցելը: Խորհրդային Միության վերջին առաջնորդին բանավոր տրված խոստումներով խաբելով՝ ՆԱՏՕ-ն շարունակեց իր հաղթարշավը՝ նվաճելով Արևելյան Եվրոպայի նախկին համայնավարական երկրները: Մտնելով Ուկրաինա՝ նա տիրացավ դարավոր կայսրության պատմական մեկ հատվածին և ընդհուպ մոտեցավ այսօրվա Ռուսաստանի սահմաններին: Այս պատմական հաջողությամբ խանդավառված՝ Արևմուտքը մեծ նշանակություն չտվեց Ռուսաստանում հարբեցող Ելցինին նախկին հետախույզ Պուտինով փոխարինելու աննշան թվացող իրադարձությանը: Մոտ մեկուկես տասնամյակի ընթացքում նոր ղեկավարին հաջողվեց

բնում խեղդել անջատողական գործընթացները, ամրապնդել երկրի միասնականությունը, ոտքի հանել բանակն ու տնտեսությունը և հակադարձել Նապոլեոնից ու Հիտլերից հետո Արևմուտքի ձեռնարկած նոր հաղթարշավին: Պայթեց նոր պատերազմը, որի ժամանակ Արևմտյան նոր կոալիցիայի պաշտոնապես պատերազմի մեջ մտնելուն խանգարեց, թերևս, կես դար աշխարհը մեծ պատերազմներից զերծ պահած «Միջուկային զսպման» ստատուս քվոն: Նպատակադրելով զսպել Ուկրաինական ճակատում արևմտյան դիրքերը վերականգնելու Ռուսաստանի հավակնությունը՝ Արևմուտքը ոչ միայն ամբողջական օգնություն ցուցաբերեց Ուկրաինային, այլև փորձեց ենթարկել Ռուսաստանին քաղաքական և տնտեսական շրջափակման և անհաղթահարելի պատժամիջոցների: Որքան էլ որ անհիրատեսական թվար 18 երկրի հետ ցամաքային ու ծովային սահմաններ ունեցող, բնական հսկայական պաշարներ և ահռելի տարածք ունեցող երկրի մեկուսացումը, Արևմուտքը հաշվարկում էր, որ ռազմադաշտում խոշոր պարտությունները, տնտեսական մեծ անկումը տևական ժամանակում կմաշեցնեն Ռուսաստանին, կնետեն քաղաքական նոր ցնցումների ու հեղաշրջումների գիրկը: Ռուսաստանի նոր ղեկավարությունը, թերևս, ի սկզբանե նախապատրաստվելով աշխարհաքաղաքական այս անխուսափելի բախմանը և առավել սթափ ու խորքային կերպով գնահատելով համաշխարհային քաղաքական քարտեզի կրած ներքին փոփոխությունները, ձեռնամուխ էր եղել Արևմուտքի հինգհարյուրամյա համաշխարհային գերակայությունը համաշխարհային նոր առանցքով փոխարինելու գործին: Ոչ առանց ԱՄՆ-Արևմուտքի ապաշնորհ քաղաքականության ընձեռած աջակցության, անվտանգության բնագդով առաջնորդվելով, Հեռավորարևելյան Ասիայում սկսեցին ձևավորվել համաշխարհային նոր քաղաքական, տնտեսական առանցք դառնալուն հավակնող Շանհայի համագործակցության երկրների և մա-

նավանդ արտատարածաշրջանային ավելի լայն ընդգրկում ունեցող ԲՐԻԿՍ-ի երկրների դաշինքները: Արևելքի ու Արևմուտքի բախումը, ըստ էության, վերածվեց աշխարհի միաբևեռությունը հաղթահարելու և բազմաբևեռ աշխարհակարգի հիմքերը ձևավորելու նոր մրցակցության: Դիմակայությունը հասավ այն մակարդակին, որ Ուկրաինական իրադարձությունների խորապատկերին ընդունելի դարձան հավանական միջուկային պատերազմի մասին խոսակցությունները: Ահա այս լարվածության գագաթնակետի հասնելու պատմական պահին տեղի ունեցավ ԱՄՆ-ում նախագահի փոփոխությունը: Գերտերության նոր առաջնորդը, թվում է՝ իրատեսորեն գնահատեց աշխարհում ձևավորվող նոր իրողությունները, տաք պատերազմի Ուկրաինական ճակատում Ռուսաստանի հաղթանակի անխուսափելիությունը, և հրաժարվեց Ուկրաինայի պատերազմը սեփական կռիվը համարելու մտասևեռումից, զատվեց եվրոպական երկրներին համակած հակառուսական տենդից ու, ըստ այդմ, 2025 թվականի դեկտեմբերին հրապարակեց ԱՄՆ անվտանգության ռազմավարության նոր հայեցակարգը: Հաշվի առնելով թիվ մեկ մրցակից Չինաստանի հզորությունը Հեռավորարևելյան դաշինքների և նրանց գործակից միջին-մերձավոր արևելյան, աֆրիկյան, հարավամերիկյան երկրների զգալի տոկոսի քաղաքական նոր նախընտրությունները, ինչպես և Եվրոպայի քաղաքական և տնտեսական անկումը՝ ԱՄՆ-ը հակված է երեկվա հակառակորդների հետ քաղաքական ու տնտեսական գործակցության՝ դանդաղորեն համակերպվելով աշխարհի միաբևեռության ավարտի հետ միաժամանակ ձգտելով պահպանել համաշխարհային հեգեմոնի կարգավիճակը: Այստեղ կարելի է հիշել Ուկրաինական պատերազմի սկզբում Ամերիկյան քաղաքական մտքի հսկա Հենրի Քիսինջերի արտահայտած այն միտքը, որ պատմականորեն ռուսական ազդեցության գոտում գտնված Ուկրաինայի համար հակադրվելու փոխարեն ԱՄՆ-ն ավելի ճիշտ կաներ, եթե նստեր Ռուսաստանի հետ և որոշեր աշխարհի ճակատագիրը: Յալթայի կոնֆերանսի 80-ամյակի առիթով՝ 2025 թվականին, որոշ քաղաքագետներ խոսեցին այն մասին, որ համաշխարհային երեք գերտերությունների նորացված ղեկավար եռյակը օրինաչափորեն պետք է որոշի նոր հազարամյակում աշխարհի ապագան: Վերջերս տեղեկություններ տարածվեցին, որ այդ ապագայի ճանապարհն ուղենշողների հարցում ԱՄՆ նախագահը գործող Մեծ յոթյակը ցանկանում է փոխարինել ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան, Հնդկաստան, Ճապոնիա նոր հնգյակով:

Կեսհազարամյա գերիշխանության դիրքերը կորցնող Եվրոպայի այսօրվա լիբերալ-գլոբալիստ առաջնորդները, այնուամենայնիվ, չեն ցանկանում հաշտվել Ուկրաինայի պատերազմում իրենց կրած պարտության հետ: Կանգնած լինելով սեփական քաղաքական մշուշոտ ճակատագրի առջև՝ այդ առաջնորդները փորձում են Ռուսաստանի նկատմամբ ոնանշի հասնել Անդրկովկասում և Միջին Ասիայում: 2022 թ. Ղազախստանում բռնի ճանապարհով իշխանափոխություն իրականացնելու փորձերը ձախողվեցին և այժմ այդ տարածաշրջանում նրանք փորձում են իրենց նպատակներին հասնել փափուկ ուժի աստիճանական զարգացման ճանապարհով:

Պարագան այլ է Անդրկովկասում, որտեղ նրանց դաշնակիցն է Ադրբեջանը, սակայն եվրոպական վասալությունից խուսափելու կռիվ է տալիս Վրաստանի ազգային արժանապատիվ իշխանությունը: Այլ է պարագան Հայաստանում, որտեղ Արևմտյան և թուրքադրբեջանական դրածո իշխանությունը փլուզում է իր պետությունը, հանուն նրա, որ թուրքադրբեջանական բուռ ուժի ճնշմամբ Անդրկովկասից վերջնականորեն դուրս մղվի Ռուսաստանը, և Արևմուտքի անունից տարածաշրջանը վերահսկի հարևանների թշնամական տանդեմը: Գործընթացներն այստեղ ավելի քան բացահայտ են: Հայաստանի իշխանությունը գնում է պետական և ազգային ամենաարմատական զիջումների իր հովանավորներին համոզելու համար, որ հավատարիմ է մնում նրանց նպատակներին: Ավելին, քիթը խոթելով պատմականորեն դատապարտված արկածախնդրության մեջ Հայաստանի իշխանատենչ կառավարողները ձգտում են համոզել եվրոպական առաջնորդներին, թե Հայաստանը Ուկրաինայի նման պատերազմական ճակատ է Ռուսաստանի դեմ, և ստանալ եվրոպացիների ամբողջական ու անվերապահ աջակցությունն իշխանության պահպանման համար մղվող գալիք ընտրապայքարում: Եվրոպայի քաղաքական էլիտան, որը Հայաստանում տեղի ունեցող գործընթացների ժամանակ բացահայտեց իր իրական դեմքը, առանց քաշվելու խոստանում է միջամտել պետության ներքաղաքական փոփոխությունների գործընթացին և կոչ է անում այդ գործընթացներն իրականացնել նույնքան ապօրինի և խայտառակ օրինախախտումներով որպիսիք տեղի ունեցան, օրինակ Մոլդովայի վերջին երկու համապետական ընտրությունների ժամանակ:

Նկատի ունենալով համաշխարհային մեծ փոփոխությունները՝ տրամաբանական է թվում, որ Հայաստանը գտնվեր մեր պետության գոյությամբ և կայունությամբ շահագրգիռ մեծ տերությունների հետ դաշինքների մեջ, կարողանար աշխարհի հետ գործակցել իր հաղորդակցական և այլ առավելությունների համադրմամբ: Փոխարենը Հայաստանի քաղաքականապես ընկեցիկ իշխանությունը մտել է երկու հայատյաց թուրք ղեկավարների տակ ու չի ցանկանում այնտեղից դուրս գալ: Ամեն ինչ տրամաբանական է, երբ ակտը վերահսկում են բրիտանացիները: Իշխանությունը, որը պատմականորեն ձախողել ու վարկաբեկել է իրեն, փոխվել չի կարող, նա այլևս մեկ տեղ ունի հայտնվելու՝ պատմության աղբանոցը: Սպասվող ծանր ու ճակատագրական գործընթացի ելքը, այնուամենայնիվ, վճռելու է ժողովուրդը՝ հրաժարվելով կամ հաստատելով գոյության իր պատմական իրավունքը: ■

ՀԷՑ-ի «Ոդիսականը». աշխարհաքաղաքական չափում

Վահե Դավթյան
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Թեև Ստոկհոլմի արբիտրաժի վճիռը ենթակա է կատարման, ՀՀ կառավարությունը սահմանեց նոր իրավական պրակտիկա, որի ներքո ազգային օրենսդրությունը վեր է դասվում միջազգայինից, ինչը հակասում է իրավագիտության բազային սկզբունքներին:

ՀԷՑ-ի պետականացումը հակասում է նաև կառավարության կողմից 2022 թ. իրականացվող էլեկտրաէներգետիկ շուկայի ազատականացման քաղաքականությանը: Պետական մասնակցության կրճատումը, ոլորտի ապամենաշնորհացումը, անկախ թրեյդերների ինստիտուտի ձևավորումն ազատականացման առանցքային նպատակներ են, որոնք ՀԷՑ-ի պետականացման պայմաններում վերածվում են հռչակագրային դրույթների: Ավելին, նման քայլերը կարող են ընկալվել որպես ինստիտուցիոնալ անկայունության և իրավական անկանխատեսելիության ազդակ՝ արգելակելով ներդրումների ներգրավումն էներգետիկ հատվածում:

Միևնույն ժամանակ, ՀԷՑ-ի պետականացման գործընթացը տեղավորվում է ավելի լայն աշխարհաքաղաքական շրջանակների մեջ: Ավելի ու ավելի նկատելի է դառնում Հայաստանի ռազմավարական ենթակառուցվածքներից ռուսական կապիտալի համակարգային դուրսմղման հետևողական քաղաքականությունը: Ըստ լրատվամիջոցներում շրջանառվող տեղեկատվության՝ այդ հարցերը քննարկվել են դեռևս 2022 թ. սեպտեմբերին ԱՄՆ կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի Երևան կատարած այցի ընթացքում: Թեև նման ռազմավարական նպատակի նախանշաններն ի հայտ են եկել ավելի վաղ՝ 2019-2020 թթ., երբ քրեական վարույթներ նախաձեռնվեցին երկու առանցքային ռուսական ընկերությունների՝ «Գազպրոմ Արմենիա»-ի և «Հարավկովկասյան երկաթուղու» (ՀԿԵ) նկատմամբ: Այս միտումը շարունակվում է նաև այսօր՝ ուղեկցվելով տեղեկատվա-մանիպուլյատիվ գործիքակազմի կիրառմամբ: Մասնավորապես, 2025 թ. հունիսին իշխանամետ «Civic.am» կայքում հրապարակված նյութում՝ իբր կանխված «պետական հեղաշրջման» մասին խոսելիս, նշվում են նաև այդ ռուսական ընկերությունները՝ որպես զանգվածների մոբիլիզացիայի ենթադրյալ ռեսուրս: Նման է հասարակական-քաղաքական հարթակի նպատակային նախապատրաստման՝ նշված ընկերությունների հնարավոր պետականացման հարցը պետք եղած պահին օրակարգ բերելու համար: ՀԿԵ-ի դեպքում նման սցենարը տեխնիկապես համեմատաբար ավելի հեշտ է իրականացնել, քանի որ 2008 թվականից ի վեր իրա-

կանացվող կոնցեսիոն կառավարման շրջանակում «Ռուսական երկաթուղիներին» պատկանում է միայն շարժակազմը, մինչդեռ ենթակառուցվածքները մնում են Հայաստանի սեփականությունը: «Գազպրոմ Արմենիա»-ի՝ հանրապետության գազատրանսպորտային համակարգի սեփականատիրոջ պարագայում, նման մոտեցումը կարող է ուղեկցվել էներգետիկ անվտանգության բարձր ռիսկերով, ներառյալ բնական գազի մատակարարումների դիվերսիֆիկացման քաղաքական դիսկուրսի ակտիվացմամբ, այդ թվում՝ Ադրբեջանից «երկնագույն վառելիքի» ներկրման հեռանկարով՝ նպատակ, որը գործող իշխանություններն ամենևին էլ չեն թաքցնում: Ավելին, Երևանի ու Բաքվի միջև ընթացող բանակցություններն Ադրբեջանից նավթամթերքի ներկրման վերաբերյալ առավել քան տեղավորվում են այս տրամաբանության մեջ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԷՑ-ի պետականացումն անխուսափելիորեն կհանգեցնի սակագների աճի: 2018-ից ի վեր Հայաստանում էլեկտրաէներգիայի միջին սակագինը բարձրացել է 4,7 ՀՀ դրամով՝ այն դեպքում, երբ ՀԷՑ-ի եկամտաբերության մակարդակը մնացել է անփոփոխ: Սակայն խնդիրը սոսկ սակագնային դինամիկան չէ: Ցանցային ենթակառուցվածքի մասշտաբային արդիականացումը պահանջում է վարկային միջոցների ներգրավում, ինչը կհանգեցնի պետական պարտքի աճին: Այդ պարտքի սպասարկումն այլընտրանքային ֆինանսավոր-

ման աղբյուրների սահմանափակման պայմաններում հնարավոր կլինի միայն սակագների հետագա բարձրացման միջոցով: Դրա փորձը մենք արդեն ունենք. Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման համար պետբյուջեից տրամադրված վարկի սպասարկումն արտահայտվել է վերջնական սակագնում 2,5 ՀՀ դրամի չափով (ընդ որում, հարկ է նշել, որ ՀԷՑ-ի սեփականատեր «Տաշիր գրուպի» կողմից իրականացվող ներդրումները ևս կյանքի են կոչվել ընկերության կապիտալի գրավադրման շնորհիվ, ինչը, այնուամենայնիվ, չի հանգեցրել համակարգային ռիսկերի՝ սեփականատիրոջ անձնական միջոցներից կոմպենսացիոն մեխանիզմների կիրառման շնորհիվ):

ՀԷՑ-ի շուրջ ընթացող գործընթացներն օրգանապես միահյուսվում են արտաքին ռազմավարական վերադասավորումների հետ: Եվրոպական հանձնաժողովի անդամ Մարտա Կոսի ս.թ. դեկտեմբերի 2-ին արված հայտարարությունը, ըստ որի՝ «Մենք արդեն աշխատում ենք Հայաստան–Թուրքիա էներգահամակարգի վրա, որպեսզի դուք ավելի քիչ կախված լինեք ռուսական էներգիայից», առավել քան հստակեցնում է ԵՄ նպատակները Հայաստանում: Այսուհետ «դիվերսիֆիկացիայի», «ցանցերի սինխրոնացման» և «տարածաշրջանային կայունության» մասին խոսույթը դադարում է լինել տեխնոկրատական և վերածվում է մաքուր քաղաքականության: «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցի» համար խոստացած 500 մլն եվրոն ուղղված է Հարավային Կովկասում էներգետիկ հոսքերի ամբողջ տրամաբանության վերաձևմանը:

Սկզբնապես Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան կապը դիտարկվում էր որպես «Հյուսիս- Հարավ» բարձրավոլտ միջանցք՝ տեխնիկապես բարդ, սակայն աշխարհատնտեսական առումով տրամաբանական: Ներկայում դիտվում է հակառակ գործընթացը, որը կարող ենք որակել որպես գիտակցված ֆրագմենտացիա, որի ընթացքում նախագծից դուրս են մղվում ռուսական և իրանական բաղադրիչները: Ոչ առաջինը, ոչ երկրորդը չեն դիտարկվում ԵՄ կողմից որպես Հայաստանի էներգետիկ անվտանգության համար կարևոր ու առնվազն աշխարհագրական առումով անխուսափելի: Փաստացի նույն տրամաբանությամբ է կազմվել նաև 2019 թ. այլևս գոյություն չունեցող USAID-ի կողմից «Հայաստանի էներգետիկայի զարգացման պլանը մինչև 2036 թ.», որում ոչ մի անգամ չի հիշատակվում Իրանը, իսկ Ռուսաստանի ներկայությունը Հայաստանի էներգետիկ համակարգում ներկայացվում է որպես վտանգ:

Եվրոպական տրամաբանությունը պարզ է. որքան շատ շրջանցիկ միացումներ և գծեր ստեղծվեն, այնքան ավելի է նվազելու Մոսկվայի ազդեցությունը տարածաշրջանի էներգետիկ համակարգում: Խնդիրն այն է, որ նման ճարտարապետությունը ռազմավարական առումով Հայաստանը մղում է ոչ թե բազմավեկտորության, այլ նոր՝ միավեկտոր կախվածության: Արդյո՞ք այդ վեկտորը լինելու է ԵՄ-ն: Վստահաբար՝ ոչ, և ահա թե ինչու:

ԵՄ-ի պաշտոնատար անձը փաստացի ընդգծում է Թուրքիայի դերը Հարավային Կովկասի էներգետիկ հաղորդակցություններում:

Հայաստան–Թուրքիա էներգետիկ կապերի մասին հայտարարությունները պատահական չեն և վկայում են այն մասին, որ Անկարան դիտարկվում է որպես նոր տարածաշրջանային «էներգետիկ ինտեգրատոր»: Թուրքիան այսօր աճող գեներացիա ունեցող երկիր է՝ «Աքքույու» ԱԷԿ-ը շահագործման է հանձնվելու 2026 թ., Սինոպում և Թրակիայում հայտարարված նոր ատոմային նախագծեր են իրականացվում, զգալի առաջընթաց է ապրում հիդրոէներգետիկ համալիրը: Իրավիճակը կտրուկ տարբերվում է «ֆուտբոլային դիվանագիտության» ժամանակահատվածից, երբ Թուրքիան, ունենալով էլեկտրաէներգիայի պակասորդ, Հայաստանի հետ քննարկում էր էլեկտրաէներգիայի ներկրման հեռանկարները: Այսօր ներքին պակասորդը գրեթե հաղթահարած Թուրքիան ինքն է ձգտում դառնալ էլեկտրաէներգիա արտահանող երկիր, այդ թվում՝ Հարավային Կովկասի ուղղությամբ:

Այսպիսով, հարցն այլևս այն չէ, թե կբացվի՞ արդյոք թուրքական էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունը դեպի Հայաստան, այլ այն, թե երբ և ինչ ծավալներով: Ձևավորվող ինստիտուցիոնալ միջավայրում, ազատականացված շուկայի պայմաններում այդ սցենարը դառնում է գործնականում անխուսափելի:

Այս համատեքստում լրացուցիչ ուշադրության է արժանի նաև Հայկական ԱԷԿ-ի հարցը: Անկարան հետևողականորեն առաջ է մղում դրա փակման գաղափարը, մինչդեռ Երևանը հայտարարում է փոքր մոդուլային ռեակտորների կառուցման մտադրության մասին՝ քայլ, որը նվազեցնում է ապագա արտահանման ներուժը, թուլացնում համակարգային կայունությունը և էներգետիկ անվտանգությունը: Այս ֆոնին ՀԷՑ-ի նկատմամբ թուրքական կապիտալի հետաքրքրության մասին լուրերը դադարում են դավադրապաշտական թվալ:

Մշակվող էներգետիկ էքսպանսիայի սխեման պարզ է. *Հայաստանում կոնսերվացվում է ավանդական միջուկային էներգետիկան, որին (հնարավոր է) փոխարինելու է գալիս փոքր հզորության մոդուլային ռեակտորը: Հայաստանը սահմանների վերաբացման պարագայում գնալով ավելացնում է Թուրքիայում արտադրվող էլեկտրաէներգիայի ներկրումը,, որը կարող է մատակարարվել դեմիհինգի կիրառմամբ, ինչին առավել քան նպաստելու է հայաստանյան էլեկտրաէներգետիկ շուկայի ազատականացումը (ցածր ՕԳԳ ունեցող արևային էլեկտրակայանների անսահաթեպ աճը, միևնույն է, չի ապահովելու երկրի էներգետիկ կարիքները): Որպես հետևանք արդիականությունն է կորցնում «Հյուսիս-Հարավ» էլեկտրաէներգետիկ միջանցքը, որի առանցքային շահառուներից են Իրանն ու Ռուսաստանն ու որի ներքո Հայաստանը կարող էր հանդես գալ որպես էլեկտրաէներգիայի կայուն արտահանող՝ միջուկային էներգետիկայի զարգացման պարագայում: Իր հերթին, ՀԷՑ-ի պետականացումը, որից հետո՝ կրկին մասնավորեցումը երրորդ երկրի ընկերության կողմից, թույլ է տալու ամբողջացնել այս ծրագիրը՝ փաստացի վերաձևելով Հայաստանի էներգետիկ համակարգը:*

«Հայաստանը պետք է պատրաստ լինի մի քանի սառը ձմեռների: Մենք պետք է պատրաստ լինենք երկարատև օգնություն ցուցաբերելուն», - 2024 թ. սեպտեմբերին հայտարարել է ԵԱՀԿ-ում ԱՄՆ նախկին դեսպան Դանիել Բայերը: Սա է այն նախնական գինը, որը պետք է վճարի Հայաստանն իր «վերադասավորման» համար:

Հետևանքն այն է, որ «կախվածության նվազեցման» կարգախոսի ներքո ԵՄ-ն Հայաստանին փաստացի առաջարկում է նոր կախվածություն՝ այլ աշխարհաքաղաքական կոնֆիգուրացիայով: Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գիծը կարող է դառնալ «Հյուսիս–Հարավ» միջանցքի բաղադրիչ՝ ամրապնդելով տարածաշրջանային կապակցվածությունը: Ներկայիս կոնֆիգուրացիայում նույն նախագիծը վերածվում է վերաձևման գործիքի՝ Ռուսաստանն ու Իրանը բացառելու, Թուրքիայի դերն ուժեղացնելու և էներգետիկ հոսքերը վերաբաշխելու:

Այսպիսով, ՀԷՑ-ի պետականացման գործընթացը չի կարող մեկնաբանվել որպես մեկուսացված տնտեսական կամ վարչական որոշում: Այն ներկայացնում է բազմաշերտ քաղաքական-տնտեսական վերադասավորումների հանգույց, որտեղ ներքին իրավական մեխանիզմները, սակագնային քաղաքականությունը և կառավարման ձևափոխումները սերտորեն փոխկապակցված են աշխարհաքաղաքական տրամաբանության հետ:

Ներքին հարթությունում ազգայնացումը խախտում է ներդրումային պաշտպանության հիմնարար սկզբունքները, հակասում է ինչպես երկկողմ միջազգային պարտավորություններին, այնպես էլ էլեկտրաէներգետիկ շուկայի ազատականացման հռչակված օրակարգին: Տնտեսական առումով այն ստեղծում է սակագների աճի կառուցվածքային նախադրյալներ՝ պետական պարտքի ավելացման և ենթակառուցվածքային արդիականացման ֆինանսավորման սահմանափակ հնարավորությունների պայմաններում: Այս համատեքստում «հանրային շահի» մասին հռետորաբանությունը հիմնավորված չէ և չի հաստատվում կարգավորող մարմնի իսկ հրապարակած ցուցանիշներով:

Արտաքին հարթությունում ՀԷՑ-ի պետականացումը տեղավորվում է Հարավային Կովկասում էներգետիկ ճարտարապետության նպատակային վերաձևման լայն ռազմավարության մեջ, որի առանցքային նպատակը ռուսական ազդեցության նվազեցումն է և տարածաշրջանի ինտեգրումն այլ կենտրոնների շուրջ ձևավորվող կառավարման համակարգի մեջ:

Արևմտյան, թուրքական, ռուսական, արաբական լրատվամիջոցները «Թրամփի երթուղու» մասին

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Հեղինակը ներողություն է խնդրում ընթերցողից, քանի որ հիմնականում օգտվել է թուրքական և ադրբեջանական լրատվական աղբյուրներից, և ստիպված է կիրառել «Զանգեզուրի միջանցք» մերժելի բառակապակցությունը:

Արձանագրենք, որ ըստ բրիտանական «Ռոյթեր» գործակալության ԱՄՆ վարչակազմը մեծ շուքով հայտարարել է «Միջազգային խաղաղության և բարգավաճման համար Թրամփի երթուղի» (TRIPP) նախագծի մասին,[1] որը նախատեսված է Ադրբեջանը Հայաստանի տարածքով Թուրքիային կապելու համար: Այս առիթով թուրքական իշխանությունները հայտարարում են Կարս-Դիլուչու երկաթուղու շինարարության մեկնարկը, որը նախատեսված է Թրամփի երթուղու՝ դեպի Անատոլիա շահագործումը հեշտացնելու համար: Թուրքական մամուլը նկատում է, որ մասնակից երկրների համար նախագիծը նշանավորում է եվրասիական լոգիստիկայի վերափոխման և Նոր մետաքսի ճանապարհի հիմնական խաղացողների դերի ամրապնդման գործընթացի սկիզբը: Վերջինս նշում է, որ այնուամենայնիվ, նման խոշորածավալ նախագծերի իրականացումը կարող է բախվել մի շարք աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական ռիսկերի:

Նկատենք, որ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» երևույթի ակունքները հասնում են մինչև խորհրդային ժամանակներ: Զանգելան-Նախիջևան երկաթուղային գիծը, որն անցնում էր Հայկական ԽՍՀ Մեղրիի շրջանով, կապ էր ապահովում Ադրբեջանական ԽՍՀ հիմնական մասի և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության (ՆԻՀ) միջև, որն Ադրբեջանի էքսկլավ է, և սահմանակից է Թուրքիային ու Իրանին: 1992 թվականին Ղարաբաղյան առաջին պատերազմի բռնկումից հետո երթևեկությունն այս հատվածով ամբողջությամբ փակվեց, և Հայաստանում երկաթուղային գիծը ապամոնտաժվեց: Այդ ժամանակվանից ի վեր Ադրբեջանի և Նախիջևանի միջև ուղիղ ցամաքային կապի բացակայությունը Բաքվի համար լուրջ խնդիր էր: 2020 թվականին, Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո, Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միջև եռակողմ համաձայնագիրը նախատեսում էր տրանսպորտային կապերի ապաշրջափակում՝ Մոսկվայի անվտանգության երաշխիքներով: Չնայած հնարավոր տնտեսական օգուտներին՝ Հայաստանը շարունակում է հրաժարվել միջանցքի գործարկումից՝ ադրբեջանական իրեդենտիզմի և ռազմավարական տարածքների, այդ թվում՝ Սյունիքի մարզի նկատմամբ վերահսկողության կորստի վերաբերյալ մտահոգությունների պատճառով:

Օրինակ՝ 2022 թվականին Ադրբեջանի ակտիվիստների կողմից ներկայացված նախագիծը՝ Հայաստանի Սյունիքի մարզում և Սևանի տարածքում (ադրբեջանական պատմագրության մեջ դրանք համապատասխանաբար կոչվում են Զանգեզուր և Գեյչա) ինչը որ «Գեյչա-Զանգեզուրյան հանրապետություն» ստեղծելու վերաբերյալ, արդարացի մտահոգություն առաջացրեց Հայաստանում):[2]

Ըստ թուրքական «Անադոլու» գործակալության, Թուրքիան և Ադրբեջանը, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը» դիտարկում են որպես առանցքային տարր՝ անարգել տրանսպորտային կապեր ստեղծելու համար ոչ միայն իրենց, այլև Ասիայի և ամբողջ Եվրոպայի միջև: Ահա թե ինչու, Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ավարտից ի վեր Բաքուն համառորեն ճնշում է գործադրում Երևանի վրա՝ Զանգեզուրի միջանցքը ստեղծելու պահանջով, Սյունիքով՝ ձգտելով ինտեգրել իր նյութատեխնիկական հնարավորությունները թուրքական մեգանախագծերի հետ, ինչպիսիք են «Եվրասիա» թունելը և Սուլթան Սելիմ Յավուզի կամուրջը (երկուսի շինարարությունն էլ ավարտվել է 2016 թվականին):[3]

Մինչ Ադրբեջանը կառուցում է Զանգեզուրի միջանցքի արևելյան հատվածը, Թուրքիան կառուցում է արևմտյանը: Ապագա Կարս-Դիլուչու երկաթուղին, չնայած ընդամենը 224 կիլոմետր երկարությանը (Ստամբուլ-Անկարա երթուղու կեսը), դիտվում է որպես կարևորագույն օղակ Անկարայի և Բաքվի հավակնոտ ծրագրերում: Նոր երկաթուղու նշանակությունը չի սահմանափակվում քանակական ցուցանիշներով. այն ուղղակիորեն կկապի Թուրքիան Ադրբեջանի հետ, Նախիջևանի միջոցով: Թուրքական «Միլլիեթի «հաղորդմամբ, 2029 թվականին Կարս-Դիլուչու երկաթուղային գծի շինարարության ավարտից հետո, Կարսից մինչև Ադրբեջանի սահման ճանապարհորդության տևողությունը կկազմի ընդամենը 85 րոպե: Այս նախագիծը ներառում է յոթ կայարանների կառուցում, այդ թվում՝ Սուբաթանի, Դիգորի, Թուզլուջայի, Իգդիրի, Կարակոյունլուի, Արալքքի և Դիլուչուի, ինչպես նաև լայնածավալ ենթակառուցվածքների՝ 27 էստակադայի, 13 կամրջի և 19 թունելի կառուցում: Գիծը կապահովի մինչև 160 կմ/ժ արագությամբ ուղևորատար գնացքների սպասարկում:

Նախագիծը հիմնարար կերպով կփոխակերպի տարածաշրջանի լոգիստիկ դերը. Կարսը կդառնա բեռնափոխադրման հիմնական դարպաս, Իգդիրը՝ առևտրային կենտրոն, իսկ Արալքքը և Դիլուչուն կծառայեն որպես ռազմավարական կարևորության անցման կետեր: Գծի տարեկան բեռնափոխադրման ծավալը կհասնի 15 միլիոն տոննայի, իսկ ուղևորափոխադրումը՝ 5.5 միլիոնի:[4] Թուրք ղեկավարները, այդ թվում՝ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը և տրանսպորտի նախարար Ա. Ուրալօղլուն, նախագծին տալիս են բարձր խորհրդանշական նշանակություն՝ այն անվանելով «կամուրջ Ասիայի և Եվրոպայի միջև», որը կամրապնդի երկրի աշխարհառազմավարական առաջատարությունը, կնպաստի տարածաշրջանային բարգավաճմանը և կինտեգրվի համաշխարհային առևտրային ցանցերին: Կանխատեսվում է որ տնտեսապես նոր գիծը, Բաքու-Թբիլիսի-Կարս գործող մայրուղու հետ ինտեգրվելուց հետո, որ զգալիորեն կբարձրացնի երկաթուղու բաժինը Թուրքիայի արտաքին առևտրում ներկայիս 1%-ից մինչև 4%, և 30 տարվա ընթացքում կապահովի 147.6 միլիարդ լիրայի եկամուտ: Երկաթուղային գծից բացի, կանխատեսվում է, որ երթուղին ի վերջո կներառի նաև նավթի և գազի խողովակաշարեր, ինչպես նաև օպտիկամանրաթելային գծեր: Ըստ թուրքական «Դայլի Սաբահի» հաղորդման, կանխատեսվում է, որ նոր գծի ընդհանուր հզորությունը կհասնի 5.5 միլիոն տոննայի, իսկ ուղևորափոխադրումները՝ 5.5 միլիոնի:[5]

Նախագիծը կստեղծի մոտ 10,000 նոր աշխատատեղ, ինչը հատկապես կարևոր է Արևելյան և Հարավարևելյան Անատոլիայի զարգացման համար: Ըստ ադրբեջանական «Ազերնյուսի», հիմնարկեքի արարողության ժամանակ լրագրողների հետ զրույցում, Ա. Ուրալօղլուն համեմատեց դրա նշանակությունը Իզմիր-Ստամբուլ մայրուղու հետ, որը պաշտոնապես բացվեց 2025 թվականի օգոստոսի 24-ին: Մայրուղին խթանել է իր երթուղու երկայնքով 12 կազմակերպված արդյունաբերական գոտիների (ԿԱԳ) զարգացումը, ինչն արդեն հանգեցրել է նոր աշխատատեղերի ստեղծմանը: Հարցին, թե արդյոք կարելի՞ է նմանատիպ փոփոխություններ ակնկալել Կարս-Դիլուչու գծի հետ կապված, նախարարը պատասխանել է, որ առնվազն կա քաղաքական կամք՝ կանխելու բոլոր նոր արդյունաբերական օբյեկտների կենտրոնացումը Ստամբուլում: Նոր գիծը կարժենա 110 միլիարդ լիրա (մոտավորապես 2.8 միլիարդ դոլար՝ ներկայիս փոխարժեքով): Համեմատության համար՝ Ռիզե-Արդվին օդանավակայանն արժեցել է ընդամենը 275 միլիոն դոլար, Իզմիրի ավտոբուսային կայարան տանող նոր մետրոյի գիծը՝ 535 միլիոն դոլար, իսկ Ստամբուլի նոր օդանավակայանը՝ 12 միլիարդ դոլար:[6] Գերմանական «Բիզնես ինսայդերը» հատկանշական է համարում, որ Կարս-Դիլուչու երկաթգծի ֆինանսավորումն իրականացնում է վարկատուների միջազգային կոնսորցիումը, այդ թվում՝ ճապոնական Mitsubishi UFJ-ն, շվեդական (SEK) և ավստրիական (OeKB) արտահանման վարկային գործակալությունները, ինչպես նաև Իսլամական զարգացման բանկը: Թուրքիայում երկաթուղային բազմաթիվ նախագծեր ֆինանսավորվում են նման կոնսորցիումների կողմից. օրինակ՝ Անկարա-Իզմիր և Մերսին-Գազիանթեփ

արագընթաց երկաթուղիների կառուցումը ֆինանսավորվել է եվրոպական վարկատուների կողմից:[7]

Ըստ «Միլլիեթի», Թուրքիայում կարծում են, որ միջանցքն ունի մակրոտարածաշրջանում լոգիստիկ հոսքերն ամբողջությամբ վերափոխելու և բեռնափոխադրման ժամանակը 18-ից 12 օրվա կրճատելու ներուժ՝ այն դարձնելով ավելի մրցունակ, քան ավանդական ծովային երթուղիները: Թուրք քաղաքական գործիչների համարձակ հայտարարությունները ցույց են տալիս, որ պաշտոնական Անկարան բացարձակապես վստահ է, որ «Զանգեզուրի միջանցքի» գործարկման հարցում, առանց որի և՛ Հորադիզ-Աղբանդ նախագիծը ադրբեջանական կողմից, և՛ Կարս-Դիլաչու նախագիծը թուրքական կողմից անօգուտ և անիմաստ կլինեն:[8] Սակայն, Զանգեզուրի միջանցքի ապաշրջափակումը (կամ, ըստ էության, վերականգնումը) թվում է բարդ և վիճահարույց հարց: Մասնավորապես, Հայաստանը պնդում է, որ Զանգելան-Նախիջևան երկաթուղային գիծը փոխարինվի բոլորովին այլ՝ Իջևան-Ղազախ գծով, որը գտնվում է շատ ավելի հյուսիսում: Այս գիծը, որը կառուցվել է շատ ավելի ուշ, կապել է նաև մայրցամաքային Ադրբեջանը Նախիջևանի հետ, թեև Երևանի, այլ ոչ թե Հայաստանի Սյունիքի մարզի միջոցով:[9] Ադրբեջանում սահմանային գիծը միացել է հիմնական երկաթուղային ցանցին՝ թույլ տալով գնացքներին Բաքվից մեկնելու Երևան: Հայաստանը հետաքրքրված է վերականգնելու այս հատվածը, որը նույնպես ավերվել է 1992-1994 թվականների պատերազմից հետո, որպեսզի այն կապվի Ռուսաստանի երկաթուղիների հետ՝ Ադրբեջանի տարածքով: Սակայն, եթե այս կոնկրետ գիծը վերականգնվի, ապա ներկայումս կառուցվող Հորադիզ-Աղբենդ և Կարս-Դիլաչու երկաթուղիների անհրաժեշտությունը, բնականաբար, կվերանա: Ըստ «Ազե.մեդիայի», Անկարայի և Բաքվի «տրանսպորտային և լոգիստիկ նկրտումները» լուրջ դիմադրության են բախվում ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի կողմից: Թեհրանը չափազանց զգայուն է «Զանգեզուրի միջանցքի» ստեղծման գաղափարի նկատմամբ, որը շրջանցում է իր տարածքը:

Ավելին, սահմանային բեռնափոխադրումների շուրջ լարվածություն արդեն իսկ առաջացել է, և, ավելին, սրվել է: 2021 թվականին ադրբեջանական անցակետեր են տեղադրվել Գորիս-Կապան մայրուղու վրա, որի 21 կիլոմետրանոց հատվածը Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ: Իրանցի բեռնատարների վարորդները բախվել են Հայաստանի Սյունիքի մարզով տեղաշարժի սահմանափակումների: Իրանական բեռնատարներից պահանջվում է մեծ վճար վճարել «սահմանը հատելու» համար: Անմիջապես հայտնվեցին հաղորդագրություններ, որ Իրանը հակադարձել է՝ արգելելով թուրքական բեռնատարների մուտքը, սակայն այդ պնդումները հերքվել են իրանական կողմից՝ ներկայացվելով որպես տեղեկատվական պատերազմի մաս:[10] Միևնույն ժամանակ, Հայաստանն ակտիվացրել է Ագարակ-Սիսիան մայրուղու շինարարությունը դեպի Իրանի սահման՝ վիճելի Գորիս-Կապան հատվածին այլընտրանք ստեղծելու համար, որը մասամբ վերահսկվում է Ադրբեջանի կողմից: Ըստ թուրքական «Թանսիմ նյուսի», Իրանը, ինչպես Հայաստանը, առաջ է մղում իր սեփական տրանսպորտային նախագիծը, որը հիմնականում ծառայում է իր ազգային շահերին: Իր հերթին Իրանը ձգտում է իրականություն դարձնել խորհրդային ժամանակահատվածի «Արաս» տարանցիկ միջանցքը որպես Ադրբեջանի և Նախիջևանի միջև կարճ ճանապարհը վերագործարկելու գաղափար: Այս նախագիծը կծառայի, որպես «Զանգեզուրի միջանցքին» այլընտրանք, և թույլ կտա Իրանին միանալու Նախիջևանի երկաթուղային ցանցին՝ Ջուլֆա կայարանի միջոցով և, համապատասխանաբար, հետագայում ինտեգրվել Միջին միջանցքին և տեղափոխել իր բեռները:

Տվյալ դեպքում բախվում են Իրանի և Հայաստանի շահերը: Դեռևս 2022 թվականին հայտարարվեց, որ Ադրբեջանը համաձայնության է եկել Իրանի հետ՝ Իրանի Արևելյան Ադրբեջան նահանգով այլընտրանքային միջանցք կառուցելու վերաբերյալ, սակայն նախագծի նկատմամբ հետաքրքրությունը հետագայում մարեց աշխարհաքաղաքական բարդությունների և ենթակառուցվածքային լուծումների չափազանց թանկ լինելու պատճառով:[11] Ըստ «Ալ Ջազիրայի», Իրանի նախագահ Մ. Փեզեշկյանի Հա-



Արասի միջանցքը

յաստան կատարած այցի ժամանակ Ն. Փաշինյանը նրան վստահեցրել է, որ ապագա «Զանգեզուրի միջանցքը» կգործարկվի Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:[12]

Սակայն դա ոչ միայն չի լուծում առկա հակասությունները, այլև ընդգծում է դրանց լրջությունը: Բաքվի և Երևանի մոտեցումներում մնում է հիմնարար տարբերություն: Ըստ «Ռոյթեր» գործակալության Հայաստանը պնդում է միջանցքի երկու ծայրերում մաքսային և սահմանային վերահսկողության լիարժեք անցակետերի ստեղծման վրա՝ մինչդեռ Ադրբեջանն այն դիտարկում է որպես ազատ տրանսպորտային զարկերակ՝ առանց Նախիջևան ուղևորվող բեռների պարտադիր ստուգման:[13]

Միայն Ադրբեջանի պատրաստակամությունը՝ Հայաստանին տարանցիկ վճարներ վճարելու, հաշվի առնելով Նոր մետաքսի ճանապարհով բեռնափոխադրումների հնարավոր ծավալը, կարող է տնտեսական հետաքրքրություն ներկայացնել Երևանի համար: Այժմ, ամերիկյան շահերից ելնելով, «Զանգեզուրի միջանցքի» գործարկումն ուղղակիորեն կախված է Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրումից: Համաձայնագիրը պարզապես նախաստորագրվել է երկրների ղեկավարների կողմից Վաշինգտոնում կայացած հանդիպման ժամանակ, սակայն դրա ստորագրման ճանապարհին դեռևս բազմաթիվ խոչընդոտներ կան: Դրանցից մեկը Ադրբեջանի պահանջն է՝ փոփոխել սահմանադրական դրույթները՝ ՀՀ Սահմանադրությունից հանելով Լեռնային Ղարաբաղի մասին ցանկացած հիշատակում: Ավելին, կա Փաշինյանի ցանկությունը՝ Ադրբեջանի հետ խաղաղության հարցը, որը զգայուն հարց է հայ հասարակության զգալի մասի և վերնախավի համար, ովքեր վախենում են ադրբեջանական իրեդենտիզմից, հետաձգել առնվազն մինչև 2026 թվականի խորհրդարանական ընտրությունները:[14] Այնուամենայնիվ, եթե ընդդիմությունը հաղթի այդ ընտրություններում, համաձայնագիրն իր ներկայիս տեսքով չի ստորագրվի, ինչը նշանակում է, որ «Զանգեզուրի միջանցքը» առայժմ կմնա միայն հռետորաբանություն: Նշենք, որ, ըստ «Կավկազ ուոթչ» պարբերականի, թե առաջարկվող երեք տրանսպորտային տարբերակներից որը կիրականացվի՝ հայկականը (Իջևան-Ղազախ ճանապարհ), իրանականը (Արասի միջանցք), թե թուրք-ադրբեջանականը (Զանգեզուրի միջանցք)՝ վերջնական խոսքը մնում է Միացյալ Նահանգներին, որը մինչև վերջերս որևէ տեսանելի ակտիվ հետաքրքրություն չէր ցուցաբերել Հարավային Կովկասում հաղորդակցությունների նկատմամբ: Սակայն, այն բանից հետո, երբ Իլհամ Ալիևը և Նիկոլ Փաշինյանը նախաստորագրեցին երկու երկրների միջև խաղաղության համաձայնագիրը Վաշինգտոն կատարած այցի ժամանակ, պաշտոնապես ներկայացվեց «Թրամփի միջազգային խաղաղության և բարգավաճման երթուղի» (TRIPP) նախագիծը: Ըստ ծրագրի՝ մասնավոր ամերիկյան կոնսորցիումը կստանա 99 տարվա վարձակալության իրավունք Զանգեզուրի միջանցքի համար, որն անցնում է Հայաստանի Սյունիքի մարզով՝ հարակից տարածքներում ենթակառուցվածքների և զարգացման կառավարման համար:

Չնայած Վաշինգտոնը չի ստանձնում անվտանգության պատասխանատվություն, այս ռազմավարական տարածաշրջանում ԱՄՆ-ի հնարավոր երկարաժամկետ ներկայության գաղափարն ինքնին առաջացրել է Ռուսաստանի և Իրանի ուժեղ դիմադրությունը:[15]

Ծանոթագրություններ

1 https://www.reuters.com/world/us-secures-strategic-transit-corridor-armenia-azerbaijan-peace-deal-2025-08-07/.
2 https://eurasianet.org/the-rise-and-fall-of-azerbaijans-goycha-zangazur-republic.
3 https://www.aa.com.tr/en/turkiye/turkiye-begins-laying-groundwork-for-zangezur-corridor/3666546.
4 https://www.milliyet.com.tr/ekonomi/zengezur-koridorunun-kritik-yatirimi-kars-igdir-aralik-dilucu-demiryolu-projesi-7434091.
5 https://www.dailysabah.com/business/transportation/turkiye-starts-building-rail-link-to-nakhchivan-key-to-zan.
6 https://www.azernews.az/region/194043.html.
7 https://www.businessinsider.com/photos-istanbul-new-airport-modern-turkey-2019-10.
8 https://www.milliyet.com.tr/ekonomi/zengezur-koridorunun-kritik-yatirimi-kars-igdir-aralik-dilucu-demiryolu-projesi-7434091.
9 https://eurasianet.org/armenia-proposing-restoration-of-rail-route-through-azerbaijan-to-russia.
10 https://aze.media/turkiye-plans-to-build-railway-in-direction-of-zangezur-corridor/.
11 https://www.tasnimnews.com/en/news/2023/12/20/3009539/iran-azerbaijan-agree-to-construct-aras-road-corridor-deputy-roads-minister.
12 https://www.aljazeera.com/news/2025/8/19/armenia-reassures-visiting-iran-leader-it-will-control-azerbaijan-co.
13 https://www.reuters.com/world/us-secures-strategic-transit-corridor-armenia-azerbaijan-peace-deal-2025-08-07/.
14 https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/est-li-budushchee-u-zangezurskogo-koridora-kak-mar.
15 https://caucasuswatch.de/en/news/armenia-rejects-zangezur-corridor-terminology-details-stance-on-regional-transport.html.

ԱՄՆ-ն Հարավային Կովկասում և ինչ կապ ունեն Հայաստանի հետ Աբրահամյան համաձայնագրերը

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

2024 թ. Դոնալդ Թրամփի վերադարձը Սպիտակ տուն, ի թիվս այլ հարցերի, նշանավորեց նաև ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխություն: Ներկայացնելով արտաքին քաղաքականության շեշտադրումների փոփոխությունները ՆԱՏՕ-ի, ԵՄ պետությունների և Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում՝ տեսնում ենք, որ Թրամփի մոտեցումներն էապես տարբերվում են նախորդ վարչակազմերի ուղեցույցներից: Նույն կերպ, Թրամփի մոտեցումները Հարավային Կովկասի նկատմամբ ևս առանձնահատուկ են և համեմատած նախկին վարչակազմերի հետ՝ ենթարկվել են էական շեղումների: Նման փոփոխությունների մասին է վկայում նաև Թրամփի դեկտեմբերի 5-ին հրապարակած Ազգային անվտանգության ռազմավարությունը, որտեղ հստակ նշված են նրա քաղաքական առաջնահերթությունները՝ Ռուսաստանի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի դաշնակիցների, ինչպես նաև Եվրոպայի ապագայի նկատմամբ:[1]

Իհարկե, բովանդակային առումով, Թրամփը ձևավորեց նոր ներգրավվածություն Հարավային Կովկասում՝ Հայաստանին և Ադրբեջանին առաջարկելով այսպես կոչված՝ «Թրամփի ուղին», որի նպատակն է ստեղծել ճանապարհ, որը կկապի Ադրբեջանի հիմնական տարածքը Նախիջևանի հետ՝ միաժամանակ դառնալով առևտրային և լոգիստիկ երթուղի: Այս նախագծում ԱՄՆ ներկայությունն ապահովում է բացառիկ տնտեսական և բիզնես ներգրավվածություն, և ըստ պայմանավորվածության, այս ճանապարհի կառավարիչը նշանակվելու է 99 տարվա ժամկետով:

Սա, իհարկե, տնտեսական ներկայություն է, սակայն ԱՄՆ-ին հնարավորություն է տալիս ինչ որ փուլում այս ճանապարհին հաղորդել ռազմավարական բնույթ՝ ամրապնդելով ներկայությունը մի տարածաշրջանում, որտեղ Վաշինգտոնը նախկինում նման ներգրավվածություն չի ունեցել: Իհարկե, դեռևս վաղ է խոսել Հարավային Կովկասում ամերիկյան ռազմավարական ներկայության մասին, սակայն ակնհայտ է, որ այդ հնարավորությունը ստեղծվում է այս ճանապարհային ծրագրի իրականացման միջոցով:

Թրամփի վարչակազմը Հարավային Կովկասում իր արտաքին քաղաքականությանը ևս մեկ նոր շերտ հաղորդեց, երբ 2025 թ. օգոստոսի 8-ին Սպիտակ տանը կայացած Թրամփ-Ալիև երկկողմ հանդիպման ժամանակ հայտարարվեց, որ ԱՄՆ-ն նախատեսում է Ադրբեջանի հետ հարաբերությունները բարձրացնել ռազմավարական գործընկերության մակարդակի: Իսկ Հայաստանին առնչվող երկկողմ ռազմավարական գործընկերության խարտիայի ստորագրումը տեղի ունեցավ Բայդենի վարչակազմի վերջին օրերին՝ 2025 թ. հունվարի 14-ին, Թրամփի պաշտոնավարումից ընդամենը 6 օր առաջ:

Այս գործընթացը ցույց է տալիս, որ Վաշինգտոնը ցանկանում է ավելի պրոակտիվ քաղաքականություն վարել Հարավային Կովկասում, որն աշխարհագրորեն հարևան է իր ռազմավարական դաշնակից Թուրքիային, հիմնական հակառակորդ՝ Իրանին և գլոբալ մրցակից՝ Ռուսաստանին: Այս գործոնները մեծացնում են տարածաշրջանի կարևորությունը ԱՄՆ-ի համար, և Վաշինգտոնը դիտարկում է ավելի մեծ ներգրավվածություն՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ առանձին պետությունների հետ երկկողմ հարաբերությունների շրջանակներում:

Նշենք նաև, որ թե՛ Չինաստանը, թե՛ Ռուսաստանը ունեն ռազմավարական հարաբերությունների խարտիա Հարավային Կովկասի երեք պետությունների հետ (բացառությամբ՝ ՌԴ-Վրաստան), ինչը ստիպում է ԱՄՆ-ին դիտարկել տարածաշրջանը՝ որպես Մոսկվային և Պեկինին հակակշռելու ևս մեկ հնարավորություն: Այնուհանդերձ, ԱՄՆ-ի հետաքրքրությունները Հարավային Կովկասում այս պահին դեռ չեն կրում ռազմավարական բնույթ, իսկ ներկայությունն էլ ռազմավարական չէ: Սակայն եթե «Թրամփի ուղին» աշխատի և ապահովի տարաբնույթ ապրանքների արդյունավետ շրջանառություն՝ օրինակ Չինաստանից և Հնդկաստանից դեպի Եվրոպա, ամերիկյան ներգրավվածությունը Հարավային Կովկասում կարող է ստանալ ռազմավարական նշանակություն:

Հատկանշական է, որ Թրամփի վարչակազմն ակտիվ աշխատում է նաև այլ ձևաչափերի շնորհիվ Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում և

Մերձավոր Արևելքում ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ: Այդպիսի ձևաչափերից է նաև, այսպես կոչված, Աբրահամյան համաձայնագրերը:

Աբրահամյան համաձայնագրեր՝ վաշինգտոնյան ներգրավվածության հնարավորություն

Թրամփի վարչակազմի նախաձեռնություններից մեկը, որի նպատակն է Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում և Մերձավոր Արևելքում ավելի ակտիվ ներգրավվածություն ապահովել, կոչվում է Աբրահամյան համաձայնագրեր: Այս նախաձեռնությամբ ձգտում կա ստեղծելու համագործակցության ուղիներ իսլամական պետությունների և Իսրայելի միջև՝ ամբողջ տարածաշրջանում խաղաղությանը և բարգավաճմանը նպաստելու նպատակով՝ ամերիկյան առաջնորդությամբ և երաշխիքներով: Այս ծրագիրը ձևավորվեց Դոնալդ Թրամփի առաջին վարչակազմի ժամանակ՝ նպատակ ունենալով նորմալացնել Իսրայելի հարաբերություններն այն երկրների հետ, որոնք պատմականորեն ունեցել են թշնամական կամ հակասական դիրք Իսրայելի նկատմամբ: Դրա նախնական փուլն իրականացավ 2020 թվականին, երբ Իսրայելը, ԱՄՆ-ի միջնորդությամբ, հաստատեց բարիդրացիական հարաբերություններ Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Սուդանի և Մարոկկոյի հետ: Նախաձեռնության հիմնական ճարտարապետն էր Ջարեդ Քուշները՝ Թրամփի փեսան, որը հանդես էր գալիս որպես գլխավոր բանակցող:

Իհարկե 2020 թվականի ընտրությունների հետևանքով, Թրամփի պարտությունից հետո, համաձայնագրերի դինամիկան նվազեց, իսկ Վաշինգտոնի ընդհանուր արտաքին քաղաքական մոտեցումն Իսրայելի նկատմամբ որոշակիորեն վերանայվեց: Սակայն 2024 թվականին որպես ԱՄՆ նախագահ Թրամփի քաղաքական դաշտ վերադառնալը հնարավոր վերածննդի հիմք դարձավ Աբրահամյան համաձայնագրերի համար՝ ընդլայնված շրջանակով, որը հիմա նախատեսում է Իսրայելի հարաբերությունների կարգավորում կամ ջերմացում ոչ միայն արաբական, այլև իսլամական այլ պետությունների հետ:

Չնայած այն հանգամանքին, որ Աբրահամյան համաձայնագրերի սկզբնական նպատակն էր կարգավորել Իսրայելի և արաբական պետությունների բարդ հարաբերությունները, հետագա նպատակներից մեկը դարձավ նաև Իսրայելի հարաբերությունների կարգավորումը ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլև Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի իսլամական բնակչություն ունեցող պետությունների հետ:

Նման հնարավորությունից օգտվել ցանկացողներ շատ կան, մասնավորապես Ադրբեջանն ու Ղազախստանը:[2]

Ադրբեջանի մասնակցությունը Աբրահամյան համաձայնագրերին, իհարկե, կկրի խորհրդանշական բնույթ, քանի որ Իսրայելի և Ադրբեջանի միջև հարաբերություններն արդեն իսկ ռազմավարական բնույթի են: Ադրբեջանն Իսրայելից ձեռք է բերում միլիարդավոր դոլար արժողությամբ զենք՝ վաճառելով նավթ և գազ: Երկկողմ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թվականին և պահպանվել են բարձր մակարդակով: Հետևաբար, Ադրբեջանի ցանկությունը միանալու Աբրահամյան համաձայնագրերին ավելի շուտ միտված է Թրամփի հետ քաղաքական կապեր ստեղծելուն և ԱՄՆ-ի հետ լրացուցիչ համագործակցության ուղիներ բացելուն, քան Իսրայելի հետ հարաբերություններ կարգավորելուն:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա Վաշինգտոնի տեսանկյունից Հարավային Կովկասի ամենահարուստ երկիրը՝ Ադրբեջանը, կարևոր գործընկեր է էներգետիկ ռեսուրսների և տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը հավասարակշռելու տեսանկյունից: Վերջին երկու տարիների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները, օրինակ՝ Լեռնային Ղարաբա-

ղից ռուս խաղաղապահների դուրսբերումը և ադրբեջանական ինքնաթիռի խոցումն ու դրան հաջորդած լարվածությունը, փաստում են, որ Ադրբեջանը կարող է տարբեր տրամաչափի մարտահրավերներ ստեղծել Մոսկվայի համար, ինչից, բնականաբար, օգտվողներ շատ կլինեն:

Նման պայմաններում, իհարկե ամրապնդվում է նաև Թուրքիայի՝ թյուրքական երկրների առաջնորդի, և նրա դաշնակից Ադրբեջանի և այլ թյուրքական պետությունների դերակատարությունը տարածաշրջանում, որի առանցքով Վաշինգտոնը կստեղծի լրացուցիչ բալանսավորող ուժ Ռուսաստանի և Չինաստանի դեմ՝ միաժամանակ իր ազդեցության գոտում պահելով ռազմավարական դաշնակից ու ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային:

Այս տեսանկյունից կարելի է դիտարկել նաև Ղազախստանի դիրքավորումը և վերջին շրջանի զարգացումները հայ-ղազախական հարաբերություններում: Ղազախստանի տնտեսությունը Կենտրոնական Ասիայի ամենաարագ զարգացող տնտեսությունն է, շարունակաբար ձգտում է դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը: Միաժամանակ նա ռազմավարական հարաբերություններ է պահպանում Չինաստանի, Ռուսաստանի և Միացյալ Նահանգների հետ, ինչը նրան թույլ է տալիս վարելու բազմակի ուղղվածությամբ արտաքին քաղաքականություն՝ հիմնված ոչ միայն տարածաշրջանային հակամարտությունների, այլև մեծ ուժերի համընկնող հետաքրքրությունների վրա:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս Ղազախստանին լինելու հարաբերականորեն ինքնուրույն խաղացող գլոբալ տերությունների հետ փոխհարաբերություններում և ստանալ առարկայական առավելություններ բոլոր երեք ուղղություններով համագործակցելու դեպքում: Այս համատեքստում Ղազախստանը նաև բաց է տարբեր ինտեգրացիոն նախաձեռնություններում մասնակցության համար, հատկապես այնպիսի ծրագրերում, որոնք չեն հակասում նրա հիմնական գործընկերների գլոբալ շահերին: Օրինակ, չնայած այն հանգամանքին, որ Իսրայելի և Ղազախստանի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են դեռևս 1992 թվականին, և երկկողմ համագործակցության հաստատուն հիմքերը զարգացել են վերջին տասնամյակների ընթացքում, սակայն Ղազախստանը ևս հետաքրքրված է Աբրահամյան համաձայնագրերին միանալու գաղափարով: Այս տեսանկյունից Ղազախստանը ևս յուրահատուկ օրինակ է՝ նա, թեև հիմնականում իսլամական երկիր է, ունի աշխարհիկ քաղաքական համակարգ Ադրբեջանի օրինակով: Ղազախստանի հնարավոր մասնակցությունը Աբրահամյան համաձայնագրերին նույնպես ավելի շուտ խորհրդանշական բնույթ կկրի, քան կլինի իրական «ռեալպոլիտիկ» հաշվարկների արդյունք: Իրականում, հիմնական ռազմավարական հաշվարկը ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացումն է, ինչը թույլ կտա Ղազախստանին նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանից և միաժամանակ բալանսավորել Չինաստանի ազդեցությունը՝ ամրապնդելով կապերը Վաշինգտոնի հետ: Ինչ վերաբերում է Թրամփի ուղուն, ապա Ղազախստանի աջակցությունը այս նախաձեռնությանը՝ Հայաստանի Սյունիքով անցնող ճանապարհի միջոցով, համահունչ է նրա ռազմավարական նպատակներին՝ ամրապնդել համագործակցությունը և ծառայեցնել դրանք տարածաշրջանային շահերին:

Միաժամանակ, Թուրքիան, որը ձգտում է մեծացնել իր ազդեցությունը Կենտրոնական Ասիայում և թյուրքական պետությունների առաջնորդ դառնալու հավակնություններ ունի, այս միջանցքով կստանա անմիջական ցամաքային կապ Ադրբեջանի հետ՝ շրջանցելով Իրանը և կկապվի Ղազախստանի հետ Կասպից ծովի միջոցով: Այնուամենայնիվ, այս նախաձեռնությունը միայն տնտեսական բնույթ չունի: Այն կրում է նաև գաղափարական բաղադրիչ՝ կապված պանթյուրանիզմի գաղափարախոսության հետ, որի նպատակն է ստեղծել թյուրքական ժողովուրդների միություն և համագործակցություն:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա չնայած այն հանգամանքին, որ մի քանի ամիս առաջ Թրամփի խորհրդական Ս. Վիտկոֆը հայտարարել էր,[3] որ Հայաստանը և Ադրբեջանը կարող են միանալ Աբրահամյան համաձայնագրերին, Հայաստանի պարագայում մինչ օրս պարզ չէ, թե ինչպես 98 տոկոս քրիստոնյա բնակչություն ունեցող երկիրը կարող է դառնալ այդ համաձայնագրերի մաս, քանի որ այստեղ իսլամական բնակչություն չկա: Միևնույն ժամանակ, այդ առաջարկն ավելի տրամաբանական կլիներ Հայաստանի, այլ ոչ թե Ադրբեջանի պարագայում, հաշվի առնելով Հայաստանի և Իսրայելի պատմական լարված հարաբերությունները՝ ադրբեջանա–իսրայելական ռազմավարական կապերը, Հայաստանի բարեկամական հարաբերությունների Իրանի հետ և Երուսաղեմում հայկական պատմամշակութային արժեքների նկատմամբ Իսրայելի իշխանությունների կողմից ստեղծվող մշտական խնդիրների ֆոնին:

Սակայն այս տեսանկյունից զարմանալի չէ, որ Հայաստանը դեռևս չի միացել և չի հայտարարել Աբրահամյան համաձայնագրերին միանալու մասին: Այնուամենայնիվ, տեսական առումով նման սցենարը

կարող է իրականություն դառնալ, եթե Աբրահամյան համաձայնագրերի տրամաբանությունը սկսի տարածվել ոչ միայն Իսրայելի և արաբական պետությունների, այլև որոշ քրիստոնեական երկրների հետ հարաբերությունների կարգավորման վրա: Այս համատեքստում պաշտոնական Երևանը շարունակում է պահպանել սպասողական դիրք և որևէ պաշտոնական հայտարարություն չի անում Ադրբեջանի՝ այս համաձայնագրերին հնարավոր միանալու վերաբերյալ:

Եթե իրավիճակը դիտարկենք այս տեսանկյունից, ապա չի կարելի բացառել որ Ս. Վիտկոֆը նման հայտարարություն անելուց նկատի չուներ որ Հայաստանն ու Ադրբեջանը միանան Աբրահամյանն համաձայնագրերին միմյանց հետ ունեցած հակամարտությունը կարգավորելու համար: Այստեղ կարևոր էր, որ ԱՄՆ ռազմավարական դաշնակից Իսրայելը հնարավորինս քիչ խնդիրներ ունենա ոչ միայն արաբական երկրների հետ, այլև իսլամական և այլ պետությունների հետ: Վաշինգտոնին անհրաժեշտ է ցույց տալ, որ ոչ միայն արաբական, այլև թյուրքական պետությունները, այնպիսիք, ինչպիսիք են Ադրբեջանն ու Ղազախստանը, ցանկանում են հարաբերությունները խորացնել Իսրայելի հետ, ինչի վերջնական նպատակը, իհարկե, Իսրայելի և Թուրքիայի հաշտեցումն է թվում:

Ինչ վերաբերում է Թրամփի ուղուն, ապա այստեղ հարցերը դեռևս ավելի են, քան պատասխանները, և անորոշության գործոնը բավականին մեծ է: Չնայած հայտարարություններին և օգոստոսի 8-ին ստորագրված փաստաթղթերին, դեռևս չկան հստակ պատասխաններ հանրությանը և մասնագիտական շրջանակներին հուզող մի շարք հարցերի վերաբերյալ:

Նախ անհասկանալի է, թե ով է իրականացնելու ճանապարհի սպասարկումը (այդ թվում՝ անվտանգության ապահովումը): Միաժամանակ չկա հայտարարված որևէ մրցույթ, որին կկարողանան մասնակցել այն կազմակերպությունները, որոնք հետաքրքրված են այս ճանապարհի մենեջմենթով:

Անհայտ է, թե երբ ճանապարհը կսկսի գործարկվել, և արդյո՞ք դա կլինի Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության ստորագրումից հետո միայն, որն իրատեսական հաշվարկներով կարող է տեղի ունենալ 2026 թ. պառլամենտական ընտրություններից և Հայաստանում սահմանադրական հանրաքվեի անցկացումից հետո, որով Հայաստանը պետք է բավարարի Ադրբեջանի նախապայմանները: Եթե սահմանների բացումն ու ճանապարհի գործարկումը տեղի է ունենալու այդ ժամանակ, ապա լավագույն դեպքում ճանապարհը կարող է գործարկվել 2027 թ.:

Կան նաև աշխարհաքաղաքական հարցեր, թե ասենք ճանապարհի նկատմամբ ինչպես են դիրքավորվելու Իրանն ու Ռուսաստանը, որոնք օգոստոսի 8-ի հայտարարություններից հետո շատ զուսպ և սակավախոս էին իրենց հայտարարություններում և գնահատականներում: Եթե նախկինում Իրանը հայտարարում էր, որ իր համար կարմիր գիծ է ցանկացած սահմանի փոփոխություն, ապա այս դեպքում ևս

գործ ունենք սահմանի գոնե բովանդակային փոփոխության հետ, այն էլ ամերիկյան կազմակերպության ընդհանուր կառավարման ներքո: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպես է ընդունվելու այս նախագծի կյանքի կոչումը Մոսկվայի կողմից, մանավանդ հաշվի առնելով, որ դրանով Վաշինգտոնը հնարավորություն է ունենալու ռազմավարական ներգրավվածություն ապահովել Հարավային Կովկասում և դրանից այն կողմ:

Մեկ այլ հարց է ճանապարհով անցնող բեռների ծավալների պարագան: Դրանք պետք է այնքան մեծ լինեն, որ ձեռնտու լինեն թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին, և թե ամերիկյան այն կազմակերպություններին, որոնք ներգրավված կլինեն այս ճանապարհի կառավարման գործում: Իսկ եթե այս ճանապարհով անցնելու են նաև նավթագազային խողովակներ, ապա դրա նպատակն է լինելու այլընտրանքային ուղիներով ապահովել Եվրոպան էներգառեսուրսներով, շրջանցելով Ռուսաստանին: Այսինքն՝ նավթային և գազային մատակարարումներից կախվածության տեսանկյունից, Եվրոպան կախվածություն ձեռք կբերի Թուրքիայից, այլ ոչ թե Ռուսաստանից:

Ցանկացած պարագայում Հարավային Կովկասում, այնպես, ինչպես Կենտրոնական Ասիայում, գլոբալ խաղացողների մրցակցությունը տարածաշրջանային ազդեցության համար մեծանում է՝ ակտիվությունը աճում: Ուկրաինայի պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը, ամենայն հավանականությամբ, առավել ակտիվ ջանքեր կներդնի Հարավային Կովկասում իր կորցրած ազդեցությունը վերականգնելու համար, սակայն այստեղ Մոսկվան գործիքակազմը փոխելու անհրաժեշտություն կունենա, քանի որ ներկայիս Հարավային Կովկասն էապես տարբերվում է 2020 թ. Հարավային Կովկասից:

Հղումներ

1 https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2025/12/2025-National-Security-Strategy.pdf

2 https://www.atlanticcouncil.org/blogs/menasource/abraham-accords/

3 https://caucasuswatch.de/en/news/steve-witkoff-azerbaijan-and-armenia-may-join-abraham-accords-soon.html#:~:text=He%20specifically%20mentioned%20Azerbaijan%2C%20Armenia,trade%2C%20technology%2C%20and%20energy.

2025 թվականը՝ Իրանի հեռանկարային վերակազմավորման և ինքնիշխանության ռազմավարական ամրապնդման տարի

Արամ Շահնազարյան
«Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր

Նախաբան

2025 թ. Մերձավոր Արևելքը նշանավորվեց միաժամանակ և՛ մարտահրավերների, և՛ վերաձևվող աշխարհաքաղաքական հնարավորությունների համադրությամբ, որոնցում Իրանը հայտնվեց որպես առանցքային դերակատար՝ թե՛ տարածաշրջանային, թե՛ գլոբալ մակարդակներում: ԱՄՆ–Իրան հարաբերությունները մնացին լարված՝ ընդհատված անուղղակի բանակցությունների պայմաններում, իսկ լարվածության կիզակետ դարձավ Իրան-Իսրայել 12-օրյա պատերազմը, որի շուրջ տարածաշրջանում ձևավորվեցին ամբողջովին նոր անվտանգային իրականություն և տրամաբանություն: Իրանի արձագանքը, ռազմավարական հաշվարկներն ու ռազմա-տեխնոլոգիական կարողությունները ձևավորեցին աշխարհաքաղաքական այն նոր հավասարումը, որն իրանական քաղաքական միտքը բնորոշում է որպես «կասեցման և հակակշռման արդյունավետ փոխակերպում»: Միաժամանակ, Մերձավոր Արևելքում, մասնավորապես՝ Սիրիայում եւ Լիբանանում առկա փոփոխությունները ժամանակավորապես թուլացրել են Իրանի անմիջական ազդեցությունը, սակայն չեն կոտրել Թեհրանի խորքային դիրքերը: Իրանը շարունակում է մնալ տարածաշրջանային հավասարակշռության առանցքային օղակ՝ դիվանագիտական ճկունության, փոխկապակցված դաշինքների և անվտանգային նոր ճարտարապետությունների ձևավորման շնորհիվ:

Իրան-Ռուսաստան և Իրան-Չինաստան հարաբերությունները 2025 թվականին նոր որակ ստացան: Թեհրանն իր աշխարհաքաղաքական ուղղվածությունը ձևավորում է բազմաբևեռության սկզբունքի շուրջ՝ օգտվելով Շանհայի համագործակցության կազմակերպության, ԲՐԻԿՍ-ի և այլ ասիական ձևաչափերի ընձեռած հնարավորություններից, որոնք որոշ չափով մեղմում են Միացյալ Նահանգների և Եվրամիության կողմից կիրառվող քաղաքական ու տնտեսական ճնշումները: Հատկանշական են նաև Իրան-Հայաստան հարաբերությունները, որոնք ակտիվացել են հատկապես «Զանգեզուրի միջանցք» կոչվող նախագծի հետ կապված Թեհրանի մտահոգությունների և վերապահումների ֆոնին: Իրանն այս հարցում հանդես է գալիս որպես տարածաշրջանային կարգավորիչ ուժ, որը տեսականորեն ունակ է կանխել ցանկացած նախաձեռնություն, որը վտանգում է իր տարածքային ամբողջականությունը, սահմանային անվտանգությունը կամ տարածաշրջանային հավասարակշռությունը:

Միաժամանակ, Իրանի ներսում տնտեսական հիմնախնդիրները, արժույթի անկայունությունը, նավթային եկամուտների փոփոխականությունը և ջրային պաշարների վտանգավոր նվազումը շարունակում են մնալ խորքային մարտահրավերներ, որոնք ունակ են խախտելու երկրի ներքաղաքական կայունությունը:

2025 թվականը, իր բոլոր վերիվայրումներով հանդերձ, Իրանի համար դարձել է ոչ միայն ճգնաժամերի և անվտանգային բնույթի մարտահրավերների, այլև հեռանկարային վերակազմավորման տարի, երբ պետությունը փորձում է համադրել առկա հնարավորությունները և գրանցված հաջողություններն արտաքին ճակատի մարտահրավերների և երկրի ներսում գոյություն ունեցող կառուցվածքային խնդիրների խորապատկերում:

Այս հոդվածը նպատակ ունի ներկայացնելու Իրանի հետ կապված 2025 թվականի գլխավոր զարգացումներն այն ընկալումներով, որոնք գերակշռում են պաշտոնական Թեհրանի քաղաքական ուղեգծում և ռազմավարական հաշվարկներում:

Ա. Իրան-ԱՄՆ հարաբերություններ. ռազմական սահմանափակ դիմակայության վերածված ռազմավարական հակադրություն

2025 թվականի ընթացքում Իրան-ԱՄՆ հարաբերությունները բնութագրվում են որպես խորքային անվստահության, փոխադարձ մեղադրանքների, ռազմավարական մրցակցության և սահմանափակ ռազմական դիմակայության համատեղում, որտեղ կողմերի միջև անավարտ մնացած անուղղակի բանակցությունները վկայում են ոչ թե քաղաքա-

կան կամքի բացակայության, այլ՝ օրակարգերի սկզբունքային անհամատեղելիության մասին: Թեհրանի ընկալմամբ՝ Վաշինգտոնը բանակցային գործընթացն օգտագործում էր ոչ թե փոխշահավետ արդյունքի հասնելու, այլ Իրանի նկատմամբ ճնշումը ինստիտուցիոնալացնելու և սահմանափակող մեխանիզմները երկարաժամկետ դարձնելու նպատակով: Այդ պատճառով էլ Իրանում ամրապնդվեց համոզմունքը, որ բանակցային դաշտը վերածվել է ամերիկյան վերահսկման գործիքի, այլ ոչ թե իրական քաղաքական փոխզիջման հարթակի:

12-օրյա պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի անմիջական ներգրավումը Թեհրանում ընկալվեց որպես հարաբերությունների որակական փոփոխություն՝ ռազմավարական հակադրությունից դեպի սահմանափակ, բայց արդեն ուժային դիմակայություն: Իրանը դա դիտարկեց ոչ թե որպես առանձին միջադեպ, այլ՝ Վաշինգտոնի լայն ռազմավարության բաղադրիչ, որի էությունը տարածաշրջանային ուժային դաշտի վերահսկումն է և Իրանի աճող ազդեցության զսպումը Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում և Հնդկական օվկիանոսի ավազանում: Այս իրադարձությունը վերջնականապես հստակեցրեց Վաշինգտոնի նպատակը՝ կանխել Իրանի նախաձեռնողական դերակատարությունը տարածաշրջանում:

Թեհրանի համար ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության հիմնական մտադրությունը շարունակում է մնալ Իրանի ուժային և քաղաքական հենասյուների համակարգված սահմանափակումը: Վերջինս ընդգրկում է ոչ միայն Իրանի ատոմային ծրագրի դադարեցումը, ռազմա-տեխնոլոգիական առաջընթացի զսպումը և պաշտպանական արդյունաբերության ճնշումը, այլև բազմաբևեռություն ձևավորելու ուղղությամբ Իրանի որդեգրած արտաքին քաղաքական վեկտորի չեզոքացումը: Իրանի կարծիքով՝ Վաշինգտոնը նպատակաուղղված փորձում է տկարացնել ռուս-իրանական և Իրան-չինական ռազմավարական կապերը, որոնք Թեհրանի համար անվտանգային ու տնտեսական ինքնիշխանության առանցքային ուղղություններ են:

Այս ամբողջի համատեքստում 2025 թվականին Միացյալ Նահանգների հետ հարաբերություններն Իրանում գնահատվում են որպես դիմակայություն, որը պահպանվում է վերահսկվող լարվածության շրջանակում՝ դիվանագիտական ուղիները թողնելով բաց, սակայն իրական քաղաքական բեկումն անհնար դարձնելով: Թեհրանի պատկերացմամբ՝ մինչև այն պահը, քանի դեռ Վաշինգտոնը չի համակերպվել Իրանի իրական տարածաշրջանային կշռի, ինքնիշխան ռազմավարական որոշումների անշրջելիության և բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման անխուսափելիության հետ, երկկողմ հարաբերությունները կմնան դիմակայության և ուժային հնարավոր առճակատման դաշտում:

Այսպիսով, ձևավորվում է տրամաբանություն, ըստ որի Իրան-ԱՄՆ հարաբերություններն ունեն ոչ թե ժամանակավոր ճգնաժամային, այլ կառուցվածքային

հակադրության բնույթ: Այդ հակադրության արմատները խորն են առանձին նախագահների կամ իրավիճակային ճգնաժամերի շրջանակներից և արտացոլում են երկու պետությունների աշխարհաքաղաքական պատկերացումների բախումը՝ գերտերության միաբևեռության տրամաբանության և ինքնիշխանություն ընդգծող բազմաբևեռ ռազմավարության միջև:

Բ. Իրան-Իսրայել. 12-օրյա պատերազմը որպես ուժային հավասարակշռության փոփոխության նոր հանգրվան

Ինչպես նախորդ տարիներին, 2025 թվականին ևս Իրանի համար Իսրայելը շարունակեց մնալ ոչ միայն գաղափարա-քարոզչական հակառակորդ, այլև տարածաշրջանային համակարգը վերաձևելու ձգտող թշնամական ուժ, որի քաղաքականությունն ամբողջապես ուղղված է Իրանի տարածաշրջանային ազդեցության բացառմանը, պետական համակարգի, ինչպես նաև անվտանգային մթնոլորտի կազմաքանդմանը և ռազմա-տեխնոլոգիական հնարավորությունների ոչնչացմանը:

12-օրյա պատերազմը, որը դարձավ կողմերի միջև ամենաինտենսիվ և ուղղակի ռազմական դիմակայությունը, Թեհրանը դիտարկեց ոչ թե որպես իրավիճակային բախում, այլ վերոնշյալ նպատակների ամբողջական իրագործմանն ուղղված նախապես ծրագրավորված նախաձեռնություն: Բացի այդ, Թեհրանում համոզված էին, որ Թել Ավիվը պատերազմն օգտագործում էր նաև որպես միջոց՝ ամրապնդելու սեփական դերակատարությունը Վաշինգտոնի և Արևմտյան դաշնակիցների առջև՝ ցուցադրելով նախաձեռնողական ուժային դիրքավորում Իրանի դեմ: Այս համատեքստում 12-օրյա պատերազմը դիտվեց որպես Իսրայելի փորձ՝ ապացուցելու, որ ինքը շարունակում է մնալ Իրանի զսպման միակ ուժը տարածաշրջանում:

Իրանն այս սրացմանը պատասխանեց բազմաշերտ, հաշվարկված և թիրախային գործողություններով: Չընդգրկվելով բաց պատերազմում՝ Թեհրանը պահպանեց իր վերահսկողությունն արտաքին ճակատների նկատմամբ, ամրապնդեց գործընկերային



համակարգը և փաստեց, որ արևմտյան սահմանափակումների հետևանքով իր ռազմա-տեխնոլոգիական հնարավորությունները ոչ միայն չեն նվազել, հակառակը՝ որոշակի ուղղություններով աննախադեպ առաջընթաց են գրանցել: Իրանի գործողությունների առանցքը եղավ իրավիճակի վերահսկումը՝ առանց ռազմավարական նախաձեռնությունը կորցնելու, ինչն իրանական քաղաքական շրջանակներում գնահատվեց որպես «համաչափ և արդյունավետ դիմադրություն»:

Թեպետ Թեհրանը չի թաքցնում պատերազմի ընթացքում իր կորուստները, ենթակառուցվածքային վնասները և առանձին օղակների խոցելիության փաստը, այնուամենայնիվ, դրանք ընկալվում են որպես լուծվող և ժամանակավոր խնդիրներ՝ ի տարբերություն Իսրայելի ռազմավարական նպատակի ձախողման: Իրանի գնահատմամբ՝ ոչ երկրի քաղաքական համակարգը, ոչ անվտանգային մթնոլորտը, ոչ տարածաշրջանային դիրքերը, ոչ էլ ռազմա-տեխնոլոգիական հենքը չթուլացան այն չափով, ինչին ձգտում էր Իսրայելը, և տարածաշրջանային հանրային տրամադրություններում նույնպես Թել Ավիվը չկարողացավ ապահովել բարենպաստ դիրքորոշում:

Ամփոփ գնահատմամբ՝ Իրանը 12-օրյա պատերազմը համարում է իր և Իսրայելի միջև ուժային հավասարակշռության փոփոխության նոր հանգրվան, որտեղ Թել Ավիվը չկարողացավ հասնել սահմանված նպատակներին, իսկ Թեհրանը կարողացավ պահպանել իր ռազմավարական ուժային միջուկը՝ որոշակի կորուստներով հանդերձ: Այս պահին Իրան-Իսրայել հարաբերությունները գտնվում են վերահսկվող դիմակայության փուլում, որտեղ կողմերը փորձում են մեկը մյուսին զսպել՝ առանց պատերազմական շեմը հատելու:

Թեհրանի կանխատեսմամբ՝ տեսանելի ապագայում Իսրայելը կփորձի խորացնել ճնշման մեխանիզմները՝ ընդլայնելով ինչպես ռազմական, այնպես էլ կիբեր և քաղաքական զսպման միջոցները: Իր հերթին, Իրանը շարունակելու է ամրապնդել տարածաշրջանային դաշինքները, խորացնել պաշտպանական ինտեգրացիան և պահպանել այն ռազմավարական հաշվարկը, որի նպատակն է կանխել լայնածավալ պատերազմի հնարավորությունը: Այսպիսով, երկու ախոյանների հարաբերությունները շարունակելու են մնալ սկզբունքային հակադրության դաշտում, որտեղ ժամանակավոր սրացումները դրսևորելու են կողմերի աշխարհաքաղաքական մրցակցության խորքային բնույթը:

Գ. Սիրիա և Լիբանան. Իրանի տարածաշրջանային դիրքերի հարաբերական նահանջ

Չնայած արևմտյան որոշ վերլուծություններում 2025 թվականը հաճախ ներկայացվում է որպես Իրանի տարածաշրջանային ազդեցության թուլացման և կտրուկ նահանջի շրջան, այդուհանդերձ, իրանական դիտակետն այլ է: Պաշտոնական Թեհրանը, ինչպես նաև իրանական փորձագիտական շրջանակներն ընդունում են՝ Սիրիայում Իրանը զիջել է իր ռազմավարական հզոր դիրքերը՝ պայմանավորված Ասադի վարչակազմի տապալմամբ, ուժերի նոր վերադասավորմամբ և Թուրքիայի, Արևմուտքի, ինչպես նաև Իսրայելի դերակատարության և ազդեցության կտրուկ աճով: Սակայն, ըստ Թեհրանի՝ դա ժամանակավոր բնույթ է կրում, սիրիական ճակատում իրադարձությունները դեռ առջևում են, և դրանց հետագա ընթացքն է որոշելու ուժերի վերադասավորման վերջնական պատկերն այդ երկրում:

Լիբանանում, Իսրայելի նպատակային հարվածների հետևանքով, Իրանի տարածաշրջանային կարևորագույն դաշնակցի՝ «Հեզբոլլահ»-ի ծանր կորուստները նույնպես ընկալվում են որպես ժամանակավոր մարտահրավեր: Թեհրանը շեշտում է՝ «Հեզբոլլահ»-ը շարունակում է մնալ տարածաշրջանի հզորագույն ոչ պետական ռազմաքաղաքական կազմակերպություններից մեկը, որը, թեև զգալիորեն տուժել է, բայց չի կորցրել իր ռազմավարական նշանակությունը և, մանավանդ, սոցիալ-քաղաքական հենքը:

Իրանի գնահատմամբ՝ ոչ Սիրիայում, ոչ Լիբանանում Թեհրանի դիրքերի վերջնական կորուստ լինել չի կարող, քանի որ դրանք կառուցված են ոչ թե միայն ռազմական, այլև գաղափարական, քաղաքական, տնտեսական, ինչպես նաև դիվանագիտական բազմաշերտ կապերի վրա:

Դ. Իրան-Ռուսաստան. ռազմավարական հարաբերությունների նոր հորիզոններ

Իրանի համար 2025 թվականին Ռուսաստանի հետ հարաբերությունները բնութագրվեցին որպես արտաքին քաղաքականության ամենաառանցքային հենասյուներից մեկը՝ հատկանշվելով ոչ միայն շահերի համընկնումով, այլև արևմտյան ճնշմանը հակազդելու փոխլրացվող ռազմավարությամբ: Թեհրանի դի-

տանկյունից ռուս-իրանական մերձեցման հիմքն այն համոզումն է, որ երկու պետություններն էլ կանգնած են միևնույն համակարգային մարտահրավերի՝ անհրաժեշտության առջև դիմակայելու ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից կիրառվող քաղաքական, ռազմական և տնտեսական ճնշումներին ու սահմանափակումներին:

Այս հարաբերությունների հիմքում առանձնանում են երեք գլխավոր բաղադրիչներ՝ անվտանգային և ռազմավարական փոխլրացումը, ռազմա-տեխնոլոգիական համագործակցությունը և «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի շուրջ ձևավորվող տնտեսական ինտեգրացիան:

Իրանի համար Ռուսաստանը դարձել է ոչ միայն ռազմա-տեխնիկական շրջափակման պայմաններում բացերի լրացման աղբյուր, այլև քաղաքական գործընկեր, որն, անկախ իր շահերից՝ չի փորձում միջամտել Իրանի ներքին գործերին: Ռուսաստանի համար Իրանը կարևոր է որպես ուղիղ կապ դեպի Հնդկական օվկիանոս, տարածաշրջանային կայունացման գործոն և հակաարևմտյան ռազմավարական գործընկեր, ինչը հնարավորություն է ընձեռում մեղմել արևմուտքի կիրառած մեկուսացման հետևանքները:

12-օրյա պատերազմն իրանական ընկալման մեջ դարձավ հարաբերությունների ամրապնդման գործոն, քանի որ այդ ճգնաժամում Մոսկվան հանդես եկավ որպես հավասարակշռող և ճնշումը մեղմող ուժ: Թեհրանում դա մեկնաբանվեց որպես Ռուսաստանի հետաքրքրվածություն՝ կանխելու ցանկացած զարգացում, որը կարող է թուլացնել Իրանի տարածաշրջանային դիրքերը: Միաժամանակ, պատերազմն ընդգծեց անհրաժեշտությունը, որ Իրանը պետք է խորացնի պաշտպանական ինտեգրացիան այն պետությունների հետ, որոնք կիսում են նույն մարտահրավերների միջավայրը:

Իրանը համոզված է, որ Մոսկվային, այժմ, առավել քան երբևէ, անհրաժեշտ է հակաարևմտյան գործընկերների հետ խորացված ինտեգրացիա, իսկ այդ դաշտում Իրանը զբաղեցնում է բացարձակապես առանձնահատուկ դիրք: Եվ չնայած կողմերի շահերը չեն համընկնում բոլոր տարածաշրջաններում, այդ թվում՝ Հարավային Կովկասում, այդուհանդերձ, ընդհանուր աշխարհաքաղաքական հակակշիռն ու փոխադարձ կախվածությունը պահպանում են հարաբերությունների կայուն ռազմավարական բնույթը՝ դարձնելով ռուս-իրանական գործընկերությունը խորապես փոխկապակցված ռազմավարական համագործակցության օրինակ:

2026 թվականը, իրանական կանխատեսմամբ, նշանավորվելու է հարաբերությունների ավելի ընդգծված և գործնական խորացմամբ: «Հյուսիս–հարավ» միջանցքի ավարտական փուլերը կհաստատեն տնտեսական համագործակցության երկարաժամկետ հիմքերը, իսկ արդեն ակտիվ փուլ թևակոխած պաշտպանական և տեխնոլոգիական փոխանակումները կդառնան ավելի համակարգված՝ ընդհանուր անվտանգության սպառնալիքների բազմապատկման պայմաններում:

Ե. Իրան–Չինաստան. արեւելյան բեւեռի ձեւավորում

Իրանա-չինական հարաբերություններն Իրանի արտաքին քաղաքականության այն առանցքային ուղղությունն է, որը միավորում է տնտեսական, էներգետիկ և աշխարհաքաղաքական շահերը՝ ապահովելով Թեհրանի համար փոխհատուցվող հզորություն Արևմտյան ճնշումների պայմաններում: Դրանց հիմքում ընկած է «25-տարվա համապարփակ համագործակցության ծրագիրը», որն ապահովում է էներգետիկ արտահանման կայուն ուղիներ, ենթակառուցվածքների բարելավում և տեխնոլոգիական ներգրավվածություն:

Իրանական դիտանկյունից Չինաստանը ոչ միայն խոշորագույն տնտեսական գործընկեր է, այլև բազմաբևեռ աշխարհակարգի կառուցման գլխավոր դերակատարներից մեկը: Վերջինիս հետ ռազմավարական գործընկերության զարգացման խորացող ձևաչափը նպաստում է երկրի ռազմավարական ինքնիշխանության ամրապնդմանը:

Միևնույն ժամանակ, Չինաստանի «Մետաքսի ճանապարհ» նախաձեռնության շրջանակում Իրանի աշխարհագրական դիրքի կարևորումը Թեհրանում ընկալվում է որպես հնարավորություն՝ վերածվելու Պարսից ծոցը, Կասպյան ավազանը, Արևելքն ու Աֆրոասիական ուղիները կապող տարածաշրջանային տարանցիկ հանգույցի:

Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա նրա համար Իրանն էներգետիկ անվտանգության երկարաժամկետ աղբյուր և առանցքային օղակ է՝ Մերձավոր Արևելքում արևմտյան ազդեցության կշիռը նվազեցնելու հաշվարկում:

2025 թվականին այդ հարաբերություններն առանձնացան հատկապես նրանով, որ ստացան առավել ընդգծված քաղաքական ու աշխարհաքաղաքական խորություն:

2026 թվականին Իրանը կանխատեսում է հարաբերությունների շարունակական խորացում՝ հատկապես ենթակառուցվածքային, տրանսպորտային և բարձր տեխնոլոգիական համագործակցության ոլորտներում: Չաբահար–Չինաստան բազմաֆունկցիոնալ միջանցքի և «Հյուսիս–հարավ» ուղու ընդլայնումը կարող են Իրանը վերածել Ասիայի տրանսպորտային կարևոր հանգույցներից մեկի: Ակնկալվում է նաև քաղաքական մերձեցման ամրապնդում՝ արևմտյան ճնշումների պահպանման պայմաններում, ինչը կհանգեցնի ռազմավարական բնույթի առավել համակարգված ու երկարաժամկետ համագործակցության:

Զ. ՇՀԿ և ԲՐԻԿՍ. Միջազգային հարաբերություններում Իրանի նոր հենասյուները

Շանհայի համագործակցության կազմակերպությունն ու ԲՐԻԿՍ-ը դարձել են Իրանի արտաքին քաղաքականության այն կարևոր հենասյուները, որոնց միջոցով Թեհրանը փորձում է համադրել իր տարածաշրջանային և գլոբալ նպատակները՝ միա-

ժամանակ ամրապնդելով իր արտաքին քաղաքականության անկախության ու բազմաբևեռության քաղաքական դոկտրինը: Իրանի համար ՇՀԿ-ն ունի առաջին հերթին անվտանգային նշանակություն: Այն հնարավորություն է տալիս հանդես գալու որպես պատասխանատու և ազդեցիկ դերակատար Եվրասիական տարածքում՝ միևնույն հարթակում գործելով Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Պակիստանի և Կենտրոնական Ասիայի պետությունների հետ: ՇՀԿ-ի շրջանակում Իրանը տեսնում է ոչ միայն համատեղ անվտանգության մեխանիզմներ, այլև արևմտյան ճնշումներին հակակշիռ տարածաշրջանային ճարտարապետություն, որում իր ներկայությունն ապահովում է քաղաքական և ռազմավարական լեգիտիմություն:

Իսկ ԲՐԻԿՍ-ը Իրանի համար դարձել է աշխարհատնտեսական ինքնաբավության գլխավոր հարթակ: Թեհրանը ԲՐԻԿՍ-ը դիտարկում է որպես այն համակարգը, որի միջոցով հնարավոր է նվազեցնել դոլարային կախվածությունը, զարգացնել ազգային արժույթներով հաշվարկները և ներառվել Գլոբալ Հարավի տնտեսական վերաձևավորումների մեջ: Իրանը կենտրոնացել է հատկապես էներգետիկ շուկաների երկարաժամկետ կայունացման, ֆինանսական ենթակառույցների դիվերսիֆիկացման և տրանսպորտային միջանցքների զարգացման ուղղությամբ՝ փորձելով ԲՐԻԿՍ-ը դարձնել իր համար Արևմուտքի տնտեսական շրջափակման ազդեցությունը մեղմող հիմնական ռեսուրսներից մեկը:

2025 թվականին Իրանի ներգրավվածությունը երկու կառույցներում էլ ստացավ ավելի ընդգծված ու համակարգային բնույթ: ՇՀԿ-ում Թեհրանը խորացրեց անվտանգության համագործակցությունը՝ ուշադրություն դարձնելով Աֆղանստանի կայունությանը, սահմանային պաշտպանունակությանը և տարածաշրջանային ահաբեկչական վտանգների չեզոքացմանը: ԲՐԻԿՍ-ում Իրանը նպատակ ուներ ամրապնդել իր դիրքը որպես հուսալի էներգետիկ գործընկեր և ներդրումների ուղղությամբ գրավիչ երկիր, որի միջոցով հնարավոր է զարգացնել ենթակառուցվածքային նախագծեր և ընդլայնել տնտեսական դիվանագիտությունը:

2026 թվականին ընդառաջ՝ Իրանը ակնկալում է, որ ՇՀԿ-ն կծառայի տարածաշրջանային անվտանգության և ռազմավարական հավասարակշռության ամրապնդմանը, իսկ ԲՐԻԿՍ-ը՝ տնտեսական ինքնիշխանության և ֆինանսական բազմազանեցման խորացմանը: Թեհրանի հաշվարկով այս երկու կառույցների համատեղ ներուժը կարող է էապես մեծացնել Իրանի միջազգային կշիռը՝ ապահովելով նրան ոչ միայն նոր դաշնակցային փոխհարաբերություններ, այլև արտաքին քաղաքականության ավելի լայն մանևրային դաշտ:

Է. Իրան-ԵՄ. նվազագույն մակարդակի իջեցված հարաբերություններ

Ներկա դությամբ, Իրանի և Եվրոպական Միության հարաբերություններն իջեցված են հնարավոր նվազագույն մակարդակի, ինչը դրսևորվում է դիվանագիտական լարվածության բարձրագույն աստիճանով՝ պայմանավորված ԵՄ-ի կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրանի դեմ սահմանված պատժամիջոցների հետ կանչման (Snapback) մեխանիզմի ակտիվացման հետ: Թեհրանի դիտանկյունից սա Արևմուտքի հակահիրանական քաղաքականության լրացուցիչ օղակն է, որի նպատակն է Իրանի ռազմավարական հնարավորությունների սահմանափակումն ու միջուկային ծրագրի վերահսկողության խստացումը:

2025 թվականին Իրանի արտաքին քաղաքականության ոլորտում ԵՄ-ի հետ հարաբերությունները բնութագրվում են որպես խիստ լարված, բայց պահպանվող դիվանագիտություն, որտեղ հիմնական ուշադրությունն ուղղված է չեզոքացման մեխանիզմների մշակմանը և քաղաքական երկխոսության հնարավորության պահպանմանը:

2026 թվականի համար Իրանը կանխատեսում է, որ ԵՄ-ի հետ հարաբերությունները կմնան լարված, սակայն բաց դիվանագիտական ուղիներով և հնարավորություններով: Թեհրանի տեսանկյունից սա անհրաժեշտություն է՝ հիմնված բազմաբևեռ մանևրային դաշտի վրա, որը պահպանում է Արևմուտքի հետ հարաբերության հնարավորությունը, առանց որակապես փոխելու Իրանի ռազմավարական դիրքորոշումը:

Ը. Իրան-Ադրբեջան և Իրան-Թուրքիա հարաբերություններ. գործնականություն՝ հիմնված անվստահության և զգուշավորության վրա

Ը-1. Իրան-Ադրբեջան հարաբերություններ.

2025 թվականին Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները բնութագրվում են երկակիությամբ. արտաքուստ պահպանվում է դիվանագիտական զսպվածությունն ու սահմանափակ տնտեսական-տրանսպորտային համագործակցությունը, սակայն ներքուստ առկա են խոր անվստահություն և ռազմավարական հակադրություն: Թեհրանն ուշադիր հետևում է Բաքվի արտաքին քաղաքականության տեղաշարժերին և տարածաշրջանային դիրքավորմանը, որը վերջին տարիներին Իսրայելի հետ խորացող և ամրապնդվող ռազմավարական համագործակցության արդյունքում Իրանի համար դարձել է անվտանգային բնույթի լրջագույն սպառնալիք:

Բաքվի և Թել Ավիվի հարաբերությունների ռազմավարական խորությունը, որն ունի համապարփակ ռազմական և հետախուզական բաղադրիչ, Թեհրանն ընկալում է որպես անվտանգային ուղղակի մարտահրավեր, հատկապես՝ 12-օրյա պատերազմի ֆոնին: Այդ համատեքստում Ադրբեջանն Իրանի համար չի դիտարկվում որպես հարևան երկիր, այլ՝ հնարավոր պլացդարմ այն ուժերի համար, որոնք ուղղակի վտանգ են ներկայացնում Իրանի անվտանգային մթնոլորտի և կայունության համար:

Միաժամանակ, Բաքվի միջանցքային քաղաքականությունը, մասնավորապես՝ «Զանգեզուրի միջանցքի» գաղափարը, ստեղծում է լրացուցիչ մարտահրավեր Իրանի տարածաշրջանային դիրքի և շահերի համար:

Այդ նախագիծը Թեհրանում դիտվում է որպես Հարավային Կովկասում լոգիստիկ և աշխարհաքաղաքական քարտեզի վերաձևման փորձ, որը շրջանցելով Իրան, չեզոքացնելու է նրա ազդեցությունը Հարավային Կովկասում: Իրանի հայտարարությունները, որ չի հանդուրժի տարածաշրջանային սահմանների փոփոխություն, այդ առումով ուղիղ արձագանք են ցանկացած ձևաչափով և տրամաբանությամբ այդ միջանցքի հնարավոր գործարկմանը:

Զուգահեռաբար, Ադրբեջանա-թուքական տանդեմի կտրուկ ուժեղացումը և ռազմաքաղաքական ներկայության ընդլայնումը Հարավային Կովկասում լրացուցիչ ճնշում են գործադրում Իրանի վրա: Թեհրանը զգում է, որ տարածաշրջանում ձևավորվում է ուժ, որն իր շահերին հակադիր է և լրջորեն նվազեցնում է նրա ազդեցության տարածքը: Այդ առանցքը կարող է ոչ միայն սահմանել տարածաշրջանային նոր անվտանգության ճարտարապետություն, այլև ամրապնդել իսրայելական ներկայությունն Իրանի անմիջական սահմանների հարևանությամբ:

Այս բոլոր գործընթացների փոխազդեցության հետևանքով Իրանը հայտնվել է բարդ ընտրության առջև. պահպանել ավանդական ազդեցությունը Հարավային Կովկասում՝ դիմադրելով ուժերի վերաձևավորման նոր տրամաբանությանը, կամ ընդունել փոխվող իրողությունները և վերանայել իր տարածաշրջանային ռազմավարությունը: Մերձավոր Արևելքից մինչև Կովկաս ձգվող անվտանգության շղթայի համար, Թեհրանի ընկալմամբ, վճռորոշ է Ադրբեջան–Իսրայել առանցքի դինամիկան, որը կարող է ձևավորել Իրանի համար անբարենպաստ ռազմավարական միջավայր:

Թեհրանում կանխատեսում են, որ 2026 թվականին Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները թեև պահպանվելու են դիվանագիտական ձևաչափում և ունենալու են տնտեսական ու տրանսպորտային համագործակցության բաղադրիչներ, սակայն, իրականում, շարունակելու են պայմանավորված լինել խորքային հակադրությամբ:

Ը-2. Իրան-Թուրքիա հարաբերություններ.

Իրանի և Թուրքիայի հարաբերություններն ավանդաբար բնութագրվում են որպես մասնակի ռազմավարական ուղղվածություն ունեցող, որտեղ համադրվում են համագործակցությունն ու հակասությունները: Երկուստեք առկա են փոխադարձ շահագրգռվածություններ, անվտանգային հաշվարկների համընկնումներ և, հաճախ նաև հակասություններ՝ պայմանավորված տարածաշրջանային շահերի, դերի և ազդեցության խաչաձևումներով:

Համագործակցության գլխավոր ոլորտն էներգետիկան է: Իրանը շարունակում է մնալ Թուրքիայի կարևոր գազամատակարարը, ինչը հնարավորություն է ընձեռում Անկարային ապահովելու իր էներգետիկ անվտանգությունը՝ զսպելով գների ու մատակարարման տատանումների ռիսկերը: Երկուստեք առկա է նաև տնտեսական համագործակցության ցանկություն՝ ենթակառուցվածքների, առևտրի և

տրանսպորտի ոլորտներում, ինչպես նաև տարածաշրջանային խաղաղության և կայունության պահպանման գործում: Այս համատեղ շահերը հնարավորություն են տալիս երկկողմ հարաբերություններում պահպանել կայունության որոշակի մակարդակ՝ նույնիսկ հակասությունների պայմաններում:

Այնուամենայնիվ, այդ հարաբերություններում առկա են նաև հստակ հակասություններ: Թուրքիան ձգտում է էներգետիկ դիվերսիֆիկացման՝ փորձելով նվազեցնել Իրանական գազից կախվածությունը: Բացի այդ, Մերձավոր Արևելքի կոնֆլիկտային միջավայրում, մասնավորապես՝ Սիրիայում, երկու կողմերի շահերը տարբերվում են, ինչը ստեղծում է լարվածության ներուժ: Այս համատեքստում անհրաժեշտ է հատկապես ընդգծել կողմերի մոտեցումների և շահերի հստակ հակասությունը հարավկովկասյան իրադարձություններում, որտեղ Իրանի ռազմավարական շահերի դիտանկյունից լրջագույն մարտահրավեր է թյուրքական գործոնի ազդեցության և դերակատարության կտրուկ աճը տարածաշրջանում:

2026 թվականի համար կանխատեսելի է, որ երկկողմ հարաբերությունների դինամիկան, մեծ հաշվով, մնալու է նույնը: Էներգետիկ համագործակցությունը կշարունակվի, իսկ անվտանգային համագործակցությունը պայմանավորված կլինի տարածաշրջանում առկա ճգնաժամային խնդիրների զարգացումների ընթացքից: Նման պայմաններում երկկողմ հարաբերությունները կառաջնորդվեն ոչ միայն շահերի համատեղելիությամբ, այլև տարածաշրջանային քաղաքական, ռազմական, անվտանգային և տնտեսական իրադարձությունների հետ կապված առավել զգուշավոր հաշվարկներով:

Թ. Իրան-Հայաստան. գործընկերային սերտացող հարաբերություններ՝ «Զանգեզուրի միջանցքի» հետ կապված մտահոգությունների ֆոնին

2025 թվականին Իրանի և Հայաստանի հարաբերությունները մտան գործընկերային ակտիվ զարգա-

ցող, միևնույն ժամանակ, զգուշորեն վերակողմնորոշվող փուլ: Վաշինգտոնում, օգոստոսի 8-ին Հայաստանի և Ադրբեջանի միջև նախաստորագրված փաստաթուղթն ու դրանից բխող հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հնարավորությունը Թեհրանում ընկալվեց որպես տարածաշրջանում ուժերի հարաբերակցության ռազմավարական փոփոխություն, որն անհրաժեշտ է դիտարկել որպես երկրի տարածաշրջանային շահերին, դերակատարությանը և անվտանգային մթնոլորտին ուղղված լուրջ մարտահրավեր: Թեև պաշտոնական Թեհրանը հայտարարեց, որ այսպես կոչված «միջանցքային» տրամաբանությունը պաշտոնապես դուրս է մղվել և չեզոքացվել է, բայց իրականում շարունակում է խորապես մտահոգված մնալ ցանկացած նախագծով, որը կարող է նվազեցնել իր ազդեցությունը տարածաշրջանում կամ փոխել աշխարհաքաղաքական հավասարակշռությունը Հարավային Կովկասում: Այս իրավիճակում Իրանը Հայաստանի հետ երկխոսությունը կառուցեց առավելապես անվտանգային ու ռազմաքաղաքական հաշվարկներով:

Իրանի մտահոգությունների առանցքում մնում է «Զանգեզուրի միջանցքի» ցանկացած տարբերակ, որը կարող է ծառայել որպես Իրանի շրջանցման մեխանիզմ կամ հնարավոր ճնշում նրա համար կենսական նշանակություն ունեցող «Հյուսիս-հարավ» տրանսցիկ ուղիների շուրջ: Այս կապակցությամբ չպետք է աչքաթող անել այն հանգամանքը, որ Թեհրանը, այնուամենայնիվ, բաց է հաղորդակցության ուղիների հետ կապված այն նախագծերի համար, որոնք ամրապնդում են նաև իր սերտ կապերը Հայաստանի հետ և չեն ներառում արտաքին՝ հատկապես ամերիկյան կամ արտատարածաշրջանային ուժերի ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում: Սակայն ԱՄՆ-ի ակտիվ ներգրավվածությունը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացում, որի կարևորագույն բաղադրիչներից մեկն իր անմիջական մասնակցությամբ հաղորդակցության ուղիների ապաշրջափակումն է, Թեհրանին ստիպում է զգուշանալ՝ վտանգ տեսնելով տարածաշրջանում ամերիկյան ազդեցության խորացման հետ կապված:

Միաժամանակ, Իրանը 2025 թվականին ակտիվացրեց իր դիվանագիտական գործունեությունը Հայաստանում՝ ցույց տալով, որ չի պատրաստվում կորցնել դիրքերը տարածաշրջանում: Հայաստանի ինքնիշխանության ու տարածաշրջանային հավասարակշռության պահպանման անհրաժեշտության մասին երկրի գերագույն հոգևոր առաջնորդի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները փաստեցին, որ Իրանը Հայաստանի հետ համագործակցությունն ընկալում է նաև որպես հակակշիռ՝ թյուրքական տանդեմի տարածաշրջանային ազդեցության կտրուկ աճին: Այս պայմաններում հայ-իրանական հարաբերությունները կառուցվում են «պրագմատիկ գործընկերության» սկզբունքով, որտեղ կողմերի շահերը համընկնում են հատկապես Հայաստանի ինքնիշխանության և Իրանի տարածաշրջանային դերակատարության անխախտելիության տրամաբանության սահմաններում:

Ինչ վերաբերում է 2026 թվականի հեռանկարներին, ապա հայ-իրանական հարաբերությունները տեսականորեն կարող են զարգանալ մի քանի ուղղությամբ: Լավատեսական սցենարը ենթադրում է, որ Երևան-Բաքու բանակցային գործընթացի խորացումը չի վտանգի Հայաստանի ինքնիշխան վերահսկողությունը հաղորդակցության ուղիների նկատմամբ, և Թեհրանը պատրաստ կլինի ընդլայնելու տնտեսական համագործակցությունը հատկապես էներգետիկ, լոգիստիկ և ենթակառուցվածքային ոլորտներում: Բացի այդ, Իրանը կարող է, ըստ անհրաժեշտության, դառնալ ավելի ակտիվ տարածաշրջանային միջնորդ՝ ստեղծելով բազմակողմ գործակցության հարթակներ, որտեղ կունենա որոշիչ ազդեցություն: Վատագույն սցենարը, սակայն, կապված է այն հավանականության հետ, որ զարգացումները կընթանան ադրբեջանա-թուրքական տանդեմին ցանկալի «միջանցքային» տրամաբանության սահմաններում, որտեղ լուրջ դերակատարություն կունենան նաև Արևմուտքն ու Իսրայելը, ինչը կարող է բերել Թեհրան–Երևան հարաբերությունների սառեցման, ուժեղացած սահմանային զգուշավորության և տարածաշրջանային մրցակցության սրման:

Ներկա դրությամբ, Իրան-Հայաստան հարաբերությունների տրամաբանությունը բնորոշվում է վերահսկվող համագործակցությամբ ու փոխադարձ զգուշավորությամբ: Թեհրանն ընդունում է Հայաստանի հետ գործընկերության անհրաժեշտությունը, սակայն չի պատրաստվում հանդուրժել տարածաշրջանային նախագծեր, որոնք կարող են խաթարել իր ռազմավարական դերը: Այդ պատճառով առաջիկա տարում հարաբերությունների զարգացման չափն ու խորությունը կախված են լինելու այն բանից, թե արդյոք Երևանը կկարողանա՞ հավասարակշռել արտաքին դերակատարների ներկայությունը և ազդեցությունը՝ բացառե-

լով Իրանի կենսական անվտանգային ու աշխարհաքաղաքական շահերին ուղղված մարտահրավերները, թե՞ ոչ:

Ժ. Ներքին մարտահրավերները՝ որպես անկայունության աղբյուր

Իրանի ներքաղաքական մարտահրավերները վերջին տարիներին ձևավորվել են երկրի սոցիալ- տնտեսական լրջագույն խնդիրների անմիջական ազդեցությամբ: Բացառություն չէր նաև 2025 թվականը, որի ընթացքում այդ խնդիրներն ավելի ընդգծվեցին 12-օրյա պատերազմի համատեքստում:

Տնտեսության անկումային միտումները, սղաճի անկասելի բարձր մակարդակը և ազգային արժույթի կտրուկ արժեզրկումը շարունակեցին ծանր վիճակի մատնել հասարակության սոցիալ-տնտեսական վիճակը: Ազգային արժույթի արժեզրկումն անմիջականորեն հարվածեց միջին խավի գնողունակությանը՝ խորացնելով անարդարության ընկալումը, և հանրային դժգոհությունն ուղղեց իշխանությունների տնտեսական քաղաքականության դեմ: Այս գործընթացներն ունակ են կտրուկ ուժեղացնելու ներքաղաքական լարվածության ներուժը, քանի որ սոցիալական ճնշման աճը սովորաբար հանգեցնում է քաղաքական դժգոհության սրմանը և հասարակական ակտիվության նոր ձևերի ի հայտ գալուն:

Սոցիալ-տնտեսական մարտահրավերներին զուգահեռ, 2025 թվականին Իրանի համար անվտանգային նշանակության լուրջ խնդրի վերածվեց ջրային ռեսուրսների խորացող ճգնաժամը: Շուրջ մեկ տասնամյակ տևած անընդհատ երաշտը, ջրային ռեսուրսների անարդյունավետ կառավարումը ստեղծել են բնապահպանական ու սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակ, որը հատկապես ծանր հետևանքներ է ունեցել գյուղական համայնքների համար: Ջրի պակասը ոչ միայն խարխլել է երկրի պարենային անվտանգությունը, այլև առաջացրել է ներքին միգրացիայի ալիքներ, որոնք մեծացրել են քաղաքային կենտրոնների վրա սոցիալական ճնշումը:

Այս բոլոր գործոնների համադրումը կարող է զգալի ազդեցություն ունենալ Իրանի ներքաղաքական կայունության վրա: Տնտեսական դժվարությունները, սոցիալական անհավասարությունը և բնապահպանական ճգնաժամերը բազմապատկում են հանրային դժգոհությունը և սահմանափակում են իշխանությունների մանևրելու հնարավորությունները: Եթե այս խնդիրները չլուծվեն համակարգային և երկարաժամկետ մոտեցումներով, ապա երկրի ներսում դժգոհության աճը կարող է վերաճել առավել խորքային քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, որոնք տեսանելի ապագայում կարող են վտանգել երկրի ներքաղաքական կայունությունը:

Եզրակացություն

2025 թվականը Իրանի համար առանձնացավ մարտահրավերների ու հնարավորությունների յուրահատուկ համադրությամբ, որոնք ձևավորեցին երկրի արտաքին և ներքին քաղաքականության նոր լանդշաֆտը: Իրանը պահպանեց իր առանցքային դերակատարությունը Մերձավոր Արևելքում, չնայած Իսրայելի հետ 12-օրյա պատերազմի և Սիրիայի ու Լիբանանի տարածաշրջանային փոփոխությունների ազդեցությանը, ցուցաբերելով ռազմավարական ճկունություն, ռազմական և դիվանագիտական կայունություն: Թեհրանի արձագանքները ցույց տվեցին, որ Իրանը կարող է ոչ միայն զսպել թշնամու ճնշումները, այլև վերաձևել անվտանգային հավասարակշռությունը՝ ամրապնդելով իր ինքնիշխանությունը և տարածաշրջանային ռազմավարական դիրքերը:

Միաժամանակ, Իրանը շարունակեց արդյունավետ կերպով կառուցել իր բազմաբևեռ արտաքին քաղաքականությունը՝ զարգացնելով հարաբերությունները Ռուսաստանի և Չինաստանի հետ, ինչպես նաև ներգրավվելով ՇՀԿ և ԲՐԻԿՍ համագործակցության ձևաչափերում:

Այս ռազմավարությունը Թեհրանին թույլ է տալիս մեղմել արևմտյան ճնշումները և ընդլայնել իր ռազմավարական, էներգետիկ և տեխնոլոգիական հնարավորությունները: Այս համատեքստում Իրանը դառնում է ոչ միայն տարածաշրջանային հավասարակշռության, այլև համաշխարհային բազմաբևեռության ակտիվ դերակատար:

Արևմտյան ուղղությամբ, Իրան–ԱՄՆ և Իրան–ԵՄ հարաբերությունները մնացին լարված և պայմանական, ինչն ընդգծեց Թեհրանի մոտեցումը՝ արտաքին ճնշումներին համարժեք և համաչափ պատասխանել և պահպանել երկրի ինքնիշխան ռազմավարությունը: Հարավային Կովկասում և Թուրքիա–Իրան հարաբերություններում Թեհրանը հանդես եկավ հաշվարկված ու պրագմատիկ դիրքերից՝ պաշտպանելով տարածաշրջանային ազդեցության իր ոլորտները և ընդգծված վերապահումով մոտենալով ամերիկյան միջնորդությամբ սկսված հայադրբեջանական զարգացումներին: Միևնույն ժամանակ ներքաղաքական ոլորտում սոցիալ-տնտեսական մարտահրավերները, ինչպիսիք են ազգային արժույթի կտրուկ արժեզրկումը, անսանձ սղաճը և ջրային ռեսուրսների հետ կապված սուր ճգնաժամը, մնացին որպես խորքային ռիսկեր, որոնք կարող են բացասաբար ազդել երկրի կայունության վրա:

Ընդհանուր առմամբ, 2025 թվականը Իրանի համար բնութագրվում է որպես ներքին վերակազմավորման և ռազմավարական ինքնիշխանության ամրապնդման տարի, որտեղ երկրի արտաքին դիվանագիտական ճկունությունը և ներքին կառավարման մարտավարությունը դարձան տարածաշրջանային ու գլոբալ մարտահրավերներին դիմակայելու հիմքը: Իրանը ցույց տվեց, որ կարող է պահպանել ռազմավարական հենասյուները, ձևավորել նոր անվտանգային իրավիճակ և ակտիվորեն մասնակցել բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման՝ միաժամանակ ներքին խոցելիությունը պահպանելով կառավարելի և վերահսկելի մակարդակում՝ հավասարակշռված և հաշվարկված քաղաքականության միջոցով:

Միջին Արեւելեան իրադարձութիւնները՝ Լիբանանէն դիտուած

Շահան Գանտահարեան
«Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր

Միջին Արեւելեան տարածաշրջանին մէջ արձանագրուող իրադարձութիւններուն ընդհանուր միտումները տեսանելի ըլլալով հանդերձ, անորոշ հանգրուաններ կը պարզեն: Այս յօդուածը, լիբանանեան դիտանկիւնները նկատի առած է: Պէյրութը նոր իրավիճակի մէջ յայտնուած է, յատկապէս հանրապետութեան նախագահի ընտրութենէն, վարչապետի նշանակումէն եւ կառավարութեան կազմութենէն ետք: Այս նոր իրավիճակը չէ հաստատուած տակաւին՝ ոչ միայն ներլիբանանեան անհամաձայնութիւններու պատճառով: Իսրայէլ կը շարունակէ իր յարձակումները, թէկուզ թիրախային եւ սահմանափակ եղանակներով: Իսրայէլի իրականացուցած գործողութիւնները Հըզպալլայի կեդրոններու եւ պատասխանատուներու դէմ ընդհանուր արշաւի մէկ դրուագն են: Այդ շարքին կը ներառուին նաեւ պաղեստինեան գաղթականներն ու ճշդուած անհատական թիրախներ: Հրադադարը Իսրայէլի կողմէ միակողմանի կը խախտի:

Դատապարտանքի դիրքորոշումներ չկան ընդհանրապէս: Յատկանշական է Փարիզի յայտարարութիւնը: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան բանբերը յայտնած է, որ Փարիզ մտահոգ է հարաւային Լիբանանի վրայ իսրայէլեան յարձակումներու աշխուժացումով: Դատապարտելէ ետք իսրայէլեան յարձակումները, որոնք հարաւային Լիբանանի մէջ քաղաքացիներ կը սպաննեն, ան յայտնած է, որ իր պետութեան դիրքորոշումը այն է, որ պէտք է յարգել 27 նոյեմբեր 2024-ին կնքուած զինադադարի համաձայնութիւնը: Հետաքրքրական է ածանցեալ բաժինը: Ըստ ֆրանսացի դիւանագէտին, Ֆրանսան մեծ մտահոգութեամբ կը հետեւի Կոլանի բարձունքին վրայ արձանագրուող զարգացումներուն, ինչպէս նաեւ իսրայէլեան բանակի հեռացման եւ Սուրիոյ գերիշխանութեան ու հողային ամբողջականութեան յարգման կոչ կ՛ուղղէ: Այստեղ ուշագրաւը այն է, որ դատապարտանքը հասցէական է. ապա, իսրայէլեան կողմը կը մեղադրուի համաձայնուած հրադադարը խախտելու յանցանքով: Եւ երրորդը՝ այն, որ ակնարկ կ՛ըլլայ Կոլանին, իսրայէլեան ուժերու հեռացումի պահանջով եւ Սուրիոյ տարածքային ամբողջականութեան յարգումի հրամայականին շեշտումով:

Արտաքին գործոց նախարարութեան այս դատապարտումէն ետք Ֆրանսայի նախագահը գնահատական տուած էր Լիբանանի հանրապետութեան նախագահին փոխանցած ուղերձին, Լիբանանի անկախութեան 82-րդ տարեդարձին առիթով: Այս անգամ, սակայն, ուղղութիւնը այլ էր: «Կը կարծեմ, թէ նախագահ Առն չափազանց կարեւոր ուղերձ մը յղեց, եւ կ՛ուզեմ ըսել, թէ ան նաեւ մեր տեսակէտը արտայայտեց, այսինքն՝ Հըզպալլայի հետ խիստ ու ազդու կերպով գործելու եւ գործադրելու մեր ծրագիրը, որ յստակօրէն կը ձգտի հարաւային Լիբանանի մէջ լիբանանեան գերիշխանութեան վերականգնման»: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնն ու նախագահը առ երեւոյթ իրար կը հակասեն, սակայն ըստ էութեան զիրար կ՛ամբողջացնեն: Այս կերպ, պաշտօնական Փարիզը թէ՛ քննադատած կ՛ըլլայ իսրայէլեան յարձակումներն ու հրադադարի խախտումները, թէ՛ ալ պահանջած կ՛ըլլայ, որ լիբանանեան կառավարութիւնը խիստ եւ ազդու ձեւով կիրարկէ նաեւ իրենց կողմէ մշակուած ծրագիրը, որ կ՛առաջադրէ Լիբանանի գերիշխանութեան վերականգնումը: Լիբանանի գերիշխանութեան վերականգնումը, սակայն, նաեւ տարածքներու ազատագրումով կ՛ըլլայ, այս պարագային իսրայէլեան ուժերու հեռացումով լիբանանապատկան տարածքներէն: Այս հասկացողութիւնը բնականաբար նոյնքան պարզ է պաշտօնական Փարիզին համար, որ զայն իբրեւ սկզբունք առաջադրած է Սուրիոյ պարագային, երբ արտաքին գործոց նախարարը յայտնած էր, որ իր երկիրը մեծ մտահոգութեամբ կը հետեւի Կոլանի բարձունքին վրայ արձանագրուող զարգացումներուն, եւ իսրայէլեան բանակի հեռացման եւ Սուրիոյ գերիշխանութեան ու հողային ամբողջականութեան յարգման կոչ կ՛ուղղէ:

Ըստ էութեան, մեծ մտահոգութիւն է նաեւ Իսրայէլի կողմէ լիբանանեան տարածքներու բռնագրաւումը, որ խախտած է Լիբանանի տարածքային ամբողջա-

կանութիւնը եւ ատով իսկ սպառնացած անոր գերիշխանութեան: Այդ սկզբունքները ընտրովի չեն կրնար ըլլալ: Առաջադրելի են եւ կիրարկելի բոլոր երկիրներուն համար:

Լիբանանի մէջ յառաջիկայ զարգացումներուն մասին կան հակոտնեայ տեղեկութիւններ: Լրատուական հաղորդագրութիւնները երբեմն պաշտօնական, այլ պահերու՝ անպաշտօն, կ՛ուզէին փոխանցել, որ զէնքի մենաշնորհումի պայմանաժամի օղակը սկսած է սեղմուիլ: Թել Աւիւ նոյնիսկ պայմանաժամ կը ճշդէր Նոր տարին եւ կը յայտնէր, որ եթէ զինաթափումը մինչ այդ տեղի չունենայ, ապա Իսրայէլ պիտի դիմէ բռնի ուժի կիրարկումին:

Զէնքի մենաշնորհումը չիրականանալու պարագային նոյնը կը հաստատէր Ուաշինկթընը: Բոլոր ակնկալութիւնները լիբանանեան կառավարութենէն են՝ քաջատեղեակ ըլլալով, որ խնդիրը շատ աւելի տարողունակ միջպետական յարաբերութիւններով կը լուծուի:

Այս բոլորը օղակը սեղմելու կը նպաստեն, ճնշումները զօրացնելու եւ ենթադրեալ ռազմական յարձակումները արդարացնելու: Առաջադրուածը հարաւային շրջանին մէջ յատուկ անվտանգային գօտի ստեղծելն է: Այդ յատուկ գօտին նախ առաջադրուած տարածքը անբնակելի եւ անօգտագործելի դարձնելն է: Բացառելը՝ ժողովուրդի վերադարձը: Հետեւաբար այս տրամաբանութեամբ ալ լիբանանեան կողմին պարտաւորութիւնները չեն աւարտիր Հըզպալլայի նահանջով, զինաթափումով եւ լիբանանեան բանակի տեղաբաշխումով ու նոր դիրքաւորումներով: Այդ գօտիի ստեղծումը առաջադրանք է յայտնաբար, որմէ պիտի չուզէ հրաժարիլ Իսրայէլ:

Այս առումով լիբանանեան մամուլի հրապարակած նիւթերը, որոնց համաձայն՝ ՄԱԿ-ի մարդասիրական բաժանմունքը զգուշացուցած է գաղթականական նոր ալիքի բարձրացումէն, կը համընկնի այս առաջադրանքին հետ: Ըստ այդ հրապարակուած նիւթերուն, ՄԱԿ-ի համապատասխան բաժանմունքը կը խօսի հարաւի շրջանէն, Պեքայի հովիտէն եւ Պէյրութի Հարաւային արուարձաններէն գաղթականական նոր զանգուածի տեղահանման մասին:

Հակոտնեայ բաժինը հետեւեալն է: Իսրայէլի վարչապետին գրասենեակը կը հաղորդէր, որ յատուկ աշխատանքային խումբ պիտի ուղարկուի լիբանանցի կառավարական պաշտօնատարներու հետ հանդիպման համար՝ աւելցնելով, որ ատիկա երկու կողմերուն միջեւ տնտեսական յարաբերութիւններու հաստատման հիմք պիտի ծառայէ: Այս լուրին հետեւողը կրնայ ենթադրել, որ կողմերը արդէն իսկ հաստատած են դիւանագիտական յարաբերութիւններ եւ հիմա կ՛անցնին տնտեսական համագործակցութեան: Կայ տեղեկատուութիւն միջնորդաւորուած բանակցութիւններու մեկնարկի մասին:

Յաւելեալ լուրեր այս մասին լոյս կը սփռեն այլ տեղ մթագնելով բուն գործընթացներուն տեսանելիութիւնը: Ամերիկեան կայքեր կը խօսին ներդրումային գօտիի ծրագիրի մասին հարաւային շրջանին մէջ.

տնտեսական գօտի, ուր հիմնականին մէջ շինարարական ծրագիրներ պիտի իրականացուին: Այդ ծրագիրները կը կապուին Միացեալ Նահանգներու նախագահին անուան հետ:

Ներդրումային-տնտեսական, հետեւաբար վերաշինութեան հետ բոլոր կապուած ծրագիրները պայմանական են: Պայմանը զէնքի մենաշնորհումն է, դիրքերու լքումը եւ անոր հետ կապուած ածանցեալ խնդիրները:

Այս հակասական լուրերը զիրար ամբողջացնող կ՛ըլլան, եթէ քաղաքականօրէն կարդանք պաշտօնական թէ անպաշտօն աղբիւրներու հրապարակած նիւթերը: Ռազմական գործողութիւններով թէ տնտեսական ներդրումներով առաջադրանքը ճշդուած անվտանգային գօտին ձեւաւորելն է: Տնտեսական գօտին, եթէ պիտի կայանայ, ենթադրաբար ապահովական գօտիէն դուրս պիտի ըլլայ: Իսկ այդ գօտին, ինչ տեսք ալ ունենայ, ըստ հրապարակուած ծրագիրներուն կ՛առաջադրէ բացառել ժողովուրդի վերադարձը: Այլ խօսքով՝ նոր շինարարական ծրագիրները այդ գօտիէն դուրս պիտի ըլլան:

Խոստացուած աջակցութիւնները կը շարունակեն պայմանական մնալ: Տոհայի ֆորումին առիթով Քաթարի ղեկավարին կատարած յայտարարութիւններուն այն բաժինը, որ դէպի Լիբանան տրամադրուելիք աջակցութեան ծրագիրներու նոր շարք մը պիտի յայտարարուի, ուշադրութիւն կը գրաւէ:

Նախ պէտք է արձանագրել Քաթարի ունեցած դերակատարութիւնը շրջանին մէջ: Քաթարը Ծոցի երկիրներուն մէջ ոչ միայն ներարաբական, այլ նաեւ, վերջին շրջանին, Համաս-Իսրայէլ միջնորդաւորման, անուղղակի բանակցութիւններու վարման երաշխաւոր եւ միջնորդ պետութիւն է:

Դասական մօտեցումը այն է, որ Ծոցի երկիրներուն առանցքային պետութիւնը Սէուտական Արաբիան

Գոլանի բարձունքը

է, մնացեալը՝ արբանեակ պետութիւններ են. որոնց շարքին՝ Քաթարը:

Սակայն կը յիշենք այն ժամանակահատուածը, երբ Տոհան Թեհրանի հետ բնականոն յարաբերութիւնները շարունակեց, երբ Ռիատը ամբողջական խափանումի քաղաքականութիւն որդեգրած էր Իրանի դէմ. այդ պատճառով ալ սրուեցան Տոհայի եւ Ռիատի յարաբերութիւնները: Այս կը նշանակէր, որ չէզոքութեան պահպանման, միջնորդական առաքելութիւն իրականացնելու գործառոյթի պահպանման համար Տոհան կը վտանգէր իր յարաբերութիւնները նոյնիսկ Սէուտական Արաբիոյ հետ:

Չենք խորանար Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի հետ Տոհայի կիրարկած քաղաքականութեան ծալքերուն մէջ, յատկապէս եւրոպական երկիրներու փոխատուութիւններ յատկացնելու առումով:

Քաթարի միջնորդի կարգավիճակը հարուած ստացաւ, երբ Համասի ներկայացուցիչներ Տոհայի մէջ թիրախ դարձան իսրայէլեան յարձակումներու: Իսրայէլ կը խախտէր խաղի կանոնները եւ կը հարուածէր Քաթարի տարածքներուն:

Քաթար դեր վերստանձնած է Կազայի հարցի լուծման բանակցութիւններուն եւ ընդհանուր գործընթացին մէջ: Այստեղ եւս շինարարութիւններու ծրագիրներ կան, որոնց մէջ ներգրաւուած են տարբեր երկիրներ, որոնց շարքին նաեւ Քաթարը:

Հիմա, նման ծրագիրներու կամ աջակցութիւններու մասին. այս անգամ դէպի Լիբանան կը խօսի Տոհայի ղեկավարը: Քաթարի իշխանը ընդգծած է, որ Քաթար կը շարունակէ Լիբանանին քաղաքական եւ տնտեսական աջակցութիւն ցուցաբերել՝ նշելով, որ Տոհա շուտով Լիբանանի աջակցութեան յատկացուած նոր ծրագիրներու շարք մը պիտի յայտարարէ:

«Կը շարունակէ»-ն իմաստ ունի այստեղ. ըսել կ՛ուզուի, որ աջակցութիւններ արդէն կը տրամադրուին Քաթարի կողմէ: Երկրորդ դիտարժան կէտը այն է, որ չի յստակացուիր նոր ծրագիրներու շարքի յայտարարութեան թուականը: Յստակ չէ նաեւ աջակցութիւններու տարողութիւնը:

Աջակցութիւններու խոստումներու շարքը ճնշամիջոցի բնոյթ սկսած է ունենալ: Աջակցութիւններու նոր շարք պիտի յայտարարուի. ըսել կ՛ուզուի, որ ծրագիրը պատրաստ է, սակայն կը սպասուի Լիբանանի մէջ իրադարձութիւններու կատարումին:

Զինաթափման օրակարգին համար մինչեւ Ամանոր պայմանաժամին կը զուգադիպի նաեւ Ուաշինկթընի մէջ Միացեալ Նահանգներու նախագահին եւ Իսրայէլի վարչապետին միջեւ ճշդուած հանդիպումը՝ դեկտեմբեր 30-ին: Սպառնալիքը այն է, որ եթէ առաջադրուած զէնքի մենաշնորհումի օրակարգը չկատարուի, ապա Իսրայէլին կանաչ լոյս կը տրուի լայնածաւալ յարձակումներ գործելու:

Կը թուի, թէ Իսրայէլէն պահանջներ չկան: Յարձակումները դադրեցնելու, իր կողմէ վերահսկուած լիբանանեան տարածքներէն կամ ռազմագիտական նշանակութիւն ունեցող դիրքերէն հեռանալու կամ անօդաչու սարքերու շրջագայութիւնը լիբանանեան օդային տարածքներուն վրայ դադրեցնելու:

Պահանջները կեդրոնացած են զինաթափումին վրայ՝ անորոշ ձգելով իսրայէլեան յարձակումներու կամ գրաւեալ տարածքներու ճակատագիրը:

Ճշդուած պայմանաժամի ուղղութեամբ կայ նաեւ լրատուական ճնշում: Իսրայէլեան պետական ձայնասփիւռի կայանը կը հաղորդէր, որ իսրայէլեան բանակը անցեալ շաբաթներուն Լիբանանի մէջ Հըզպալլայի պատկանող թիրախներու վրայ լայնածաւալ յարձակումի ծրագիր մը պատրաստած է: Նոյն տեղեկութիւնը կը հաղորդէր իսրայէլեան պատկերասփիւռի կայանը՝աւելցնելով, որ իսրայէլեան բանակը Հըզպալլայի վրայ յարձակումներուն մէջ մագլցման ծրագիրը ներկայացուցած է քաղաքական իշխանութեան:

Իսրայէլեան պետական ձայնասփիւռի կայանը հաղորդած էր նաեւ այն, որ Իսրայէլի համբերութիւնը կը սպառի, եւ թէ Լիբանանին յղուած է պատգամ մը, որուն մէջ կ՛ըսուի, որ եթէ Հըզպալլայի դէմ չշարժիք, յարձակումներուն ծիրը պիտի ընդլայնուի:

Այս կերպ, Թել Աւիւ պարզ կը դարձնէ, որ ռազմական լայնածաւալ գործողութիւններու ծրագիրը պատրաստ է. որոշումի կը սպասուի: Պատասխանատուութիւնը Լիբանանի կառավարութեան ուսերուն կը դրուի: Կը սպասուի, որ լիբանանեան կառավարութիւնը Հըզպալլային պարտադրէ զէնքերու յանձնումը:

Աւելորդ է այս վերջին բաժինը մեկնաբանելը: Բոլորին համար պարզ է, որ միայն լիբանանեան կա-

ռավարութենէն ակնկալելը կնշնակէ որ հարցին հանգուցալուծումը առնուազն իրատեսական չէ: Այս կերպ, իսրայէլեան կողմը կը փորձէ ճեղքեր յառաջացնել լիբանանեան բանակի եւ Հըզպալլայի միջեւ:

Այս ճնշումները տեղեկատուական դաշտէն անցում կատարած են քաղաքական-պետական դաշտ: Լիբանանի արտաքին գործոց նախարարը կը յայտնէր, որ իսրայէլեան զինուորական գործողութիւններու պատրաստուելուն մասին արաբական եւ միջազգային զգուշացումներ կան: Աւելին, ան ընդգծած էր, որ այս յայտարարութիւնը ոչ թէ անձնական տեսակէտ է կամ վերլուծում, այլ փոխանցուած տեղեկութիւն: Ուրեմն, ճնշումը տեղեկատուական եւ վերլուծական դաշտերէն անցած է զգուշացումի եւ տեղեկութեան փոխանցումի փուլին:

Կը տարուինք մտածելու, որ ճնշումի աստիճանական մագլցում կ՚ենթադրեն այս բոլորը: Այս բոլորին դիմաց, Հըզպալլան աւելի կը խստացնէ իր դիրքորոշումը եւ իր ընդհանուր քարտուղարին միջոցով կը յայտարարէ, որ մտադիր չեն զէնքը յանձնել: Մանաւանդ երբ այս պահանջները կ՚ըլլան սպառնալիքներով, թէ՛ յայտարարողական, թէ՛ ռազմական յարձակումներու տեսքով:

Ճնշումները կրնան սաստկանալ: Չի նշանակեր անշուշտ, որ տեղեկատուականէն քաղաքական եւ ապա ռազմական դաշտ պիտի անցնին գործողութիւնները: Թէեւ ռազմական յարձակումները կը շարունակուին: Խնդիրը լայնածաւալի մասին է, կամ ենթադրեալ ներխուժումի, առաջադրուած անվտանգութեան գօտին ստեղծելու համար:

Միաժամանակ տարբեր փուլերու նման դիպաշարի հետեւածները կրնան ենթադրել, որ բանակցային գործընթացէն առաջ կը թէժանան սպառնալիքները. նոյնիսկ յարձակումները:

Այս ընդհանուր ելեւէջային գործընթացներուն մէջ նկատելի է Իսրայէլ-Անգարա յարաբերութիւններու լարումը: Սուրիական տարածքներու վրայ շահերու հակասութիւնը, Թուրքիոյ ինքնառաջադրուիլը Կազայի մէջ կայունացման ուժերուն մաս կազմելուն եւ անոր դիմաց Իսրայէլի մերժումը կը խօսին Անգարայի աշխուժացման քայլերուն մասին:

Իրանի դերի վերասահմանման ընդհանուր շրջածիրին մէջ պէտք է տեսնել Անգարայի աշխուժացումը: Սէուտական Արաբիոյ հետ մրցակից ըլլալով հանդերձ Հըզպալլա-Ռիատ բանակցութիւններուն միջնորդ եւ երաշխաւոր ըլլալը: Այլ խօսքով Իրանի դերի վերաիմաստաւորման մէջ դեր ստանձնելու միտումները: Ահա աստեղ եւս հայկական ոսպնեակը պիտի աշխատի նկատելու համար նոր քարտէսին մէջ Անգարայի դերը եւ Իսրայէլի եւ Ազրպէյճանի համագործակցութեան խորացումը:

Պաշտօնական Երեւանը, կը թուի, որ չունի հայեցակարգ այս բոլոր խիստ կարեւոր իրադարձութիւններուն, վերագծուող քարտէսներուն նկատմամբ: Ուաշինկթընի ներկայացուցիչները չէին վարանած Աբրահամեան դաշինքին Երեւանին միանալու մասին խօսելու:

Եթէ Միջին Արեւելքէն ետք հարաւային Կովկասն է թիրախային միջավայրը, ապա այս բոլոր գործողութիւններուն զուգահեռ ուրուագիծերը տեսնելու խնդիր կայ եւ՝ ըստ այնմ քաղաքականութիւն վարելու: Երեւանի մօտ ցաւօք, չեն երեւար այդ նախադրեալները:

Յամենայնդէպս,Պէյրութէն դիտուած ամողջ տարածաշրջանի ազդեցութեան գօտիներու վերաբաշխման գործընթացը պիտի շարունակուի: Անոր մանրապատկերը Լիբանանի մէջ է, որ կը գրանցուի:

Ցնցումներ կը սպասուին, մինչ գլխաւոր խաղցողներու միջեւ համաձայնութիւնները կ՚ուշանան: Հայ քաղաքական միտքը թէ՛ պետական եւ թէ՛ այս պարագային համայնքային շահերու համատեղումով նուազագոյն վնասով դուրս գալու խնդիր պէտք է դնէ իր առջեւ անյապաղ: Իրադարձութիւնները արագացած են եւ հետեւանքներով լեցուն:

Շանհայի համագործակցության կազմակերպություն

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Աշխարհում ակներև է բազմաբևեռ աշխարհակարգի կայացումը. էներգետիկ ռեսուրսներով հարուստ, տնտեսապես, ֆինանսապես հզոր ներուժ ունեցող երկրները (ՌԴ, ՉԺՀ, Հնդկաստան, Իրան և այլն), միավորումները, տարածաշրջանային կազմակերպությունները (ԲՐԻԿՍ, ՇՀԿ, ԱՊՀ, ԵԱՏՄ, ԱՍԵԱՆ և այլն) ընդլայնում են իրենց ազդեցության գոտիները, ներկայանում են համաշխարհային կառավարման իրենց տեսլականով:

Շանհայի համագործակցության կազմակերպության 25-րդ նիստում[1] Չինաստանի նախագահ Սի Ծինփինը ներկայացրել է համաշխարհային կառավարման տեսլականը՝ համատեղ խորհրդակցությունների, համատեղ զարգացման և օգուտի ոգով, իրականացնելով իսկական բազմակողմանիություն, համագործակցության խորացում ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցություն միջազգային և տարածաշրջանային օրակարգին, միջազգային արդարադատության պաշտպանություն, հանդուրժողականություն: Շեշտելով այն, որ դեմ են գերիշխանությանը, ուժային քաղաքականությանը և արժանի դեր են խաղում մոլորակի վրա խաղաղության և զարգացման պահպանման գործում:

Ներկայացնենք, որ Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) ստեղծման մասին հռչակագիրն[2] ընդունվել է 2001-ի հունիսի 15-ին Շանհայում՝ Ղազախստանի Հանրապետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության ղեկավարների հանդիպման ժամանակ: Հնդկաստանի Հանրապետությունը և Պակիստանի Իսլամական Հանրապետությունը կազմակերպության լիիրավ անդամներ են դարձել 2017-ին, Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ 2023-ին, իսկ Բելառուսի Հանրապետությունը՝ 2024-ին:

ՇՀԿ հիմնադիր փաստաթուղթը՝ կանոնադրությունը, ընդունվել է 2002-ի հունիսի 7-ին, ուժի մեջ է մտել 2003-ի սեպտեմբերի 19-ին: Փաստաթուղթը սահմանում է կազմակերպության նպատակները, սկզբունքները, կառուցվածքը և գործունեության հիմնական ոլորտները:

Համաձայն ՇՀԿ կանոնադրության՝ անդամ պետությունները հավատարիմ են հետևյալ սկզբունքներին՝ պետությունների ինքնիշխանությանը, անկախությանը և տարածքային ամբողջականությանը, սահմանների անձեռնմխելիությանը, ներքին գործերին չմիջամտելուն, ինչպես նաև միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառմանը: Ինչպես նաև անդամ պետությունների միջև անհամաձայնությունների խաղաղ կարգավորմանը: ՇՀԿ-ի

գործունեությունը ուղղված չէ այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների դեմ: ՇՀԿ-ի շահերի դեմ ուղղված ցանկացած անօրինական գործողություններ պետք է կանխարգելվեն և այլն:[3]

ՇՀԿ շրջանակներում համագործակցության հիմնական ոլորտներն են՝ տարածաշրջանում խաղաղության պահպանումը, անվտանգության և վստահության ամրապնդումը, արտաքին քաղաքականության ընդհանուր հարցերի շուրջ ընդհանուր հիմքերի որոնումը, միջազգային հանցավոր գործունեության այլ ձևերի և անօրինական միգրացիայի դեմ համատեղ պայքարի միջոցառումների իրականացումը, զինաթափման և զենքի վերահսկողության ջանքերի համակարգումը, տարածաշրջանային տնտեսական համագործակցության տարբեր ձևերին աջակցությունը և խրախուսումը, առևտրի և ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծումը, տրանսպորտային և կապի ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործումը, անդամ պետությունների տարանցիկ ներուժի բարելավումը և էներգետիկ համակարգերի զարգացումը:[4]

Անդրադառնանք ՇՀԿ կանոնադրության որոշ հոդվածների.

Համաձայն հոդված 12-ի, ՇՀԿ-ն ունի սեփական բյուջե, որը ձևավորվում և իրականացվում է անդամ պետությունների միջև կնքված հատուկ համաձայնագրի համաձայն:[5]

Համաձայն հոդված 13-ի, ՇՀԿ-ն բաց է տարածաշրջանի այլ պետությունների ընդունման համար,

որոնք պարտավորվում են հետևել այս կանոնադրության նպատակներին և սկզբունքներին, ինչպես նաև ՇՀԿ շրջանակներում ընդունված այլ միջազգային պայմանագրերի և փաստաթղթերի դրույթներին:

Համաձայն հոդված 15-ի, ՇՀԿ-ն, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, օգտվում է իրավաբանական անձի իրավունքներից և կարող է կնքել պայմանագրեր, ձեռք բերել և տնօրինել շարժական և անշարժ գույք, հայց ներկայացնել դատարան, բացել հաշիվներ, իրականացնել դրամական գործարքներ:

Համաձայն հոդված 26-ի, սույն կանոնադրությունը, ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն, գրանցվում է Միավորված Ազգերի Կազմակերպության քարտուղարությունում:

Կարևորենք այն, որ 2025-ի օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը ՉԺՀ Թիենծին քաղաքում տեղի ունեցած ՇՀԿ անդամ պետությունների ղեկավարների խորհրդի 25-րդ նիստում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր,[6] այդ թվում՝ Թիենծինի հռչակագիրը[7] և ՇՀԿ-ի զարգացման ռազմավարությունը մինչև 2035-ը:

ՇՀԿ պետությունները հաստատում են, որ Կենտրոնական Ասիան ՇՀԿ-ի միջուկն է և աջակցում են Կենտրոնական Ասիայի պետություններին՝ իրենց երկրներում և տարածաշրջանում խաղաղություն, անվտանգություն և կայունություն ապահովելու համար:

Այս առումով նրանք կարևորում են «Կենտրոնական Ասիա՝ ՇՀԿ-ի միջուկ. 25 տարի համագործակցություն համատեղ զարգացման համատեքստում» միջազգային համաժողովի անցկացումը:[8] Հռչակագրում առանձնահատուկ նշանավորվում է 2025-ը, որպես Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակի և ՄԱԿ-ի հիմնադրման 80-ամյակի հոբելյան:

Անդամ պետությունները հաստատում են իրենց հանձնառությունը՝ հավասար և լիարժեք պահպանելու ՄԱԿ-ի կանոնադրության[9] և ՇՀԿ կանոնադրության նպատակներն ու սկզբունքները:

Փաստաթղթում կարևորվում է այն տեսակետը, որ անհրաժեշտ է ՄԱԿ-ը հարմարեցնել ժամանակակից քաղաքական և տնտեսական իրողություններին, իրականացնել անհրաժեշտ բարեփոխումներ:

Անդամ պետություններն աջակցում են միջազգային կայուն խաղաղությանը և կոչ են անում համատեղ գործողություններ ձեռնարկել անվտանգության մարտահրավերներին ու սպառնալիքներին դիմակայելու համար: Նրանք վերահաստատում են իրենց վճռականությունը՝ շարունակելու համատեղ պայքարն ահաբեկչության, անջատողականության և ծայրահեղականության, թմրամիջոցների անօրինական շրջանառության, զենքի մաքսանենգության և միջազգային կազմակերպված հանցավորության այլ ձևերի դեմ: Բարձր է գնահատվում ՇՀԿ տարածաշրջանային հակաահաբեկչական կառույցի դերը:

Ընդգծվում է այն, որ Մերձավոր Արևելքում խաղաղության և կայունության միակ հնարավոր ուղին պաղեստինյան հարցի համապարփակ և արդարացի կարգավորումն է:

Վերահաստատելով իրենց խորը մտահոգությունը պաղեստինա-իսրայելական հակամարտության շարունակական սրման հարցում, անդամ պետությունները խստորեն դատապարտում են Գազայի հատվածում աղետալի իրավիճակը:



Անդամ պետությունները խստորեն դատապարտում են Իսրայել պետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից 2025-ի հունիսին Իրանի Իսլամական Հանրապետության դեմ ուղղված ռազմական հարվածները: Քաղաքացիական թիրախների, այդ թվում՝ միջուկային էներգիայի ենթակառուցվածքների դեմ նման ագրեսիվ գործողությունները միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության կոպիտ խախտում են, խաթարում են տարածաշրջանային և միջազգային անվտանգությունը:

Այդ առումով նրանք վերահաստատում են իրենց հանձնառությունը ծագած խնդիրների խաղաղ կարգավորմանն ուղղված դիվանագիտական նախաձեռնություններին:

ՇՀԿ անդամ պետությունները հայտնում են իրենց աջակցությունը Աֆղանստանին՝ որպես անկախ, չեզոք և խաղաղ պետություն՝ զերծ ահաբեկչությունից, պատերազմից և թմրանյութերից:

Անդամ պետությունները պատրաստակամ են զարգացնելու արդյունավետ համագործակցություն իրենց պաշտպանության գերատեսչությունների միջև, նշում են ՇՀԿ անդամ պետությունների միջև ռազմական ոլորտում համաձայնագիր պատրաստելու և ստորագրելու առաջարկը:[10]

Նրանք վերահաստատում են, որ առանձին երկրների կամ պետությունների խմբերի կողմից գլոբալ հակահրթիռային պաշտպանության համակարգերի միակողմանի և անսահմանափակ կուտակումը բացասաբար է անդրադառնում միջազգային անվտանգության և կայունության վրա, նաև անընդունելի են համարում սեփական անվտանգությունն ապահովելու փորձերը՝ այլ պետությունների անվտանգության հաշվին:

Համաձայն հռչակագրի՝ միջուկային զենքի չտարածման մասին 1968-ի հուլիսի 1-ի պայմանագրի, անդամ պետությունները պաշտպանում են պայմանագրի դրույթների պահպանումը, աջակցում են միջուկային զինաթափման գլոբալ գործընթացի և չտարածման ռեժիմի ամրապնդմանը, ընդգծում են ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման անհրաժեշտությունը:

Անդամ պետություններն աջակցում են տիեզերքը ցանկացած տեսակի զենքից զերծ պահելուն և ընդգծում միջազգային, իրավաբանորեն պարտավորեցնող փաստաթուղթ կնքելու անհրաժեշտությունը, որը կապահովի հուսալի երաշխիքներ՝ տիեզերքում սպառազինությունների մրցավազքը կանխելու համար:

Այս փաստաթղթում ՇՀԿ երկրները կոչ են անում լիովին պահպանել քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման և կիրառման արգելման և դրա ոչնչացման կոնվենցիան, որպես զինաթափման և չտարածման կարևոր գործիք: Միաժամանակ նշվում է 1972-ի բակտերիոլոգիական (կենսաբանական) և տոքսինային զենքի մշակման, արտադրության և պաշարների կուտակման արգելման և դրանց ոչնչացման մասին կոնվենցիայի կարևորությունը:

ՇՀԿ երկրները մտահոգություն են հայտնում տեղեկատվական անվտանգության ռիսկերի աճի վերաբերյալ, կտրականապես դեմ են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ռազմականացմանը: Նրանք ընդգծում են ՄԱԿ-ի առանցքային դերը տեղեկատվական տարածքում սպառնալիքների դեմ պայքարում: Կոչ են անում ջանքեր գործադրել ՄԱԿ-ի կիբեռհանցագործության դեմ կոնվենցիան ստորագրելու և պայքարի մեխանիզմները կատարելագործելու ուղղությամբ:[11]

Փաստաթղթում կարևորվում է տարածաշրջանային երկրների, միջազգային կազմակերպությունների և բազմակողմ միավորումների ներուժի օգտագործումը Եվրասիայում՝ լայն, բաց, փոխշահավետ և իրավահավասար համագործակցության տարածք ստեղծելու համար, միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան, ազգային շահերով պայմանավորված:

Նրանք ընդգծում են Մեծ Եվրասիական գործընկերություն ստեղծելու նախաձեռնությունը և հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ զարգացնելու երկխոսությունը ՇՀԿ-ի, ԵԱՏՄ-ի, Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիայի և այլ շահագրգիռ պետությունների ու բազմակողմ միավորումների միջև: Ընդգծվում է նաև ՇՀԿ տարածաշրջանի դերը համաշխարհային տնտեսության վերականգնման, համաշխարհային արտադրության և մատակարարման շղթաների կայունության պահպանման և հետագա կայուն զարգացումն ապահովելու գործում:

Անդամ պետություններն ընդգծում են համագործակցությունը ֆինանսական ոլորտում. կարևորում են փոխադարձ հաշվարկներում ազգային արժույթների աստիճանական ավելացման ճանապարհային քարտեզի գործադրումը, շեշտում են միջբանկային միավորման (МБО) կարևոր դերը:

Նրանք նպատակ ունեն խթանելու համագործակցությունը էլեկտրոնային առևտրի ոլորտում, զարգացնել թվային առևտրի ենթակառուցվածքները:

Հաստատվել է ՇՀԿ անդամ պետությունների էներգետիկ համագործակցության զարգացման ռազմավարության իրականացման Ճանապարհային քարտեզը մինչև 2030-ը:[12]

ՇՀԿ երկրներն աջակցում են էներգետիկ ոլորտում փոխշահավետ համագործակցության ընդլայնմանը, էներգիայի արտադրության, մատակարարման շղթաների դիմադրողականության բարելավմանը և հանձնառու են խթանելու համաշխարհային էներգետիկ շուկայի կայուն և հավասարակշռված զարգացումը:

Հատկանշական է, որ ԵԱՏՄ-ն և ՇՀԿ-ն ընդլայնում են համագործակցությունը էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում: Քննարկվել է ԵԱՏՄ-ի և ՇՀԿ-ի միջև համագործակցությունը էներգախնայողության և էներգաարդյունավետության նոր մոտեցումների մշակման, ինչպես նաև վերականգնվող էներգիայի զարգացման գործում:[13]

Անդամ պետությունները վերահաստատում են Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանն իրենց աջակցությունը:

Նրանք ընդգծում են նոր միջազգային տրանսպորտային ուղիների ստեղծման և արդիականացման կարևորությունը, ներառյալ «Հյուսիս-Հարավ» և «Արևելք-Արևմուտք» միջանցքների գործունեությունը, ինչպես նաև՝ ՇՀԿ անդամ պետությունների տարանցիկ ներուժի օգտագործումը:[14]

Հռչակագրում նշվում է Չինաստան-Ղրղզստան-Ուզբեկստան երկաթուղու շինարարության մեկնարկը: Հավելենք այն, որ 2025-ի դեկտեմբերի 16-ին ստորագրվել է Չինաստան-Ղրղզստան-Ուզբեկստան երկաթուղու շինարարությունը ֆինանսավորելու համաձայնագիրը, համաձայն որի, երկաթուղային նախագծի ընդհանուր արժեքը գնահատվում է 4.7 միլիարդ դոլար: Այն ներառում է 50 կամուրջների և 29 թունելների կառուցում՝ ընդհանուր 120 կիլոմետր երկարությամբ:[15]

ՇՀԿ երկրների տարածքով անցնող միջազգային մայրուղիների ընդհանուր երկարությունը գերազանցում է 14.000 կմը: Չինաստան-Եվրոպա միջազգային երկաթուղային բեռնափոխադրման երթուղով իրականացվել է ավելի քան 110.000 ուղևորություն:[16]

Տվյալների համաձայն, ՇՀԿ-ն դարձել է աշխարհի ամենամեծ տարածաշրջանային կազմակերպությունը՝ ընդգրկելով 26 երկիր, համագործակցության ավելի քան 50 ոլորտ և մինչև 30 տրիլիոն դոլարի համակցված տնտեսական ծավալ:[17]

ՇՀԿ գագաթնաժողովում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նշել է. «ՌԴ առևտրաշրջանառության ծավալը ՇՀԿ երկրների հետ 2024-ին հասել է 409 միլիարդ դոլարի և շարունակում է աճել: Այս շրջանառության գերակշռող բաժինը կազմում է ՉԺՀ-ի հետ փոխգործակցությունը: Կարևոր է, որ կազմակերպության անդամների միջև առևտրային

գործարքներում ազգային արժույթների բաժինն անընդհատ աճում է: Օրինակ՝ ՌԴ-ի և ՇՀԿ գործընկերների հետ առևտրում այս ցուցանիշն արդեն գերազանցում է 97%-ը»:[18] Չինաստանը շարունակում է կիսվել իր հսկայական շուկայի հնարավորություններով:

ՇՀԿ-ի այլ անդամ պետություններում չինական ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցել է 84 միլիարդ դոլարը: Չինաստանի տարեկան երկկողմ առևտրաշրջանառությունը այլ անդամ պետությունների հետ գերազանցում է 500 միլիարդ դոլարը:[19] ՇՀԿ գագաթնաժողովում Չինաստանի նախագահ Սի Ծինփինը հայտարարել է, որ Չինաստանը ՇՀԿ միջբանկային կոնսորցիումի անդամներին կտրամադրի 10 միլիարդ յուան (112.7 միլիարդ ռուբլի) վարկեր և կոչ է արել ՇՀԿ զարգացման բանկի արագ ստեղծմանը:[20]

ՌԴ վարչապետ Միխայիլ Միշուստինը մեջբերել է որոշ վիճակագրական տվյալներ, համաձայն որոնց՝ համաշխարհային ՀՆԱ-ում ՇՀԿ երկրների մասնաբաժինը, կանխատեսումների համաձայն, մինչև 2025-ի վերջը կաճի մինչև 35% : [21]

Տեսնում ենք, որ ինչպես ԲՐԻԿՍ-ում, այնպես էլ՝ ՇՀԿ-ում առանցքային պետությունները (Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան, Իրան և այլն) նպաստում են տարածաշրջանում տնտեսության, առևտրի աճին, լոգիստիկ ենթակառուցվածքների ընդլայնմանը և այլն:

Օրինակ, խոսվում է Ռուսաստանի, Չինաստանի, ԲՐԻԿՍ-ի և ՇՀԿ-ի միջև թվային տրանսպորտային հարթակներն ինտեգրելու ծրագրերի մասին:[22]

Տվյալները ցույց են տալիս, որ ՇՀԿ անդամ երկրները համաշխարհային ասպարեզում զգալի տնտեսական նշանակություն են ձեռք բերել, տնտեսական զարգացումը, առևտուրը, էներգետիկ, տրանսպորտային ուղիներն ընդլայնվում են դեպի արևելքի և հարավի երկրներ:

Ինչպես նշվում է հռչակագրում, ՇՀԿ անդամ պետությունները ՄԱԿ-ում բարեփոխումներն անհրաժեշտություն են համարում:

Տվյալների համաձայն, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների կազմում Չինաստանը և Ռուսաստանը պարբերաբար բախվում են Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի հետ: Նմանատիպ իրավիճակ է նկատվում նաև ՄԱԿ-ի ֆինանսական ոլորտում, որտեղ Միացյալ Նահանգները և Եվրամիությունը գերիշխում են Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի վրա: Հատկանշական է, որ ՇՀԿ անդամները համաձայնել են ստեղծել ՇՀԿ զարգացման բանկ:[23]

Ինչպես նաև՝ ՀԱՊԿ-ը, ԱՊՀ-ն և ՇՀԿ-ն ստորագրել են համագործակցության ճանապարհային քարտեզ: Քննարկվել են տարածաշրջանային անվտանգության ոլորտում համագործակցության հետագա զարգացման և նոր մարտահրավերներին ու սպառնալիքներին հակազդելու առաջարկներ: ՀԱՊԿ-ը, ԱՊՀ-ն և ՇՀԿ-ն կոչված են կարևոր դեր խաղալու համաշխարհային խաղաղության և տարածաշրջանային անվտանգության պահպանման, ինչպես նաև անկայունության կանխարգելման գործում: Նրանք ընդունել են հանձնառություն՝ ստեղծելու նոր եվրասիական անվտանգության ճարտարապետություն, ընդլայնելու տնտեսական համագործակցությունն ու մշակութային կապերը:[24]

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ՇՀԿ անդամ պետությունները ձգտում են անկախ տնտեսական, ֆինանսական քաղաքականության, առևտրային գործարքներում ընդլայնվում է ազգային արժույթների բաժինը, անհրաժեշտություն է դառնում զարգացման բանկի ստեղծումը:

Այսպիսով՝ բազմաբևեռ աշխարհը մերժում է արևմուտքի գերիշխանությունը, ձգտում է ձևավորել անվտանգային համակարգի (տնտեսական, էներգետիկ, ֆինանսական, ռազմաքաղաքական և այլն) ավելի կայուն ճարտարապետություն:

Հղումներ

1 Полный текст выступления Си Цзиньпина на 25-м заседании Совета глав государств-членов ШОС, https://www.scochina2025.org.cn/ru/n3/2025/0902/c518817-20360735.html

2 Декларация о создании «Шанхайской организации сотрудничества», https://rus.sectsco.org/20010615/1608450.html

3 Хартия Шанхайской организации сотрудничества, http://www.kremlin.ru/supplement/3450

4 Տես նույն տեղում:

5 Хартия Шанхайской организации сотрудничества, http://www.kremlin.ru/supplement/3450

6 Перечень документов, подписанных в ходе заседания Совета глав государств-членов Шанхайской организации сотрудничества, https://rus.sectsco.org/20250901/1958273.html

7 Тяньцзиньская декларация Совета глав государств-членов Шанхайской организации сотрудничества, http://kremlin.ru/supplement/6376 / https://rus.sectsco.org/20250901/1958235.html

8 Տես նույն տեղում:

9 Устав ООН, https://www.un.org/ru/about-us/un-charter/full-text

10 Тяньцзиньская декларация Совета глав государств-членов Шанхайской организации сотрудничества, http://kremlin.ru/supplement/6376 / https://rus.sectsco.org/20250901/1958235.html

11 Տես նույն տեղում:

12 Тяньцзиньская декларация Совета глав государств-членов Шанхайской организации сотрудничества, http://kremlin.ru/supplement/6376 / https://rus.sectsco.org/20250901/1958235.html

13 ЕАЭС и ШОС расширяют сотрудничество в сфере энергетики и транспорта, https://russiaspivottoasia.com/russian/eaes-i-shos-rasshiryayut-sotrudnichestvo-v-sfere-energetiki-i-transporta/

14 Тяньцзиньская декларация Совета глав государств-членов Шанхайской организации сотрудничества, http://kremlin.ru/supplement/6376 / https://rus.sectsco.org/20250901/1958235.html

15 Подписано соглашение о финансировании строительства железной дороги «Китай - Кыргызстан - Узбекистан» https://www.gov.kg/ru/post/s/25876-kytai-kyrgyzstan-ozbekstan-temir-zolun-kuruu-dolboorun-karzyloo-ucun-makuldasuuga-kol-koyuldu

16 Полный текст выступления Си Цзиньпина на 25-м заседании Совета глав государств-членов ШОС, https://www.scochina2025.org.cn/ru/n3/2025/0902/c518817-20360735.html

17 Տես նույն տեղում:

18 Объём торговли России в рамках ШОС достиг $409 млрд, https://russiaspivottoasia.com/russian/obyom-torgovli-rossii-v-ramkah-shos-dostig-409-mlrd/

19 Полный текст выступления Си Цзиньпина на 25-м заседании Совета глав государств-членов ШОС, https://www.scochina2025.org.cn/ru/n3/2025/0902/c518817-20360735.html

20 На саммите ШОС утвердили стратегию развития организации на 10 лет, https://tvbrics.com/news/na-sammite-shos-utverdili-strategiyu-razvitiya-organizatsii-na-10-let/

Հաւատաւորը

Համաստեղ

Սույն թվականի դեկտեմբերի 21-ին լրացավ Գարեգին Նժդեհի մահվան 70-րդ տարելիցը: Այս առիթով ներկայացնում ենք նշանավոր գրող Համաստեղի (Համբարձում Կելենյան 1895-1966)՝ հոդվածը՝ նվիրված մեծ զորահրամանատարին և մտածողին: Համաստեղի այս հոդվածը տպագրվել է «Հայրենիք» օրաթերթի 1963 թ. սեպտեմբերի 13-ի և «Յեղափոխական ալպոմ»-ի 1967 թ. 3-4-րդ համարներում:

Խմբագրություն

Հաւատքը առաւելապէս զգացական է և կը զատէ վերացականը իրականէն. մարդ պէտք է հաւատայ առանց տրամաբանելու, այլապէս կեանքը կը դառնայ բաւիղ: Մարդիկ պէտք է հաւատան չկորսուելու համար այդ բաւիղին մէջ, և հաւատքը մարդկային ստեղծագործութիւնն է, ոգեկան աշխարհը, ուր կան Աստուածն ու յաւիտենականութիւնը: Գարեգին Նժդեհ դառն իրականութենէն վեր՝ ոգեկան այդ սաւառնումն ունէր՝ որպէս կուսակցական գործիչ եւ որպէս մտածող: Այդ բոլորին մէջ դրաւ բանաստեղծական թռիչք, առանց բանաստեղծութիւն գրած ըլլալու: Բայց որ րիթմ կար իր կեանքին ու ապրումներուն մէջ, րիթմ–դաշնակութիւն կար Զանգեզուրի լեռներու սլացքով իր խուստուպեան կանչերուն մէջ, եւ նոյն ձևի դաշնակութիւն դրաւ կուսակցական ազգային աշխատանքներուն մէջ՝ միշտ թեւաւոր և վերացական: Եթէ 5-րդ դարուն մէջ ապրած ըլլար, կրնար Մաշտոցի աշակերտներէն մեկը ըլլալ՝ իր Աւետարանի քարոզչութեամբ դևերը դէպի *մարերու* սահմանները հալածելու: Արդէն ընդունուած բանաձևերու մարդը չէր Նժդեհ: Իր ինքնուրոյն մտածողութիւնը կը դնէր, եթէ նոյնիսկ բանախօսէր Խանասորի մասին: Կը խօսէր աֆորիզմներով՝ խորհուրդ դնելով իր բառերուն մէջ: Անոր մտածողութեան մէջ կար անկեղծ ըլլալու ազնուականութիւն մը:

Հայաստանն ու հայ ժողովուրդն էր անոր հաւատքը, որ մինչև բնազանցութիւն տարած էր՝ իր ուժով և նոր գծերով: Հայրենասիրութեան մէջ իր ուժն ունէր, տեսակ մը *պառնասական:* Այնպէս կը խօսէր, որ կարծես գտած էր հայ ժողովուրդի գոյութեան նախնական *կաւը.* այդ կաւը *ցեղն է* եւ ցեղի փիլիսոփայութիւնը: Ճիշդ այնպէս, ինչպէս կայ *շարժումի* փիլիսոփայութիւնը: Մոլեգնօրէն կը հաւատար, որ հայ ժողովուրդ պահողը այդ *էութիւնն* է: Եւ այդ շատ կարեւոր շարժումը կու գայ ժառանգաբար եւ կը գրաւէ մեր ենթագիտակցական աշխարհը, որ գրեթէ պեղուած չէ: Կու գայ մեր աւանդութիւններէն, մեր լեզուէն և նոյնիսկ մեր նախապաշարումներէն:

Անտարակոյս, *ցեղի* յղացումը նոր չէր: Առաւելապէս պարտուած ժողովուրդներուն մէջ է, որ կը սկսի այդ *կանչը*: Այդ կանչը այդ շրջանին գերմանացիներուն համար դարձած էր *որոտ*, որովհետև պարտուած էին Համաշխարհային առաջին պատերազմին: Նժդեհի ըմբռնումը գերմանական այդ *որոտը* չէր, որ յետոյ պատուհաս դարձաւ: Կար իսկապէս ցեղ մը, որ այդ ուժը դարձուցած էր մշակոյթ և բնազանցութիւն: Այդ բնազանցական ուժով ստեղծած էր Եհովան, և ինք դարձած էր անոր ընտրեալ ժողովուրդը:

Այդ *հրեայ* ցեղն էր, որ ինքզինք դարձուցած է Եհովայի չափ *յաւիտենական*: Մեր զրոյցներու ու վէճի ընթացքին արդէն յուսակերպուած հաւատքով կը խօսէր: Եւ օր մը ալ ըսաւ. «Եթէ ես հայ չըլլայի, պիտի ուզէի հրէայ ըլլալ»: Իր ցեղային ըմբռնումն ու ներշնչումը առաւելապէս հրէայ ժողովուրդէն կու գար:

Այդ հաւատքին համար Նժդեհ ինք մինակը աշխատեցաւ, և այդ աշխատանքի մէջ կրօնական հաւատքի մը նախնականութիւնը կար, երբ հզօր, քաղաքակրթուած ազգեր ցեղային այդ ըմբռնումէն դուրս ելած էին, իսկ կրօնքը վաղուց դադրած էր իր դերը կատարելէ:

Նժդեհին համար *ցեղը* ընկերաբանական կազմութիւն չունէր, դասակարգեր չկային հոն, այլ կար կախարդական ուժ մը թէ *հայ* աղքատին և թէ *հայ* հարուստին մէջ: Այդ ուժն էր, որ պէտք էր արթնցնել: *«Ցեղ»* բառը որպէս արմատ բազմազան բառակերտումներու ենթարկած էր՝ աւելի հիմնաւորելու համար իր հաւատքը՝ *ցեղ*, *ցեղային*, *ցեղական*, *ցեղադրոշմ*, *ցեղական*, *ցեղայնօրէն*: Եւ օր մըն ալ ձեռքը ուսիս դրաւ և խօսեցաւ նոր բառով մը, երբ «Հայաստան» *քէմբին* մէջ հաւաքուած էր մօտ չորս հազար հայութիւն:

– Այդ ժողովուրդը պէտք է «*ցեղենք*»:

Տկար երկաթն էր, որ շիկացնելով, ջրդեղելով, մրճահարելով՝ կ'ուզէր ամրացնել՝ «ցեղելով»: Հաճելի էր անոր անկեղծութիւնը մտածումներուն, որ կու գար իր բառերէն և որ կը ցոլար իր շատ բարի աչքերէն, որոնց մէջ դաւանանքի մը ջերմ արտայայտութիւնը կար. և այդ մտածումը իր մէջ պատարագի մը ծիսականութիւնն ունէր: Անոր հաւատքը ունէր այդ ծիսակատարութիւնը *միսթիկ* ըլլալու աստիճան, ինչպէս կրօնքները եղած են: Այդ հաւատքով ալ գործի մտաւ Ամերիկայի մէջ՝ որպէս ազգային գործիչ, և կազմակերպեց ամերիկահայ սերունդը, որ շատ արագ լուծուելու վտանգին ներքև էր:

Առհասարակ բարձրորակ էին անոր բանախօսութիւնները: Բանաստեղծական թռիչքներով և մանաւանդ աֆորիզմներով լեցուն: Ճարտար հռետոր էր, և այդ բոլորը ծիսակատարութեան մը տպաւորութիւնը կը ձգէին գրեթէ հայերէն չհասկցող ամերիկահայ նոր սերունդին վրայ: Նոյն ծիսական տպաւորութիւնը՝ նաև Հայ ժողովուրդին վրայ, որ նոյնպէս չէր կրնար հետևիլ անոր բարձր հռետորականութեան, և սակայն հաւատացին անոր անկեղծութեան, ինչպէս հաւատացին Հայրիկին: Նժդեհ իր բառերը դարձուցած էր խորհուրդ և այդ խորհուրդին հետ դրած էր, նոր կազմած կարգերուն մէջ, տեսակ մը ծիսականութիւն մեր հին պատմութենէն բերուած բառերով:

Ինչպէս ըսինք, Նժդեհին համար շատ հեշտ էր «ցեղ» արմատով նոր բառեր կերտել: Նոր կազմուած նոր սերունդի միութեան անունը մկրտեց *Ցեղակրօն*: Եւ արդէն իրարու քով եկած էին *ցեղ* և *կրօնքը*:

Այդ օրերու Կ. Կոմիտէն շատ ալ համաձայն չէր այդ նորակերտ բառին և սակայն չուզեց իր առարկութիւնը պաշտօնականացնել և այդ ձեւով կոտրել թափը Նժդեհի աշխատանքներուն: Կարեւորը այդ սերունդը կազմակերպելն էր, և արդէն շատ չանցած՝ փոխուեցաւ այդ անունը:

Ամերիկահայութիւնը յաճախ ունեցած է կուսակցական, ազգային գործիչներ, որոնք կարևոր գործեր ըրին ցրուած ժողովուրդ մը նպատակի մը և կամ հայկականութեան շուրջ հաւաքելու: Այդ բոլորին մէջ Նժդեհ իր ինքնուրոյն գիծը ձգեց, մանաւանդ այն շրջանին, երբ շատ խիստ էր կուսակցական պայքարը:

Գարեգին Նժդեհ Ամերիկայէն յետոյ միացաւ, թէ՛ ստեղծեց *Տարօնականութիւնը*, որ սահմանափակ գծերու մէջ մնաց: Նոյն գիծն էր, ցեղային նոյն ոգին, որ Տարօնինն էր:

Հայաստանը Նժդեհին մէջ հոգեկան քարտեզ մըն էր՝ միշտ *միսթիկ* և վերացական:Ան հաւատաւոր հայրենասէր մըն էր: ■

Նկարի կենտրոնում Նժդեհն է, իսկ նրանից աջ Համասպեղը

135-ամեայ երիտասարդ յեղափոխականը. հաւատքով դէպի պայծառ ապագայ

Յակոբ Ճանպազեան
Գեղանկարիչ, քանդակագործ

Դար մը եւ երեսունհինգ տարիներ կը բաժնեն մեզ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծննդեան թուականէն: Արդ, իր փառաւոր անցեալին հայեացք մը ուղղելով՝ այսօր նոր տեսիլքներով եւ անխախտ յանձնառութեամբ ան կը դիմաւորէ նաեւ ապագան: 135-ամեայ, բայց մշտապէս երիտասարդ այս կուսակցութիւնը ամրապինդ հաւատքով կը խտացնէ իր շարքերը երդուեալներու հսկայ փաղանգով, պատրաստ՝ դիմագրաւելու Հայրենիքին ու հայ ժողովուրդին առջեւ ծառացած ազգային, ընկերային, քաղաքական եւ մշակութային ամենաբարդ մարտահրաւէրները:

Հայ ժողովուրդի հայրենատենչ երկունքէն ծնունդ առած Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը դարէ մը աւելի կերտեց կազմակերպչական ամուր կառոյցներ, ունեցաւ անհաշիւ զոհաբերութիւններ եւ դրոշմեց մեր պատմութիւնը հայրենանուէր ու ազգանուէր պայքարով: Դաշնակցութիւնը եղաւ ոչ միայն քաղաքական կուսակցութիւն, այլ համահայկական շարժում, որ միաժամանակ գործեց իբրեւ ազատագրական պայքարի առաջամարտիկ, պետականաշինութեան ջատագով, սփիւռքակերտումի ճարտարապետ եւ Հայ դատի անդադրում պաշտպան:

Դաշնակցութեան 135-ամեայ ուղին ամբողջացուած է հինգ հիմնական առաքելութիւններով՝ ազգային ազատագրութիւն, պետականութիւն, հայապահպանութիւն, ընկերային արդարութիւն եւ համահայկական համախմբում: Այս հիմքերուն վրայ է, որ ան կրցաւ դիմանալ ժամանակներու փոթորիկներուն, պարտութիւններուն ու աքսորներուն՝ մնալով անշեղ իր գաղափարական առանցքին շուրջ:

2018-ի իշխանափոխութենէն ետք, սակայն, հայրենի պետական կեանքին մէջ ի յայտ եկան աննախադէպ եւ վտանգաւոր երեւոյթներ: Թրքամէտ ու ազգուրաց ուղղուածութիւններով առաջնորդուող իշխանաւորներ ու վարչապետ՝ փորձեցին անամօթաբար մշուշապատել Դաշնակցութեան փառաւոր անցեալը, թունաւորել անոր գաղափարական ժառանգութիւնը, պիտակաւորել դաշնակցականը որպէս անբաղձալի տարր թէ՛ հայրենիքի մէջ եւ թէ՛ Սփիւռքի տարածքին: Աւելին՝ «Ազատութիւն կամ մահ» շեփորած կուսակցութեան վեհ դրօշը անարգելու եւ նոյնիսկ «այրելու» քստմնելի բացականչութիւններ հնչեցուցին պետական բարձրաստիճան պաշտօնեաներն ու նոյնինքն վարչապետ կոչուած Փաշինեանը:

Այս օրերուն Հայաստանի վարչապետին քանդիչ ու բաժանարար արարքներով Հայաստանի բանտերուն մէջ ապօրինաբար կալանաւորուած են չորս բարձրաստիճան հոգեւոր հայրեր, իսկ տասնեակ մը եւ աւելի հոգեւորականներ բանտարկուած՝ հայոց



սուրբ եկեղեցին ներքաշելով քաղաքական պիղծ ու քանդիչ հաշիւներու մէջ:

Դաշնակցութեան համար այս խօսքերն ու մօտեցումները դատապարտելի են, զարհուրելի եւ խորապէս ոչ-հայավայել: Անոնք կը քանդեն մեր ժողովուրդին միասնութիւնը, կը թունաւորեն մարտունակ նորահաս սերունդներու հոգիները եւ կը խոչընդոտեն անոր դէպի փայլուն ապագայ երթը: Արդիւնքով՝ վտանգի տակ կը դրուին Հայրենիքի ու հայ ժողովուրդի անկատար տենչերը՝ յագուրդ տալով մեր դարաւոր թշնամիներու անկուշտ ախորժակներուն:

Սակայն, հայ ժողովուրդի հոգիին ու հայրենի հողին մէջ խարսխուած այս գաղափարական հզօր կառոյցը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, պատմութեան ընթացքին բազմիցս ապացուցած է, որ ճնշումը կը վերածէ նոր ուժի: Նուիրաբերումի նոր չափանիշերով ան դարձեալ կը զսպանակուի՝ ընծայաբերելով իր լաւագոյնը յանուն Հայրենիքին, դաւադրաբար բռնագրաւուած Արցախ հայաշխարհին եւ հայ ժողովուրդի գերագոյն նպատակներուն՝ յանուն մեր գոյապայքարի սրբազան գործին:

135 տարիներ առաջ Դաշնակցութեան ծնունդը ոչ միայն պատմական կարեւորագոյն իրադարձութիւն մըն էր, այլեւ անկիւնադարձային հանգրուան մը հայրենի եւ սփիւռքացած հայ ժողովուրդի կեանքին մէջ: Ան հաստատ համոզումով ծառայեց ազգապահպանման ու հայապահպանման վեհ գործին՝ օտար ափերու վրայ ծնած սերունդները կապելով մեր ազգային աւանդութիւններուն ու բարքերուն, լուսաւո-

րելով զանոնք հայոց մշակոյթի ջահով՝ այլասերման բոլոր վտանգներուն դէմ:

Դաշնակցութիւնը ստեղծեց եւ պահպանեց համահայկական կառոյցներ՝ դպրոցներ, մշակութային միութիւններ, երիտասարդական-ուսանողական կազմակերպութիւններ, մամուլ եւ հրատարակչութիւն, որոնց միջոցով սերունդներ կրթուեցան ազգային գիտակցութեամբ եւ ծառայութեան ոգիով: Սփիւռքի մէջ ան դարձաւ ազգային ինքնութեան յենասիւն, իսկ Հայ դատի պայքարին մէջ՝ կազմակերպուած, հետեւողական եւ ազդեցիկ ուժ:

Հայ դատի աշխարհասփիւռ գործունէութեան մէջ Դաշնակցութիւնը եղաւ առաջամարտիկը՝ միջազգային ատեաններու, խորհրդարաններու եւ քաղաքական շրջանակներու մէջ բարձր պահելով Հայոց ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ պահանջատիրութեան դրօշը: Դաշնակցական կառոյցներու ջանքերով ձեւաւորուեցան Հայ դատի յանձնախումբեր աշխարհի չորս ծագերուն, որոնք տասնամեակներ շարունակ հետեւողական աշխատանք տարին՝ հակառակ անտարբերութեան, ճնշումներու եւ քաղաքական շահախնդրութիւններու:

Թէեւ ինքնափառաբանումը երբեք Դաշնակցութեան բառապաշարը չէ եղած, այնուամենայնիւ հարկ է արձանագրել, որ ան իր գոյութեան ամբողջ ընթացքին եղած է գերազանցապէս գործի եւ զոհաբերութեան կուսակցութիւն: Առանց զոհողութեան սահմանները ճանչնալու՝ ան հայ ժողովուրդի կեանքին մէջ ստեղծած է նուիրաբերումի նոր չափանիշեր: Գործի ու զոհաբերութեան ճամբով էր, որ օսմանեան բռնակալութեան օրերուն Դաշնակցութիւնը արթնցուց հայ ժողովուրդը իր դարաւոր թմբիրէն եւ ազատագրական պայքարի դրօշը բարձրացուց նոյնինքն սուլթանին դէմ՝ յանուն հայ մարդու ազատ ու անկաշկանդ գոյատեւումին: Նոյն ոգիով էր, որ Մեծ եղեռնէն հազիւ երեք տարի ետք Դաշնակցութիւնը կրցաւ ի մի բերել հայ ժողովուրդի բեկորները եւ վեց դարու ստրկական գոյավիճակին վերջ տալով՝ մայիսեան վարդահեղեղ ու պայծառ առաւօտ մը յայտարարեց ու կերտեց ազատ ու անկախ հայրենիքը հայոց:

1920-ական թուականներուն Դաշնակցութիւնը յանդուգն վճռականութեամբ կուրծք ցցեց խորհրդային բռնատիրութեան դէմ՝ ամրագրելով նուիրաբերումի եզակի չափանիշ մը, որ պատկառանք ներշնչեց նոյնիսկ գերպետութիւններու մօտ: Խորհրդային տասնամեակներուն ան Սփիւռքի մէջ վառ պահեց յեղափոխական ոգին, պաշտպանեց հայ գաղութներու ապահովութիւնը եւ իր շարքերէն նուիրեց լաւագոյն զաւակները ազգային գոյութեան վտանգուած պահերուն:

Երբ Հայրենիքի եւ Արցախի ազատամարտի ահազանգը հնչեց, Դաշնակցութիւնը դարձեալ առաջին գիծի վրայ էր Ղարաբաղի լեռներուն, Հայաստանի սահմաններուն, Երեւանի փողոցներուն եւ խորհրդարանի բեմին վրայ: Ան եղաւ ոչ թէ պատեհապաշտ դիտորդ մը, այլ մարտնչող եւ նախաձեռնող ուժ՝ մշտապէս ականջալուր հայ ժողովուրդի արդար պահանջներուն:

Այսօր, երբ նոր սպառնալիքներ կը շղթայուին Հայաստանի սահմաններուն եւ ազգային անվտանգութեան կենսական առանցքներուն շուրջ, Դաշնակցութիւնը կը շարունակէ մնալ զգօն պահակ: Պատմութիւնը արդէն արձանագրած է մէկ անժխտելի ճշմարտութիւն. սուլթանները, թալէաթներն ու էնվերները, ինչպէս նաեւ խորհրդային բռնատէրերը անցան ու չկան, մինչ Դաշնակցութիւնը կանգուն է՝ անխախտ իր հաւատամքին առջեւ եւ արմատաւորուած հայրենի հողին ու համահայկական կամքին մէջ:

Սիրելի՛ ընթերցող, այո՛, Դաշնակցութիւնը միայն քաղաքական կազմակերպութիւն չէ. ան մշտավառ գաղափարական հնոց է: Անոր հնոցին մէջ ձեւաւորուած ու մկրտուած են հազարաւոր ընկերներ ու ընկերուհիներ՝ Քրիստափորներու, Ռոստոմներու, Զաւարեաններու, Թեհլիրեաններու եւ բիւրաւոր ջան ֆետայիներու շունչով: Անոնք իրենց համակ կեանքով ծառայեցին ազգային ազատագրութեան դատին, կերտեցին նուիրումի, հաւատարմութեան ու յեղափոխական անսակարկ ոգիի օրինակներ եւ սերունդէ-սերունդ փոխանցեցին Դաշնակցութեան գաղափարական ժառանգութիւնը՝ իբրեւ հայ ժողովուրդի գոյատեւման ու յառաջընթացի անփոխարինելի զինանոց:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը անցեալ չէ, յուշ չէ, անուն չէ. Դաշնակցութիւնը ապրող կամք է, շարունակուող պայքար եւ հայ ժողովուրդի վաղուան անժխտելի անձնուրաց պահապանն ու երաշխիքը:

35 տարի գաղափարի շուրջ: Աղբալյանականության ճանապարհը, պայքարը և նոր սերնդի հավատամքը

«Նիկոլ Աղբալյան Ուսանողական միության» վարչություն

Նոյեմբերի 15-ին, Հայաստանի կինոգործիչների միության «Կինոյի տան» մեծ դահլիճը լեցուն էր ոգով, հիշողություններով ու սպասումով: Այստեղ էին հավաքվել տարբեր սերունդների ՆԱՌՈՒՄ-ականներ, «Վահան Հովհաննիսյան» ազգային–քաղաքական դպրոցի շրջանավարտներ և ներկա ունկնդիրներ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավորներ, ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի և Բյուրոյի անդամներ, ինչպես նաև Սփյուռքի ՀՅԴ կառույցներից ժամանած ընկերներ:

Օրը խորհրդանշական էր. նշվում էր ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության հիմնադրման 35-ամյակը, որը տեղի ունեցավ ոչ միայն տոնական տրամադրությամբ, այլև խորքային խորհրդածությամբ՝ անցած ճանապարհի, փոխանցած փորձի և սերնդափոխվող միության պատասխանատվության մասին:

Միջոցառման առանցքային պահը դարձավ միության մասին հոբելյանական ֆիլմի պրեմիերան, որում տարբեր սերունդների ՆԱՌՈՒՄ-ականները պատմում էին իրենց ուսանողական տարիների պայքարի, գաղափարական կրթության և հայրենասիրական նվիրումի մասին: Ֆիլմը լոկ պատմություն չէր՝ այն շարունակականության ու գաղափարական հենքի ամրապնդման մասին էր: Ֆիլմը ոչ միայն պատմություն էր՝ այլև սերունդների միջև կամուրջ, ջերմ ու անկեղծ խոստովանություն այն մասին, թե ինչպես է միությունը հանդիսանում անձի ձևավորման, մասնագիտական կողմնորոշման, անհագ հայրենասիրության և անձնվեր պայքարի դարբնոց:

ՆԱՌՈՒՄ-ի պատմությունը սկսվեց 1990-ականների սկզբին, Դաշնակցության ընդհատակյա գործունեության շրջանում, երբ գաղափարի շուրջ համախմբված անհատ ուսանողները սկսեցին համալրել կուսակցության շարքերը:

Սեպտեմբերին կայացվեց ճակատագրական որոշումը՝ հիմնել ուսանողական միություն, իսկ հոկտեմբերի 19-ին՝ ԵՊՀ այդ ժամանակներում Արևելագիտության (ներկայումս բանասիրության) ֆակուլտետի 220 լսարանում, գումարվեց միության հիմնադիր ժողովը: Առանց երկմտելու միությունն անվանակոչվեց Հայաստանի Առաջին Հանրապետության լուսավորության նախարար Նիկոլ Աղբալյանի անունով: Այդ ընտրությամբ հստակ ձևակերպվեց նաև միության դավանանքը՝ կրթություն, ազգային գաղափար և քաղաքական գիտակցություն:

Միության ստեղծումից հետո սկսվեց աշխույժ կազմակերպչական, հասարակական և քաղաքական գործունեություն: Բուհերում ձևավորվեցին աղբալյանականների խմբեր, հրատարակվեց «Ուսանող» թերթը, որը հետագայում դարձավ «Երկիր» օրաթերթի հավելվածը: Այն միակն էր իր տեսակի մեջ և մինչ օրս էլ իր ասպարեզում մնում է աշխատասիրության և բծախնդրության նշաձող:

Կազմակերպական առաջին հաջողություններից էր ՀՅԴ 100-ամյակի միջոցառման կազմակերպումը, որը տեղի ունեցավ Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեծ դահլիճում: Այդ օրը կուսակցությունը հանրային հարթակում բացահայտեց իր ներկայությունը մայր հայրենիքում:

Միությունը ներգրավվեց հիմնական քաղաքական գործընթացների մեջ. 1991 թվականին կազմակերպվեց լայնածավալ ստորագրահավաք՝ Կարսի և Մոսկվայի պայմանագրերի չեղարկման պահանջով: Մեծ ստորագրահավաք, բազմահազարանոց հանրահավաք, հանրային ճնշում՝ մինչև Գերագույն խորհրդի հատուկ փակ խորհրդակցության գումարումը: Մի այդպիսի նախաձեռնությամբ աղբալյանականները հիմնավորեցին իրենց՝ երիտասարդ, բայց ազգային ուղեգիծ որդեգրած հաստատուն քաղաքական ներկայությունը:

ՆԱՌՈՒՄ-ի պատմության ամենախորհրդանշական ու ցավալի, միաժամանակ՝ ամենափառավոր էջերից մեկը կապված է արցախյան պատերազմների հետ: Աղբալյանականները երբեք միայն ուսանողական կազմակերպության անդամներ չեն եղել. նրանք եղել են այն սերունդը, որն անհրաժեշտության դեպքում անմիջապես անցել է գործի՝ որպես զինվոր կանգնելով հայրենիքի պաշտպանության առաջնագծում:

1991 թ. ստեղծվեց ուսանողական ջոկատը՝ Արթուր Ղարիբյանի գլխավորությամբ: Տարբեր տարիների ընթացքում ջոկատի կազմում ընդգրկվել են շուրջ 60-70 երիտասարդներ, որոնք կռվել են Արցախի առաջին պատերազմի գրեթե բոլոր ճակատներում՝ Գետաշեն, Շահումյան, Հադրութ, Շուշի, Մարտակերտ, Ասկերան և այլ հատվածներում:

Միությունը հայրենիքի պաշտպանությանը նվիրաբերեց անմահ ընկերների՝ Արթուր Կարապետյան, Ներսես Բարբարյան, Գագիկ Գրիգորյան, Համլետ Հայրյան, Գրիգոր Գրիգորյան, Վահե Բաղդասարյան, Միհեր Ջուլհաճյան, իսկ 44-օրյա պատերազմում՝ Կիմ

Խաչատրյան: Նրանց կյանքը, պայքարը, նվիրումն ու հավատը դարձել են միության ինքնության անբաժանելի մասը: Այսօր միության խմբերը կրում են նրանց անունները: Նրանց անուններով անվանակոչված խմբերը ոչ միայն հիշողություն են պահպանում, այլ նոր սերունդներին փոխանցում են պարտավորություն՝ լինել նույնքան խիզախ, նույնքան սկզբունքային և նույնքան պատրաստ ծառայելու հայրենիքին: Հիշողությունը դարձել է պատգամ, իսկ պատգամը՝ պարտավորություն: Սա պարզապես անցյալի վավերագրություն չէ, այլ հիմք, որի վրա միությունն ամրացնում է ներկան ու ձևավորում ապագան:

Միության պատմության կարևոր էջերից է Շուշիի թեմական վարժարանի վերաբացման նախաձեռնությունը: 1992-ին, Շուշիի ազատագրումից մի քանի օր անց, որոշվեց վարժարանին, որտեղ ուսանել էր նաև Արամ Մանուկյանը, նոր կյանք հաղորդել և հանձն առնել նոր սերունդներ կրթելու սուրբ գործը: Չնայած բազում դժվարությունների, նույն տարվա սեպտեմբերին վարժարանը բացեց իր դռները: Շատ ՆԱՈՒՄ-ականներ մեկնում էին Արցախ՝ դասավանդելու, կրթելու, ծառայելու:

Հաջորդ հազարամյակում ՆԱՈՒՄ-ի գործունեությունը շարունակվեց նույն եռանդով՝ սկսած սոցիալական և կրթական խնդիրների բարձրաձայնումից մինչև կառավարության հրաժարականի պահանջ: Աղբալյանականներն ակտիվ են եղել ուսանողական խորհրդարաններում, ուսանողական գիտական ընկերություններում, կազմակերպել են տարաբնույթ խորհրդաժողովներ:

Վերջին տարիներին միությունը, անմասն չմնալով հայրենիքի համար մղվող պայքարից, նոր շունչ տվեց կրթական ու քաղաքական ծրագրերին: Նա ակտիվ մասնակցությունն է ունեցել տարաբնույթ քաղաքական հրապարակային միջոցառումներին: ՆԱՈՒՄ-ականները եղել են հայրենիքի փրկության համար մղվող մարտերում և՛ թիկունքում, և՛ առաջնագծում: Աղբալյանականները եղել են թե՛ փողոցում, թե՛ լսարաններում: Պետականությանը սպառնալիք հանդիսացող այս իշխանությունների օրոք, ի հակառակ իրենց ազգային քաղաքականությանը՝ միությունը հանձն առավ երիտասարդներին կրթելու պատասխանատու գործը: Նախաձեռնվեց «Հանրային քաղաքականության լսարանը», որը նպատակ ուներ քաղաքականությամբ հետաքրքրված երիտասարդներին փոխանցել կուռ ազգային և քաղաքական մտածողություն: Ծրագրի հաջողությունները պարտավորեցնող էին, և այն դարձավ ազգային-քաղաքական դպրոց, որն անվանակոչվեց ընկեր Վահան Հովհաննիսյանի անունով: Տարիների ընթացքում լայն տարածում ձեռք բերած և իր տեսակի մեջ եզակի ազգային-քաղաքական դպրոցը դարձավ ուսանողության շրջանում ամենամրցունակ և հանրաճանաչ ծրագրեր իրականացնող հարթակներից մեկը: Այսօր «Վահան Հովհաննիսյան» ազգային-քաղաքական դպրոցն ունի հարյուրավոր շրջանավարտներ և յուրաքանչյուր փուլի մեկնարկին ունենում է էլ ավելի մեծ պահանջարկ:

Միության կարևոր ծրագրերից է նաև Թաթուլ Կրպեյանի անվան «Արցախյան ընթերցումներ» ամենամյա հանրապետական գիտաժողովը, որի ընթացքում պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ, քննարկումներ, որոնց մասնակցում են ոլորտի լավագույն մասնագետները և բազմաթիվ ուսանողներ, որոնց ևս հնարավորություն է տրվում հանդես գալու զեկույցներով:

44-օրյա պատերազմում զոհված ընկեր Կիմ Խաչատրյանի պատվին նախաձեռնվել է «Կիմ Խաչատրյանի անվան կրթաթոշակային մրցույթը», որը դարձել է երիտասարդության համար նվիրումի ու պատասխանատվության խորհրդանիշ:

Միությունը կանխորոշեց բազում ընկերների կյանքի ուղեգիծը: Անցնելով «կադրերի դարբնոցով» և հաջողելով իրենց մասնագիտական, քաղաքական գործունեության մեջ, բազում ընկերներ տարիների ընթացքում զբաղեցրել են պետական ու կուսակցական ամենաբարձր պաշտոններ՝ դարձել են պատգամավորներ, նախարարներ, մարզպետներ, ՀՅԴ Բյուրոյի և Հայաստանի գերագույն մարմնի անդամներ:

Միության նպատակն է գաղափարաքաղաքական առումով կրթել ու դաստիրակել հայրենապաշտ և հանձնառու սերունդ, ոգևորել ու ներգրավել երիտասարդությանը՝ պետականաշինության, հայրենանվեր գործի և նույնպիսի մտածողության ասպարեզ:

35 տարին պարզապես թիվ չէ, այն վավերագրություն է՝ կրթության, կամքի, նվիրվածության պայքարի: ՆԱՈՒՄ-ը մնում է այն եզակի ուսանողական կառույցներից, որը ոչ միայն դիմացել է ժամանակի փորձությանը, այլ ձևավորել է մի ամբողջ սերունդ՝ ազգային մտածողությամբ, քաղաքական գիտակցությամբ, հայրենասիրության զենքով և ապագայի հավատով:

Այսօր, նոր մարտահրավերներին հանդիման, աղբալյանականները շարունակում են իրենց ճանապարհը նույն գաղափարական ուղեգծին հետամուտ՝ կերտելու ազգային պետություն, պահպանելու և զարգացնելու հայ ժողովրդի ինքնությունը, լինելու այն սերունդը, որը կվերանորոգի հայոց արժանապատիվ ապագայի տեսլականը և այն իրականացնելու անբեկանելի հավատը:

Աղբալյանական լինելը պատիվ է: ■

«Արձագանգ»ի էջերից

Սիմոն Հասըրճյան
կուսակցական, հասարակական գործիչ, գործարար և բարերար

«Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթի բազմաթիվ համարներում հանդիպեցի Սիմոն Հասըրճյանի անվանը (ստորագրել է նաեւ՝ Ս. Հ., Սիմոն): Երբ հավաքեցի «Արձագանգ»ում պրն Սիմոնի հրապարակած հոդվածներն ու պատմվածքները, թարգմանությունները, հրապարակային ելույթների շարադրանքները, ստացա հսկայածավալ նյութ, որի մի մասը կհրատարակվի Մարգար Շարապիանյանի (1937-2023) երկերի ժողովածուի՝ «Արձագանգ» ամսաթերթին նվիրված հատորում:

Ընթերցողներին ներկայացնում եմ Սիմոն Հասըրճյանի ստորագրությամբ երեք հոդված: Տասնամյակներ առաջ գրված այս հոդվածներում քննարկվում են մեր ազգային կյանքի այնպիսի հարցեր, որոնցից շատերի լուծումը մենք ազգովին դեռ չենք գտել: Հիշեցնենք որ Սիմոն Հասըրճյանը կուսակցական, հասարակական գործիչ է, գործարար և բարերար: Եղել է «Համազգային»ի Կենտրոնական վարչության անդամ:

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր



1. ԱՊՐԻԼ 24-Ը ԱԶԳԱՅԻՆ «ԳՈՐԾԻՔ»

Շատեր փորձած են մեր ժողովուրդին ու ցեղին գոյատեւելու գաղտնիքը փնտռել սերունդներու զգալու արտասովոր ընդունակութեան մէջ:

Ճիշդ է, որ մենք դարերով չմոռցանք մեր Վարդանն ու Վարդանանցի հերոսները: Անոնցմէ շինեցինք զէնքեր՝ ամէն տարի անգամ մը եւս ամրապնդելու մեր սերունդներու ազգայնական զգացումները: Մենք Վարդանանքը գործածեցինք մեր ազգային շահերուն համար խրախուսելու տկարները, խանդավառելու թոյլերը: Սակայն այս բոլորը պատահեցան անգիտակցաբար, օգտուեցանք անուղղակիօրէն, մեր սգատօներուն մեզի պարտադրած տրամադրութիւններուն ընդմէջէն:

Այսօր նոյնը կ'ընենք Ապրիլ 24-ի առիթով: Ամէն տարի կը յիշատակենք մեր զոհերը՝ անուրանալիօրէն նպաստելով ազգայնականութեան՝ վերակենդանացնելով զայն: Վերջերս, սգատօնի մը ծիրէն դուրս ելլելով ցոյցերու եւ բողոքներու, քիչ մըն ալ քաղաքական բնոյթ կու տանք անոր, սակայն դարձեալ այս բոլորը կ'ընենք անգիտակցաբար պարագայական որոշումներով:

Քիչեր կը համարձակին Ապրիլ 24-ին մէջ փնտռել սգատօներէն ու խորհրդանիշներէն անդին տարբեր «գործիք» մը: Ամէն մէկ բանախօս Ապրիլ 24-ին կու տայ տարբեր իմաստ եւ երանգ, հաշտութիւն, անկիւնադարձ եւ այլն, եւ այլն, առանց սգատօնի պատեանէն ձերբազատուելու:

Այս բոլորին մէջ ոչինչ կայ սխալ կամ աննպաստ, միայն թէ մեր մէջ կը պակսի Ապրիլ 24-ի սրբութեան մօտենալու կարողութիւնը, գիտակցօրէն զայն շահագործելու նպատակաւ:

Ապրիլ 24-ը օգտագործելու եւ շահագործելու գաղափարը չի նշանակեր չյարգել մեր նահատակներու յիշատակը, այլ միայն արդար է, որ մենք օգտուինք այդ եղելութենէն:

Ապրիլ 24-ը մեզի կ'ընծայէ աշխատանքի լայն հորիզոններ՝ ըլլայ քաղաքական եւ ըլլայ ազգային գետնի վրայ:

Մօտենանք Ապրիլեան Եղեռնին սառն արիւնով, առանց փղձկելու մէկ ու կէս միլիոնի ահաւոր ջարդերու յիշատակութեամբ, մօտենանք անոր հանդարտ ու գիտական տրամաբանութեամբ, առանց սահմանափակուելու խորհրդանիշերու եւ սուգի մտայնութենէն եւ որոշենք...

Եթէ Ապրիլ 24-ը իբրեւ սգատօն օգտակար է մեզի, աւելի ծանրանանք անոր վրայ, եթէ իբրեւ խորհրդանիշ աւելի արժէքաւոր է ու նպաստաւոր, սրբացնենք ու պաշտենք զայն, իսկ եթէ կը կարծենք, թէ մեր ազգային անմիաբանութեան «հիւանդութիւնը» կրնայ բուժել ... սկսինք հոնկէ:

Վստահաբար, Ապրիլ 24-էն շատ աւելի մեծ օգուտներ կարելի է քաղել, քան մինչեւ հիմա եղածը. հարկ է միայն մօտենալ անոր տրամաբանական մտքով:

Նախ որոշենք մեր նպատակները:

Ապրիլ 24-ը զօրաւոր «գործիք» մըն է, եւ եթէ գիտնանք կամ գտնենք զայն գործածելու կերպը, անկասկած, որ կրնանք օգտուիլ այդ «գործիքէն»:

«Արձագանգ» (Տորոնտո), 1972 թ. 3-րդ համար

2. Հ.Ե.Դ. «Ս. ՋԱՒԱՐԵԱՆ» ՈՒԽՏԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ստորեւ կը ներկայացնենք Հ. Ե. Դաշնակցութեան «Սիմոն Ջաւարեան» Ուխտի 10-ամեակի հանդիսութեան բանախօս ընկ. Սիմոն Հասըրճեանի ճառէն հատուածներ:

... 17 հոգիներով սկսող Ուխտը աճեցաւ՝ անմիջապէս իր շուրջ հաւաքելով գաղութիս երիտասարդութեան, ազգայնական չափանիշով ու տեսանկիւնէն դիտուած, լաւագոյնները: Այսինքն՝ սովորական երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնց համար Ապրիլ 24-ի առիթով փողոցի մը անկիւնը երկու թղթիկ ցրուելը՝ կանատացի ժողովուրդին առջեւ մերկացնելու գործուած անարդարութիւն մը աւելի կարեւոր էր, քան թէ երկու տարտամ խօսքերը՝ արտասանուած այս կամ այն հայկական բեմէն, Օթթաուայի մէջ ցոյց մը՝ աւելի իմաստալից ու դրական, քան թէ «Վալէնթայն»ի օրուան տօնակատարութիւն մը: Երիտասարդներ, որոնց համար պարահանդէսներ ու դաշտագնացութիւններ կազմակերպելը նպատակներ չեն, այլ՝ պարզապէս միջոցներ՝ գոյացնելու եւ ապահովելու նիւթական կարիքը «Արձագանգ»ի նման հրատարակութիւններու:

Երեւակայել գաղութ մը առանց երիտասարդութեան եւ կամ երիտասարդական առողջ կազմակերպութեան ... Արդէն երեւակայելու ճիգին անգամ պէտք չկայ, բաւական է դիտել չորսդին՝ ասդին ու անդին ինկած մնացորդները գաղութներու: Խօսուն են բոլորը, նախ կը չքանայ երիտասարդութիւնը, եւ ապա կը սկսի վայրէջքը: Տակաւին ոչ մէկ անձ չէ կրցած մատնանշել գաղութ մը, որուն երիտասարդութեան առողջութեան շրջանին սկսէր անոր անկումը:

Յստակ է: Երիտասարդութեամբ եւ միմիայն երիտասարդութեամբ պայմանաւորուած է մեր հայկական գաղութներու գոյատեւումը, անով միայն ապահովուած անոր կենսունակութիւնը: Եւ երբ երիտասարդութիւն կ'ըսենք, նկատի ունինք երիտասարդութեան այն խաւը միայն, որ որոշ պատասխանատուութիւններ ստանձնելու կարողութեամբ՝ զանոնք թարմացնելու, արժեւորելու եւ գործնականացնելու ընդունակութիւն ցոյց տուած է:

Այս նոյն մտածումը արդէն անմիջապէս խորհրդածել կու տայ: Պիտի կրնա՞յ այս գաղութը ստեղծել միջոցները՝ պատրաստելու երիտասարդներու այն նոր սերունդը, որ պիտի խտացնէ շարքերը Արեւելքի մէջ դաստիարակուած երիտասարդութեան կողքին ու ապա փոխարինէ զայն: Հեռատես նայուածք մը, արագ քննութիւն մը գաղութին գործունէութեան ու գործելակերպին, եւ դիւրին է հասնիլ ու յանգիլ անհաճոյ հետեւութիւններու եւ համոզումներու:

Երեւոյթը հանդուրժելի չկրնար ըլլալ երիտասարդութեան մը համար, որ քաղաքականացած ազգային

աշխատանք կ'ուզէ տեսնել, որուն համար զօրաւոր գաղութ մը միակ երաշխիքն է:

Չենք ուզեր թերագնահատել որեւէ կազմակերպութեան մը աշխատանքը, չենք անգիտանար նաեւ այն անհամար զոհողութիւնները՝ տարուած այս կամ այն գործին համար: Մի միայն կ'ուզենք շեշտել, ԿԱՐԿՏԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՑԵՐ ՉԵՆ ՀԱՐԹՈՒԻՐ:

Դարձեալ քննական ակնարկ մը՝ գաղութին գործունէութեան վրայ: Թէեւ ճոխ, բայց հասած է գագաթնակէտին: Արդէն կարգ մը ձեռնարկներ յաջողցնելու համար կը տուժեն ուրիշները: Աւելի կենսունակ գործունէութիւն ձեռնարկելը անհնարին կը թուի այլեւս՝ միշտ պայմանաւորուած զանոնք կազմակերպողներու սահմանափակ կարելիութիւններով: Աւելին, անհրաժեշտն ու էականը կարելի է միայն յաջողցնել՝ գործելակերպի եւ գործունէութեան հիմնական փոփոխութիւններով, միացեալ կարելիութիւններով՝ նիւթական, ֆիզիքական եւ բարոյական: Արդէն նոր հորիզոններ կարելի կ'ըլլայ տեսնել, որոնք զանազան կազմակերպութիւններու տեսողութեան ծիրէն անդին են տակաւին:

ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՈՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԱԿԱՒԻՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՄՆԱԼ ՄԻՄԻԱՅՆ ԲԱՌԵՐ՝ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ, ՈՒ ԿԸ ԼՍՈՒԻՆ ՆՈՅՆ ՀԱՆԿԵՐԳՆԵՐԸ: Բառերը կ'աղաւաղուին, ու անոնց իմաստները կը փոխակերպուին: ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՁՈՒԼՈՒՄԻ ԵՒ ԱՆԿՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՅԵՏԱՁԳՈՒՄ, ԻՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ՄԻՋՈՑԻ ՓՈԽԱՐԷՆ, ՑՈՅՑԵՐԸ ԿԸ ԴԱՌՆԱՆ ՆՊԱՏԱԿ: Առանց քաղաքականացումի, հայապահպանումը միմիայն ՀԱՄԱՅՆՔԱՊԱՀՊԱՆՈՒՄ Է եւ ոչ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄ, ու, հետեւաբար, դատապարտուած ձախողութեան: Իսկ քաղաքականացման գաղափարի ծափահարողները տակաւին Կ'ՈՒԶԵՆ ԱՆԳԻՏԱՆԱԼ, ՈՐ ԴՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՄՇԱ-

ԿԵԼ ՄԻՄԻԱՅՆ ԶՕՐԱՒՈՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷ ՆԵՐՍ, զոր ձեռք ձգելու համար, նորակազմ ու սահմանափակ կարելիութիւններով շրջաններու մէջ առնուազն, միակ ձեւը գործակցութիւնն ու համադրուած աշխատանքն են:

Մարմիններ կը պնդեն տեսակէտներու վրայ: ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԿԸ ՏԱՆԻՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԷՋ, ԻՍԿ ԳԱՂՈՒԹԸ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ ՄԻՇՏ ՈՒ ԿԸ ՏՈՒԺԷ:

Կը գիտակցինք փոփոխութիւններու կարիքին, կը զգանք գործելակերպերու սխալականութեան եւ կ'ընդվզինք: Նորահաս սերունդը կը զգայ վաղուան ներկայացուցած դժուարութիւնները եւ կը գիտակցի այսօրուան կարեւորութեան: Աւելի լրջամիտ եւ լայնախոհ, աւելի իրատես եւ նուազ զգացական ըլլալը ոչ միայն չ'ընդվզեցներ, այլեւ կրնայ տանիլ փոխարինող մօտեցումներու եւ համոզումներու, նորակերպ աշխատաձեւի եւ գործելակերպի ու համոզուած աշխատելու, զանոնք իրականացած տեսնելու:

Այս գաղափարները հսկայական պարտադրանքներ կը զետեղեն այսօրուան ու վաղուան երիտասարդութեան ուսերուն: ՊԷՏՔ Է ՈՒՆԵՆԱՆՔ ՔԱՋՈՒԹԻՒՆԸ՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՆԵՐԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՆԵՐՈՒ ՓԱՆՋՈՒՆԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՃԱՆՉՆԱԼ ԱՆՈՆՑ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ, ՈՒՆԵՆԱԼ ԽԻԶԱԽՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՎԶԵԼՈՒ ԱՆՈՆՑ ԴԷՄ ԵՒ, ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԸ, ՈՒՆԵՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԱԴՐԵԼՈՒ, ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ԵՒ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՐԶՈՒԱԾ ՆՈՐ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Թորոնթոյի «Ս. Զաւարեան» Ուխտը կ'ամբողջացնէ այս պայմանները եւ կը հրաւիրէ երիտասարդութիւնը՝ սկսելու գործօն եւ դրական աշխատանքի:

Մինչ ոմանք բաւականացած ու գոհացած ըլլալ կը թուին մեր ներկայ պայմաններով, մինչ շատեր գինաթափ կ'ըլլան մօտիկ ապագայի հեռանկարով, «Ս. Զաւարեան» Ուխտը, առանց մոռնալու իր գերագոյն նպատակները, կը գիտակցի, թէ դրական քաղաքական աշխատանքներ պայմանաւորուած են զօրաւոր գաղութներով: Կը հաւատայ նաեւ, որ Թորոնթոյի նման փոքր գաղութներ կրնան զօրանալ միմիայն գաղութի մասնիկներու բացարձակ գործակցութեամբ: Մեր Ուխտը, իր կարողութիւններուն վրայ ինքնավստահ, նախորդներու փորձառութենէն օգտուելով, անոնց սխալներէն սորվելով եւ անոնցմէ աւելի քիչ սխալներ գործելու ճիգով, հաստատակամ կը նետուի ասպարէզ:

Կեցցէ՛ն հայութիւնն ու անոր վեհ գաղափարները:

Կեցցէ՛ն երիտասարդութիւնը եւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը, եւ կեցցէ՛ թորոնթահայութիւնը:

«Արձագանգ» (Տորոնտո), 1974 թ. 3-րդ համար

3. ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ստորեւ կը հրատարակենք Հ. Ե. Դ.-ի «Ս. Զաւարեան» Ուխտի վարչութեան անդամներէն ընկ. Սիմոն Հասըրճեանի բանախօսութենէն հատուածներ, զոր կարդաց Մայիս 28-ի նուիրուած խնճոյք-հանդիսութեան, որ տեղի ունեցաւ մայիս 24-ի գիշերը, «Օնթարիօ Սայէնս Սէնդըրի» սրահներէն մէկուն մէջ:

1918 մայիսի օրերուն, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի ու Սարտարապատի ռազմադաշտերուն վրայ ու կիրճերուն մէջ, պատահեցան մեր պատմութեան, մանաւանդ՝ մեր ներկայ պատմութեան ամէնէն սրտապնդիչ դէպքերը:

Հայկական գունդերու արիւնը ու ժողովուրդին միակամ հաւատքը փրկեցին հայ ժողովուրդը ստոյգ ու վերջնական բնաջնջումէ եւ մեր ազգային գոյութեան փրկութենէն ալ անդին անցնելով, դարերու ստրկութենէն ետք, հայ ժողովուրդին վերադարձուցին իր ազատութիւնը, անկախութիւնը եւ ամէնէն կարեւորը՝ իր ազգային արժանապատուութիւնը:

Տակաւին քանի մը շաբաթ առաջ ազգովին հաւաքուած էինք հանդիսութեան մը, ցոյցի մը՝ Ապրիլ 24-ի առիթով, անկէ առաջ արդէն տօնակատարած էինք Փետրուարեան ապստամբութիւնը, Վարդանանցը...

Հայ ժողովուրդի պատմութիւնը ոչ միայն լեցուն, այլեւ խճողուած է ազգային չափանիշով տօնակատարութեան եւ կամ յիշատակութեան արժանի դրուագներով: Ակնարկ մը այդ դէպքերուն վրայ, եւ անմիջապէս պիտի հաստատենք, թէ մեր պատմութիւնը եղած է պայքարի պատմութիւն մը: Անոր քարքարուտ ու փշոտ էջերուն մէջ շատ քիչ անգամներ կը հանդիպինք թուականներու, դէպքերու, որոնք փառապսակը կազմած են մեր ժողովուրդի ազատ ապրելու եւ ինքնավար դառնալու կամքին:

Մեծ յաղթանակներ շեփորող թուականներ չենք ունեցած, իսկ եթէ ունեցած ենք, շատ քիչ գոյատեւած են անոնք:

Մեր նպատակներուն, մեր ազգային ձգտումներուն հասնող ժողովուրդ չենք եղած:

Բայց եղած ենք նպատակին համար պայքարող ժողովուրդ, մեր հաւաքական իտէալներու համար մարտնչող ժողովուրդ մը:

Մայիս 28-ին կը տօնակատարենք այդ հազուագիւտ յաղթանակի օրերէն մէկը. մեր մօտաւորապէս վեց հարիւր տարուան անդուլ ու յարաճուն ազգային գոյատեւման ի խնդիր պայքարէն ետք մեր պատմութեան ամէնէն օրհասական ու ճակատագրական օրերը ծնան ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան 57-րդ տարեդարձը:

Մայիսեան դէպքերը, անշուշտ, որպէս յաղթանակի օրեր կը փայփայեն բոլորի ազգային հպարտութիւնը, կը յուզեն ու կը յուսապնդեն մեր ազգային զգացումները, բայց որպէս անկիւնադարձ դրուագ, իր իւրայատուկ պատմական հետեւանքներով անոր կարեւորութիւնը պիտի ըլլայ այդ դէպքերուն ունեցած անմիջական ազդեցութեան մէջ, որոնք տարրականօրէն փոխեցին մեր քաղաքական ու գաղափարաբանական հասկացողութիւնները:

Աւելի պարզացնելով, պէտք է ընդունիլ, որ անկախութեան համար անժամանակ ծնունդ էր Հայաստանի Հանրապետութիւնը: Ո՛չ առարկայական պայմաններով եւ ո՛չ ալ ենթակայական գիտակցութեամբ նախապատրաստուած: Հայ ժողովուրդը ստրկութեան շրջանէ մը ետք երկար ու յամառ ազատամարտ էր մղած Հայաստանի ազատութեան համար Թուրքիոյ մէջ եւ միշտ ազատութիւն ըսելով՝ հասկցած էր բարենորոգումներ կամ ինքնավարութիւն Օսմանեան կայսրութեան ընդհանուր յարկին տակ: Հայ ժողովուրդի մտքէն իսկ չէր անցած Հայաստան ստեղծել Ռուսաստանի սահմաններուն մէջ, եւ հիմա Հայաստանի Հանրապետութիւնը ծնունդ առած էր Արարատեան դաշտերուն մէջ ռուսական տիրապետութեան տակ գտնուող հողերու վրայ եւ այն ալ՝ աներեւակայելիօրէն անհնարին պայմաններու տակ: Ուրեմն զարմանալի չէր հայ մտքին շփոթի մատնուած կացութիւնը, որ կը դժուարանար ըմբռնելու քաղաքական նոր դիրքաւորում որդեգրելու պէտքին:

Մայիս 28-ով սկսող սեփական Հայրենիքի, սեփական Հողի, առանձին կառավարութեան գաղափարներն ընդմիշտ հայ ժողովուրդը ձերբազատեցին ազատութիւն բառին՝ բարենորոգումներով ու ինքնավարութեամբ սահմանափակուած նշանակութիւններէն ու հայ միտքն ու մտայնութիւնը վարժեցուցին ազատ, անկախ, միացեալ գաղափարներուն: Անկէ ետք հայը զբաղուեցաւ հայկական հողերով, իր սեփական հողերու դատով, ու ազատութեան այս նոր սահմանումները եղան Հայրենիքի հայութեան մտահոգութիւնն ու մտասեւեռումը, իսկ սփիւռքահայութեան գոյատեւման ազդակը:

Այժմ թէեւ արիւնով գնուած ազատութիւնն ու անկախութիւնը կորսնցուցած ենք, ու կը հրճուինք ամէն անգամ, երբ մտածենք, թէ հոն մեր հողերու փոքրիկ մէկ մասին վրայ կայ ու կը մնայ Հայաստան կոչուած երկիր մը՝ կորիզը եւ հիմնաքարը ապագայ մեր երազներուն, Մայիս 28-ով մարմնաւորուած մեր նոր մտայնութեամբ նոր երազներու, ամբողջական Հայաստանի գաղափարին:

Կայ ու կը մնայ նաեւ Սփիւռքը՝ որպէս արթուն պահակը Արեւմտեան Հայաստանի բռնագրաւուած հողերու վերստացման գաղափարին:

Հայկական ներկայ Սփիւռքը կազմուեցաւ Հանրապետութեան հիմնադրութենէն անմիջապէս առաջ: Հաւաքականութիւն մը հայ գաղթական բեկորներու, զոհերու եւ յուղարկաւորներու՝ զրկուած գոյատեւելու ամենատարրական միջոցներէն: Առանց նոյնիսկ ունենալու հոգեկան յենակ մը՝ կազմաւորելու իր կեանքը

ու անոր շուրջ ստեղծելու իր հաւաքական պայքարը: Մայիս 28-ը եւ Հայկական Հանրապետութիւնը եկան սփիւռքահայութեան տալու այդ հոգեկան յենակը:

Եւ եթէ կ'ապրինք արտասահմանի մէջ, հեռու Հայրենիքէն, եթէ կը շնչենք այս օտար մթնոլորտներուն մէջ եւ կը պայքարինք ամբողջական Հայաստանի մը իրականացման համար, եթէ Հայկական Դատ կը հետապնդենք եւ մեր հողերը կը պոռանք, ասոնք բոլորը կ'ընենք, որովհետեւ կը սիրենք կառչած մնալ անկախութեան եւ ազատութեան գաղափարին:

Սփիւռքի մէջ ամէն ժամ կ'ենթարկուինք անհնարին դժուարութիւններու, դէմ յանդիման կու գանք ահագին յուսալքումներու, որոնց դէմ գոյատեւման մեր պայքարը օրըստօրէ կը սաստկանայ եւ մեր գոյատեւման ամէնէն կարեւոր ազդակը կը դառնայ մեր ներկայ Հայաստանը, որ անհերքելի, ուղղակի հետեւանքն է Մայիս 28-ին:

Օրինակները պարզ են: Տակաւին քանի մը շաբաթներ առաջ, երբ տեղւոյս թերթերէն մէկը մեզ կոչեց անհայրենիք ազգ մը, կը յիշենք՝ որքան վրդովուած նամակներ տեղացուցինք: Որքան յուսալքիչ պիտի ըլլար պարագան, եթէ, առանց Մայիս 28-ի եւ անով պայմանադրուած ներկայ Հայաստանին, ստիպուէինք Սփիւռքի մէջ իրապէս վերածուիլ անհայրենիք ցեղի մը՝ դատապարտուած ժամանակաւորութեան:

Ներկայ երիտասարդութիւնը, առանց ապրելու այդ օրհասական օրերու հայութեան յոյսերը, մտքերը, հոգիներն ու ֆիզիքական քայքայիչ պայմանները, միայն հիացում ունի հանդէպ այն արիւնին, ոգիին, ժողովուրդին ու կազմակերպութեան, որ այդ բոլորը դարձուցին իրականութիւն: Ու այդ պատահարներու հետեւանքներով զինուած ու զօրացած, անհուն հաւատքով, չի կրնար պատրաստ չըլլալ դիմագրաւելու նոր օրերու նոր զոհողութիւնները:

Դասեր ունինք քաղելիք այդ դէպքերէն՝ ամրապնդելու համար մեր հաւատքը ու աւելի ուժգին պայքարելու մեր ազգային ինքնուրոյն դիմագիծը խաթարող տեսանելի ու անտեսանելի բոլոր արգելքներուն դէմ: ■

«Արձագանգ» (Տորոնտո), 1975 թ. 4-5-րդ համար

Երբ կը խօսինք արժէքներու մասին

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Հարց տանք, թէ որո՞նք են մեր արժէքները, որոնք մեր մնայուն մտասեւեռումին առարկան են, պէ՛տք է ըլլան:

Առաջին գիծի վրայ կ՚ուզեմ դնել ինքնաճանաչումը, այլ խօսքով՝ մեր ինքնութեան գիտակցութիւնը, որ ունի իր բազում շերտերը, սկսելով մայրենիի տիրապետումէն (առանց անտեսելու այլ լեզուներու, միջազգային թէ տարածքային լեզուներու հմտութիւնը), անցնելով մեր մշակոյթի ճանաչումէն, մեր պատմութեան ու հայրենիքի տեղավայրի ծանօթութենէն (առանց մոռնալու մեր լայնատարած Սփիւռքի իրականութիւնը): Եւ այս ինքնաճանաչումը՝ առանց սնապարծութեան:

Երկրորդ գիծի վրայ՝ մարդկային իրաւանց անկաշկանդ վայելումը: Այդ իրաւունքները կ՚ընդգրկեն ուսումը, ըլլայ հիմնական, ըլլայ մասնագիտական, որակաւո՛ր ուսումը, նոյնպէս որակեալ առողջապահութեան ապահովումը՝ անվճար ու բոլորին մատչելի: Կ՚ընդգրկեն նաեւ ապահով երդիք մը ունենալու իրաւունքը՝ հանգստաւէտ կեցութեան մը ի խնդիր: Մարդկային իրաւանց մաս կը կազմեն նաեւ ընկերային այն ծառայութիւնները, որ պէտք է նոյնպէս ձրի՛ տրամադրուին անկարներուն, տկարամիտներուն կամ այլ դժուարութիւններ ունեցող անհատներուն:

Երրորդ գիծի վրայ կը տեսնեմ աշխատանքի կազմակերպումը, սկսելով անոր հայթայթումէն՝ պետական թէ ոչ-պետական միջոցներով, անհատական թէ հաւաքական կարողութիւններու լաւագոյն գործածութեամբ, պաշտօններու ըստ արժանւոյն բաշխումով, կաշառակերութեան ու ձրիակերութեան մերժումով՝ բացառելով նաեւ ուրիշի քրտինքով հարստանալու յանցագործութիւնը, գործադրելով հաւասար վարձատրութեան սկզբունքը այրերու եւ կիներու միջեւ եւ նոյն աշխատանքը նոյն վարձատրութեամբ գնահատելու սկզբունքը՝ անկախ անհատին համոզումներէն: Չանտեսելով նաեւ արդար վարձատրութիւնը ըստ գործի կարեւորութեան՝ ոմանք չստորադասելով ուրիշներուն, օրինակ՝ ուսուցիչները բժիշկներուն:

Չորրորդ գիծի վրայ կու գայ ազատութեան խնդիրը, խղճի թէ խօսքի, համախմբման թէ գործադուլի կամ դասադուլի եւ այլն: Առանց այս ազատութիւններուն՝ զանցառելով փոխադարձ ատելավառութիւնը ու անքաղաքակիրթ մօտեցումը, ինչպէ՞ս կարելի է ժողովրդավարութեան ձգտիլ:

Հինգերորդ գիծի վրայ կը դրուի քաղաքացիական գիտակցութեան մշակումը՝ ընդգրկելով իւրաքանչիւր անհատի պատրաստութիւնն ու պատրաստակամութիւնը մասնակցելու հայրենական կամ սփիւռքեան որեւէ համայնքի բարօրութեան, մշակութային ժառանգութեան, բնութեան ու բնական հարստութիւններու պահպանման թէ սահմաններու պաշտպանութեան:

Այս հինգ գիծերը նկատի չառնենք առաջնահերթութեան կարգով: Անոնք զուգահեռ գիծեր են, զիրար ամբողջացնո՛ղ գիծեր: Նկատի առնենք, սակայն, որ անոնց կ՚առնչուին նաեւ որոշ նախադրեալներ կամ նախապայմաններ, առանց որոնց դժուար, նոյնիսկ անհնար կ՚ըլլայ վերոնշեալ արժէքներու արժեւորումը:

Այսպէս, օրինակ, հաւաքականութիւնը պիտի գիտնայ տէր կանգնիլ իր ներուժին՝ դպրոցական գրասեղաններէն սկսեալ՝ որոնելու իր տաղանդները, քաջալերու տաղանդաւորները, պիտի գիտնայ արժէք ընծայել իր մշակոյթին ու կրթութեան, իր կրօնքէն աւանդ ստացած բարոյական ըմբռնումներուն, գիտակցի մարմնամարզի կարեւորութեան ու խրախուսէ ախոյեանները, զարկ տայ գիտութեան եւ մասնագիտական մօտեցումին, – այս բոլորը որպէս յենասիւները հասարակութեան զարգացման ու յառաջդիմութեան:

Հաւաքականութիւնը պիտի գիտակցի մանաւանդ, որ ազգային գոյութեան ու գոյատեւման հետապնդումը, այսինքն մեր Դատը ունի համահայկակա՛ն առում, միացեա՛լ ճիգերով յառաջ կը տարուի: Իսկ յաջողութեան համար կենսական է ձեռք ձգել նաեւ գործակցութիւնը միջազգային բոլոր ուժերուն, ինչպէս նաեւ վայելել համագործակցութիւնը տարածաշրջանի երկիրներուն, դրացիներուն՝ իրաւունքներու փոխադարձ յարգումով եւ մեկնելով հաւասարէ հաւասարի եւ ոչ թէ տիրողի ու ենթակայի եւ յաղթողի ու պարտեալի հոգեվիճակներէն:

Կրկնութեան ի գին կը թուեմ բոլոր այս դրոյթներն ու մօտեցումները, որովհետեւ համոզուած եմ, որ անոնք մաս պէտք է կազմեն մեր կուսակցութեան, եւ որեւէ ազգային կուսակցութեան օրակարգին, իրենց պատշաճ բանաձեւումը գտնեն անոր ծրագրին մէջ եւ տեւական առարկան հանդիսանան անոր քարոզչական ու դաստիարակչական աշխատանքներուն:

Բարութեամբ, վայրագութեամբ թէ՞ մասամբ նորին...

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Իմ իրատես ընթերցող՝

ամանորի առիթով յաճախ մտորումներ կ'ունենանք: Իմ համեստ կարողականութեամբ (հիմնուած կեանքի այն փորձառութիւններու եւ փորձութիւններու վրայ, որոնք ոչ միայն դրոշմուած են յիշողութեանս մէջ այլեւ հետք ձգած՝ կեանքիս վրայ), պիտի փորձեմ նժարի վրայ դնել անցեալն ու ներկան, եզրահանգումներն ու ապագան վստահելով ձեր բանիմաց ու խելամիտ դատողութեան...

Որովհետեւ կրնամ սխալիլ, յաճախ խուսափած եմ եւ այսօր ալ կը խուսափիմ կարծիք յայտնելէ, ըլլայ ազգային թէ առհասարակ միջազգային քաղաքական հարցերու շուրջ: Կրնամ սխալիլ, որովհետեւ չեմ հետեւիր եւ չեմ վստահիր լրատուամիջոցներու հաղորդած տեղեկութիւններուն...: Կասկածելի կը գտնեմ նոյնիսկ այն բոլոր տեսակի լուրերը, որոնք թէեւ ճշմարտանման կը հնչեն, սակայն ճշմարիտ ըլլալու եւ համոզելու բաւարար ապացոյցներ չեն պարունակեր իրենց մէջ...: Սկսած եմ լսածներուս չհաւատալ... մինչեւ այն պարագային որ չիրագործուին ու շօշափելի իրականութիւն չդառնան անոնք: Ըլլան ծանօթներս թէ ընկերներս ընդհանրապէս կողմնորոշուած կ'ըլլան կամ «Աջ» կամ «Ձախ» եւ կամ ալ «Աջ»ի եւ «Ձախ»ի միջեւ կը տուայտին, իսկ ե՛ս լսածներուս հանդէպ վերապահութիւններ ունիմ, որոնք արդիւնքն են կէս դարեայ ականատեսի փորձառութեանս, որու ընթացքին ոչ միայն կրած եմ բազում ու բազմատեսակ խժդժութիւններու հետեւանքները, այլ նաեւ՝ ցմրուր ապրած՝ լիբանանեան քաղաքացիական պատերազմի տագնապն ու անդոհանքը... ինչպէս Լիբանանահայ իմ ողջ սերունդը: Նոյնիսկ անգամ մը եղբօրս՝ Պետիկի եւ այլ քանի մը ընկերներու հետ առեւանգուեցանք Տահր էլ Պայտարի, «Սոհա»յի բարձունքներուն վրայ, ուր մեր կեանքը մազէ կախեալ էր եւ բախտով միայն փրկուեցանք: Այլ առիթով մըն ալ երբ Հրաչ Տասնապետեանի եւ Նշան Փալանճեան Ճեմարանի այլ պաշտօնեաներու հետ սահմանը (Խութութ էլ Թամաս) կը կտրէինք, Արեւմտեան Պէյրութ մտնելու համար, մեր «վէն»ին վրայ կրակ բացուեցաւ ու ես ձախ աչքս կորսնցուցի... առ յաւէտ: Նմանօրինակ փորձութիւնները մեր առօրեային մաս կազմող սովորական երեւոյթներ էին այդ օրերուն: Շատեր մօտիկ հարազատներու մահը տեսան իսկ ուրիշներ՝ նոյնիսկ իրենց կեանքը տուին: Մարդկային մտածուած դաժանութիւնը իր բնազդային վայրագութեամբ կը գերազանցէր գիշատիչ ու գիշակեր անասուններն անգամ...: Խաղաղութեան կոչերը ու զինադադարները պարզապէս առիթներ էին նախապատրաստուելու յաջորդ աւելի վայրագ կռիւներու...: Շատ տարբեր է երբ պատմութեան մէջ եղած խժդժութիւններու եւ անմարդկային վայրագութիւններու մասին կը կարդաս կամ կը լսես, եւ բոլորովին ուրիշ ազդեցութիւն կը գործեն վրադ, երբ աչքովդ կը տեսնես այս բոլորը եւ կամ մանաւանդ երբ մորթիդ վրայ կը զգաս զանոնք...:

Սակայն այս բոլորէն վեր, շատ աւելի վատ ազդեցութիւն գործեց ոչ միայն իմ՝ այլ առհասարակ լիբանանցիներուն վրայ, նորընտիր նախագահ՝ Պէշիր Ժէմայելի քստմնելի սպանութիւնը: Անոր Լիբանանի նախագահ ընտրուելէն ճիշդ երեք շաբաթ ետք, իր երեսունէ աւելի ամենահաւատարիմ գործընկերներուն հետ միասին, բոլորին սպանեցին ականահարելով այն ակումբը, ուր հաւաքուած էին ժողովի: Պէշիրը իր որդեգրած հայրենասիրական քաղաքական առողջ կեցուածքին հետեւանքով, սիրուած ու գնահատուած էր Լիբանանի բոլոր իրերամերժ քաղաքական հոսանքներու ու յարանուանութիւններու կողմէ: Իր միակ «յանցանքը» այս էր: Երբ տանջահար եղած ժողովուրդը երկար տարիներու պատերազմներէն յոգնած, ու բառացիօրէն հոգեպէս լլկուած, մեծ յոյսեր կը կապէր ղեկավարի մը հետ, յանկարծ կ'ոչնչացնէին զինք ու իր գործընկերները, ի դերեւ հանելով լիբանանցիներու վերջին «Յոյս»ն անգամ: Յուսախաբութիւնը մեծ էր եւ յուսահատութիւնը սահմոկեցուցիչ, յատկապէս անոր համար, որ ըստ ժողովրդական «եզրակացութեան», կոտորածը կազմակերպողներու առաջին կասկածեալներէն մէկը իր հարազատ եղբայրն էր, Էմին Ժէմայելը, որը յաջորդեց իրեն, ու թէեւ խոստացաւ շարունակել անոր քաղաքական ուղղութիւնը, սակայն յետագային հակառակ ուղղութեամբ գործեց...: Ո՞վքեր կամ ինչո՞ւ սպաննեցին Պէշիրին: Այս կամ

նմանօրինակ բազում ու բազմատեսակ հարցեր, ցարդ անպատասխան կը մնան...: Այս դէպքը տեղի կ'ունենար երկրի մը մէջ, որ թէեւ փոքր ու տկար, սակայն կարծէք թէ գործնապէս կը շարունակէ միջազգային քաղաքականութեան կիզակէտն ու «փորձադաշտը» ըլլալ: Մինչեւ հիմա իր երկրի քաղաքացիական պատերազմի մէջ ապրած լիբանանցին ճշմարտութեան հաղորդ չէ...:

Եւ այսպէս,

Լիբանանեան փորձառութիւններն ու փորձութիւնները, այնքան վատ տպաւորութիւն ձգած էին վրաս, որ ես որոշեցի հրաժարիլ քաղաքականութենէ եւ կեանքս արժեւորել ու իմաստաւորել մշակոյթով:

Սակայն, ի հեճուկս իմ հապճեպ բայց վճռական որոշումին, այս անգամ կեանքի յետագայ ընթացքը ցոյց տուաւ, որ կարելի չէ ձերբազատուիլ քաղաքականութենէն, որովհետեւ իր դիւանագիտական յայտնի եւ անյայտ լծակներով ու ծալքերով ամենուրեք եւ ամէն տեղ է... «Ամենազօր Քաղաքականութիւնը»: Իսկ ես կամայ ակամայ եկայ այն եզրակացութեան, որ եթէ կ'ուզենք միջազգային գետնի վրայ մրցունակ դառնալ եւ նուաճումներ ձեռք բերել, հարկաւոր է Հայ մշակոյթը քաղաքականացնել եւ քաղաքականութիւնը մշակոյթականացնել... մշակոյթ բառի ամենալայն տարողութեամբ, իր մէջ ներառնելով տնտեսութիւնը, գիտութիւնը, կրթութիւնն ու մասամբ նորին...:

Սակայն, այս բոլորը կարելի է իրականացնել, մարդասիրական խելամիտ քաղաքականութեան ընձեռած խաղաղ պայմաններու տակ, եւ որոշ մակարդակ ունեցող ժողովուրդներու մէջ... միայն: Իսկ պատմութեան համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանները նախ՝ պարտադրուած կը թուին ըլլալ ուժով, աւելի ճիշդը բռնատիրութեամբ (ոչ թէ փոխադարձ հասկացողութեան վրայ հիմնուած) եւ ապա յարմարաւէտ առիթներ եղած են պատերազմի պատրաստուելու: Կարծես թէ մարդ կ'ապրի կամ պատերազմի եւ կամ ալ լաւագոյն պարագային պատերազմի պատրաստուելու ընթացքի մէջ: Փաստօրէն մարդկութիւնը այսօր եւս ահազանգային վիճակի մէջ է, եւ տեւական պատերազմական մթնոլորտի մէջ կը գտնուինք մենք բոլորս... ըլլայ Հայրենիքի թէ Սփիւռքի տարածքին: Մերօրեայ գերզարգացած Արհեստական բանականութիւնն իսկ, իր ընդհանուրին մէջ չ'երաշխաւորեր աշխարհի խաղաղութիւնը, եւ ոչ ալ կը պայքարի այդ ուղղութեամբ: Այլ իր ներուժը ի սպաս կը դնէ գերարդիական զէնքեր արտադրելու, եւ միաժամանակ այդ զէնքերը վաճառելու համար, իր ընձեռած լայն քարոզչութեամբ պետութիւնները կը մղուին նախապատրաստուելու պատերազմներու... եւ ոչ թէ խաղաղութեան: Լաւագոյն պարագային Արհեստական բանականութիւնը կ'օգտագործուի տնտեսութեան մէջ, որ իր հերթին եւս ուղղակիօրէն կ'առնչուի պատերազմի հետ:

Այնուամենայնիւ սակայն, իմ բանիմաց ու լաւատես ընթերցող գոյապայքարը կը շարունակուի...

Խառնուածքով ես ոչ քաղաքական մարդ ըլլալու ատակ եմ, եւ ոչ ալ քաղաքականութեամբ զբաղուելու

Հերկելեան գերդաստանը,
լուսանկարուած՝ 1956-ի Յունուար մէկին

յաւակնութիւն ունիմ. եւ սակայն տարերայնօրէն իմ մէջ կազմաւորուած են համոզումներ, որոնց ճշմարտացիութիւնը հաստատելու համար, թէեւ շօշափելի ապացոյցներ չունիմ, սակայն առնուազն մտածել կու տան թէ ինչո՞ւ պատերազմները կը շարունակուին: Ինչո՞ւ մարդկային իրաւունքները կ'ոտնահարուին, ինչո՞ւ Մարդու մարդկայնական ուսմունքներն ու վարդապետութիւնները անգործնական են ու սնանկ... գործնապէս: Ինչու Արհեստական բանականութիւնը ի սպաս չի դրուիր յանուն խաղաղութեան ու յանուն բարօր կեանքի:

Եւ կամ առհասարակ ինչո՞ւ նոյնինքն այդ կրթուած ու գեր-զարգացած գլխագիր Մարդը, տակաւին կը մնայ անասնական բնազդներով զինուած ընչաքաղց ու վայրագ արարած մը: Վերջապէս ինչո՞ւ Բարին միշտ տկար է իսկ Չարը՝ զօրաւոր. եւ կամ ինչո՞ւ Մարդ երբ տկար է բարի է ու հեզ եւ այդ նոյն բարի ու հեզ մարդը երբ զօրանայ յանկարծ կը չարանայ ու կը դառնայ գազան ու լկտի...: Այո, ինչո՞ւ **Իրաւունքը Զօրաւորինն է** եւ ոչ **Արդարին**: Եւ վերջապէս ինչո՞ւ «**Աստուածները Ուժեղներուն կը սիրեն»,** ինչպէս մեծն Հոմերոս կը «գուժէր» Քրիստոսէ հինգ դարեր առաջ:

Իմ կիրթ, վեհանձն ու ազնիւ ընթերցող՝

Նախ, նկատի առ որ հիմնականին մէջ խօսքը Մեծն քաղաքականութեան կը վերաբերի, եւ ոչ թէ առհասարակ կեանքի բոլոր երեսներուն: Եւ ապա, ստորեւ արձանագրելէ ետք համոզումներուս կարեւորները, եզրակացութիւնը կը վերապահեմ արդարամիտ դատողութեանդ:

Ա. Կը թուի թէ գոյութիւն ունին մէկէ աւելի մեծապետական «խորհրդաւոր» ուժեր, որոնք յաւակնութիւն

ունին մէկ կողմէ միջազգային տնտեսական աղբիւրները իրենց իշխանութեան տակ առնելու, եւ միւս կողմէ առհասարակ աշխարհը կառավարելու... համաձայն իրենց ներքին ու արտաքին պահանջներուն:

Բ. Այն բոլոր անտրամաբանական ու անհեթեթ երեւոյթներն ու գործողութիւնները, որոնք տեղի կ'ունենան բացայայտօրէն մեր աչքի առաջ, այդ բոլորին տակը գոյութիւն ունին տրամաբանական պատճառներ, որոնք հասու չեն մեզի... «հասարակ մահկանացուներուս»...:

Գ. Մարդը կառավարելու Մաքիավելիի սահմանած տեսութիւնները, քննադատուած, բռնադատուած ու մերժուած են բոլորին կողմէ... աներկբայօրէն, սակայն ոչ միայն լռելեայն կ'ընդունուին մեծապետական ու «խորհրդաւոր» ուժերու կողմէ, այլ նաեւ՝ կը գործադրուին... բացայայտօրէն:

Դ. Քաղաքականութեան ու դիւանագիտութեան համար, բոլոր վարդապետութիւններն ու արդարութեան եւ ազատութեան վրայ հիմնուած՝ խաղաղասիրական ու գեղեցիկ բոլոր գաղափարախօսութիւնները (կրօնք, ժողովրդավարութիւն, ընկերվարութիւն, համայնավարութիւն, մարդկային իրաւունքներ, կնոջական իրաւունք, համաշխարհայնացում) գործնականին մէջ կը վերածուին *Միջոցի*, փոխան՝ *Նպատակի*: ...Ինչո՞ւ...

Ե. Անցնող դարուն, այս ենթադրեալ մեծապետական ու «խորհրդաւոր» ուժերը, իրենց հակակշռին տակ կը պահէին Արհեստական բանականութիւնը, ու կ'օգտագործէին զայն ի հաշիւ իրենց նպատակներուն, մարդկութիւնը փրկելու եւ աշխարհին խաղաղութիւն պարգեւելու խոստումով: Իսկ վերջին տասնամեակներուն, այդ նոյն մեծապետական ու «խորհրդաւոր» ուժերը, սկսած են իրենք կախեալ ըլլալ Արհեստական բանականութեան գործօններէն, որոնք իրենց հերթին յաւակնութիւն ունին մարդկութիւնը փրկելու եւ աշխարհին խաղաղութիւն պարգեւելու... սակայն այս անգամ Ուժով եւ ոչ թէ գեղեցիկ ու մարդասիրական գաղափարներով:

Զ. Այն բոլոր ժողովուրդները, որոնք խուսափած են եւ կամ կը խուսափին պատերազմէէ, դատապարտուած են մոռացման եւ ենթակայ եղած են ոչնչացման:.. Ինչո՞ւ...

Է. Մարդկային հազարամեայ պատմութիւնը ցոյց կու տայ, Չարը կարելի չէ զսպել Բարութեամբ: Այլ վայրագութիւնը կարելի է վերացնել միայն ու միայն աւելի զօրաւոր վայրագութեամբ... դժբախտաբար: Ինչո՞ւ...: Դեռեւս Քրիստոսէ քսանմէկ դար առաջ Շումերական բեւեռագիր արձանագրութիւններէն կ'իմանանք, որ Ուռ-Նամմու արքան կը յայտարարէր որ «*Պիտի ոչնչացնեմ Ապերութիւնը, Վայրագութիւնն ու Արդարութեան ճիչերը*»: Խօսքը «*Արդարութեան ճիչեր*»ն *իսկ* բռնութեամբ ոչնչացնելու մասին է եւ ոչ թէ բարութեամբ: Իսկ Քրիստոսէ 1754 տարիներ առաջ, Բաբելոնի տիրակալը՝ Աքքատացի Համուրապին ժայռի վրայ ամրագրած է ամենադաժան ու ամենավայրագ, սակայն պատմականօրէն ընդունուած ու գործնապէս ամենատարածուած «օրէնքը»՝ «***Աչքի դէմ աչք, Ոսկորի դէմ ոսկոր»,*** այս սկզբունքը Վերածուած է «**Աչքի դէմ Աչք, Ատամի դէմ Ատամ**»ի եւ մինչեւ օրս ի զօրու կը մնայ յատկապէս պատերազմներու ընթացքին:

Պէյրութը քաղաքացիական պատերազմի օրերուն

Այնուամենայնիւ սակայն առանց վայրագութեան, բարութեամբ միայն մղուող պայքարները եւս երբեմն կրցած են յաջողիլ ու նոյնիսկ փոխել կեանքի ընթացքը: Քրիստոնէութիւնն իր բարի ու խիստ մարդկային գաղափարախօսութեամբ, «բանիւ եւ գործով», կրցաւ տապալել Հռոմի նման հսկայ կայսրութիւն մը...: Մահադմա Կանտին առանց վայրագութեան կրցաւ Հնդկաստանէն դուրս մղել կայսերապաշտ անգլիացիները: Անոնց հետեւորդներէն Նիլսըն Մանտելան կամ Լութէր Մարթէն Քինկը եւս առանց վայրագութեան պայքարողներ էին, սակայն թէեւ առաջինը քսանեօթ տարի բանտարկուեցաւ իսկ երկրորդը սպաննուեցաւ անոնց պայքարը ապարդիւն չանցաւ: Մեր խօսքը կը վերաբերի մերօրեայ ընչաքաղց ու աթոռամոլ մարդուն որ պատասխանատուն է քաղաքական եւ պատերազմական անցուդարձերուն:

Ը. Կ'ըսեն թէ, քաղաքականութեան մէջ Բարեկամ եւ Թշնամի չկայ... տեսականօրէն, մինչդեռ թէ թշնամի կայ եւ թէ բարեկամ... գործնականօրէն: Երբ զօրաւոր ես բարեկամներդ շատ են, իսկ երբ տկարանաս կը սկսին պակսիլ անոնք ու փոխարէնը թշնամիներդ կ'աւելնան: Փաստօրէն տկարները տեղ չեն ունեցած եւ այսօր ալ տեղ չունին քաղաքական որոշումներու մէջ, եւ իրենց ճակատագիրը կախեալ է զօրաւորներու քմայքէն:

Թ. Եթէ պիտի ուզենք Մարդուն ձերբազատել իր անասնական բնազդներէն ու ընչաքաղց մոլուցքներէն, ապա միայն մշակոյթով (եւ այն ալ բարձրորակ արուեստով) կարելի է Մարդուն դաստիարակել ու Մարդկայնացնել:

Ժ. Ի վերջոյ, մարդկութեան ողջ պատմութիւնը կը վկայէ, որ ոչ միայն Խաղաղութիւնը կը պարտադրուի ուժով, այլ նաեւ՝ ***«Միայն ուժով կայ մարդու եւ առհասարակ աշխարհի փրկութիւն»...*** հարկադրաբար եւ... դժբախտաբար:

Իմ բանիմաց ու արդարասէր ընթերցող՝

երբ այս տեսութիւններս ու համոզումներս ընկերներուս կը փոխանցեմ, անոնք ինձմէ իրեղէն ապա-

ցոյցներ կը պահանջեն... արդարօրէն: Եւ որովհետեւ ներկայացուցած ապացոյցներս ամբողջական չեն, յաւակնութիւն չունիմ պնդելու թէ ըսածներս անպայման ճիշդ են եւ վաւերական: Այս պատճառով ալ՝ թէեւ կրնաս վերոնշեալ իմ համոզումները համարել «միամիտի մը արկածները», սակայն չես կրնար անտեսել զանոնք, որովհետեւ նախ մարդկային բնազդն ու նախազգացումներն իրենց դերն ու նշանակութիւնը ունին կեանքին մէջ. եւ յետոյ անոնք կը բխին քու հետդ անկեղծօրէն *խօսոյթ*-ի բռնուած մէկէ մը, որ իրապէս մտահոգ է, ըլլայ Միջին Արեւելքի, Կովկասի թէ առհասարակ մարդկութեան ճակատագրով, ուրկէ կախեալ է նաեւ մեր՝ երկուքիս ազգային ինքնութեան պահպանումը, գոյատեւումն ու սեփական հայրենիքի ապագան...:

Եթէ թերթատենք Հայկական բարձրաւանդակի պատմութիւնը, պիտի նշմարենք որ հազարամեակներու ընթացքին, Պրոնզէ դարէն ետք, անվերջանալի կռիւներու մէջ եղած է տարածաշրջանը: Ու թէեւ մենք կրցած ենք խուսանաւել պատմութեան քառուղիներու բաւիղներէն ներս ու հասնիլ մինչեւ մեր օրերը, սակայն ժամանակի ընթացքին, մեր հայրենիքը երթալով փոքրացած է ու բնակչութեան թուաքանակը՝ պակսած: Այսօր տեղ մը հասած ենք, որ յաւելեալ փոքրանալու եւ նսեմանալու ոչ տեղ ունինք այլեւս եւ ոչ ալ... իրաւունք: Վերջին տարիներուն, տարբեր ձեւերով ու տարողութեամբ բազմիցս փորձեցինք, հայրենիքի փոքրացման եւ ազգի նսեմացման գործընթացքը կասեցնել եւ պատմութեան անիւը շրջել ի նպաստ մեզ, սակայն չկրցանք յաջողիլ: Եւ եթէ այսպէս շարունակուի, «Շակրէնի» կաշիին նման Հայաստանը պիտի վերջանայ ու ջնջուի քարտէսին վրայէն, ու լաւագոյն պարագային կը վերածուինք անմշակոյթ թափառական ու լքուած ցեղի մը: Ի վերջոյ, ինչո՞ւ չենք կրնար միասնական ըլլալ, ինչո՞ւ չենք կրնար ստեղծել մեր ազգային սեփական ուժը: Ինչո՞ւ մեր սեփական հայրենիքի մէջ իսկ հնարաւորութիւն չունինք մեր ազգային մշակոյթը զարգացնելու եւ տարածելու, երբ Խորհրդային բռնատիրութեան տակ իսկ կրնայինք ընել: Ինչո՞ւ մենք մեր ձեռքով կ'ընենք այն... ներսէն ինչ որ թշնամին կը ցանկայ բայց չի կրնար ընել... դուրսէն: Ինչո՞ւ ստիպուած ենք բանակցութեան սեղան նստելու մեր թշնամիներու հետ, իսկ մեր թշնամիները ստիպուած չեն: Գուցէ ատա՞ւ չենք մենք մեր անկախ հայրենիքը ունենալու եւ կամ արդեօք դատապարտուած ենք անընդհատ, օտարներուն յաւելեալ արիւն եւ ստեղծագործ միտք տրամադրելու, եւ կամովին ցիրուցան ըլլալու մեծապետական երկիրներու տիրապետութիւններու տակ: Եթէ այո, ապա ու՞րկէ կու գայ այս ամոլ ստրկամտութիւնն ու, ինքնավստահութենէ զուրկ «*ինքնավստահութիւնը*»...:

Հազարամեակներու ընթացքին մեր թշնամիները չեն կրցած մեզ ոչնչացնել, հիմա ալ պիտի չկրնան...: Չեն կրնար, որովհետեւ մենք շատ աւելի մեծ, վտանգաւոր ու ճակատագրական ժամանակաշրջաններ կրցած ենք շրջանցել եւ պահպանել մեր ազգային ինքնութիւնն ու շարունակել գոյատեւումը: Ճիշդ է որ ունինք ազգային լեզու, կրօնք, պատմութիւն, բաձրորակ մշակոյթ ու հողատարածք, սակայն մենք միակը չենք որ ունեցած ենք այդ բոլորը: Բազմաթիւ ազգեր ու պետութիւններ, որոնք օժտուած էին նմանօրինակ աւելի բարձր ու աւելի զօրաւոր յատկութիւններով այսօր անցած են.... պատմութեան: Այսօր, շնորհիւ Արհեստական բանականութեան եւ մանաւանդ DNA-գիտին, գիտնականներու եւ պատմաբաններու, եւ այլ գիտնականներու մեծամասնութիւնը եկած են այն եզրակացութեան, որ Հայերը միակ ազգն են որ կը շարունակեն իրենց մէջ կրել **Հայկական բարձրաւանդակին վրայ ապրած հնագոյն ցեղերու ժառանգականութիւնը (DNA), բնիկ են եւ ո՛չ դուրսէն եկուոր:**

Այո՛, Հայը հնագոյն ազգը ըլլալով հանդերձ, ինչպէ՞ս դիմացած է պատմութեան գլաններու տակ ու չէ ճզմուած: Թերթատեցէք մեր պատմութիւնը ու պիտի զարմանաք...:

Որովհետեւ,

Հայը ունի այնպիսի ***ոգեղէն ազգային ներուժ*** մը, զոր կարելի չէ զայն խլել եւ նոյնի՛սկ հպիլ անոր: Ատիկա մեր լուսեղէն Էութիւնն իսկ է, մեր գլխագիր **«Է»**-ն, մեր ազգային ինքնութիւնը, մեր **Աստուածը** եթէ կ'ուզէք, ինչպէս կը վկայեն հայ մեծագոյն հոգեւորականներէն շատեր, սկսեալ Սուրբ Գրիգոր Նարեկացիէն մինչեւ Վազգէն Վեհափառը...:

Այո՛, մեր մեծ ու փոքր բոլոր թշնամիները, գրաւը իրենց ուժային առաւելութիւններուն վրայ կ'դնեն. որովհետեւ ինչպէս որ մեր հնագոյն հզօր ու աշխարհակալ հարեւանները չկան այսօր, վաղը միւս օր իրենք եւս ոչնչանալու վտանգի ենթակայ պիտի ըլլան աւելի քան՝ մենք...:

Այո՛, ես յուսախափ եմ բայց յուսահատ չեմ:

Իսկ այն բոլոր առաջնորդներն ու ղեկավարները (ըլլան անոնք ազգային, տարածաշրջանային թէ միջազգային), որոնք սուտ կը խօսին, կը խաբեն ու կը դրժեն իրենց խոստումները, չեն կրնար յարգանքի արժանանալ նոյն ինքն ժողովուրդին կողմէ... օրը կու գայ անոնք եւս հաշուետուութեան կը կանչուին նոյն այդ ժողովուրդին կողմէ... Դուք կրնաք ըսել Աստուծոյ դատաստանին դիմաց...:

Իսկ ելքը.... «**Ինչ**» ընելը որոշելէ առաջ եւ յետոյ, Ելքը՝ ***«Ինչ»ը «Ինչպէս»*** իրագործելուն մէջն է, զոր հարկաւոր է քննարկել հանգամանօրէն, մասնագիտական լրջութեամբ ու համամարդկային տարողութեամբ...:

ՀՅԴ-Ն ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՅՔԱՐԻ ԴՐՈՇԸ ՎԱՅՐ ԴՆԵԼՈՒ

ՀՅԴ Բյուրոյի անդամ, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Բագրատունու խոսքը՝ ՀՅԴ 135-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ

«Հայ Յեղափոխական Դաշնակցության 135-ամյակը համախմբել է մեզ այսօր՝ մեր պատմության վերջին ժամանակահատվածի դառնագույն ու դաժան պայմաններում: Հսկայական խռովքի մեջ են մեր ժողովրդի այն զավակները, որոնք հայի սիրտ են կրում, ապրած են ու մասնակիցը դարձած հաղթանակների կերտման, իսկ այսօր ականատես են Արցախի հանձնումից հետո Հայաստանի մեջ Ադրբեջանի և Թուրքիայի կամքին ենթակա զիջումներին, Սփյուռքը պառակտող քայլերին, հայրենասիրության ծաղրանքին և արժեքային համակարգի ազգային ըմբռնողության խորտակման:

Ընթացքը դադար չունի և հավերժ շարունակվում է՝ թիրախավորելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ նրա սպասավորների նկատմամբ դավադրական քայլերով, ժողովրդահաճո հերյուրանքներով, որի նպատակն է փշրել հայ ժողովրդի ու հայրենիքի գոյատևումն ապահոված ողնաշարն ամբողջապես, հարվածել Հայ Եկեղեցին, ճանաչել Արցախն իբրև ադրբեջանական տարածք, մոռացության տալ Բաքվում գերեվարված հերոսներին, հարցականի վերածել Հայոց ցեղասպանությունն ու դրա հետևանքները, թուրք-ադրբեջանական տանդեմին ազատ միջանցք շնորհել Հայաստանի մեջ, փոխել ազգային խորհրդանիշները, Հայոց պատմությունը վերածել լոկ Հայաստանի պատմության, ջլատել հայրենիքի կապվածության, հայրենասիրության արմատները...

Ահա, թե ուր ենք հասել բոլորս հավաքաբար: Վտանգված է հայրենիքը, վտանգված է պետությունը, վտանգված է Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր նվիրապետական աթոռներով, Էջմիածին, թե Անթիլիաս, Երուսաղեմ, թե Կոստանդնուպոլիս:

Վտանգված է ողջ հայությունը, ազգովին, Հայաստանի մեջ թե Թուրքիա և արտերկիր, այլևս անհանդուրժելի ձևով հատված են կարմիր գծերը...

Մենք կողմնակից ենք արժանապատիվ խաղաղության, ոչ թե՝ պարտադրված սին խոստումներով անհեռանկար խաղաղության, նորանոր զիջումների... Մենք ազգովի կանգնած ենք ջրբաժանի դիմաց, ոչ լինելության պայքարն է այսօր, կամ հանձնվել ու կամովին գիտակցաբար գնալ կործանման, կամ դրոշը բարձր պահել ու պայքարել:

Հայ Յեղափոխական Դաշնակցության 135-ամյա պատմությունը վկա, որ իբրև գաղափարական, քաղաքական ու կազմակերպչական մարտունակ ուժ, իր հայրենիքի, ժողովրդի ու հայ մարդու բովանդակ շահերի պաշտպանության և ծառայության նվիրված կուսակցություն չի կարող և իրավունքը չունի պայքարի դրոշը վայր դնելու: Պայքարը համընդհանուր է, ով որ քաջ է, ինչ կսպասե:

Կեցցե՛ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, կեցցե՛ հայրենիքի պաշտպանության համար նահատակ ծնող հայ ժողովուրդը, կեցցե՛ հայն ու Հայաստանը, յուրաքանչյուր հայ ու տուն հավերժական ամբողջական Հայաստանը»:

Երևան, 6-ը դեկտեմբերի 2025 թ.

Հանդիսավոր միջոցառում նվիրված ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան ուսանողական միության» հիմնադրման 35-ամյակին.
Երևան, 15-ը նոյեմբերի 2025 թ.

ԴՐՕՇԱԿ